

Հայաստանի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարություն

Հայաստանի պետական ազգարային համալսարան

Յուրի Մարմարյան  
Գլեն Շին  
Գերի Բրայերս  
Իննա Գալոյան

## ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ և ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊԱՀ 2007

ՀՏՊ 37.01  
ԳՄՊ 74.00  
Բ 816

**Բոլոնիայի գործընթացի նպատակները  
Որակ - միջազգային շարժունություն - ինքնավարություն -  
թափանցիկություն -հանրամասչեղություն հասարակության  
համար**

Բոլոնիայի գործընթաց՝ բարեփոխումներ և ռազմավարություն/  
Յու.Մարմարյան, Գ.Շին, Գ, Բրայերս, Ի.Գալոյան. – Եր.: ՀՊԱՀ, 2007  
**Հրապարակման  
Ժամկետը** 2007 թ. դեկտեմբեր

**Խնդիրը** Համալսարանի ուսումնական պլանները  
Բոլոնիայի գործընթացին համապատասխանեցնելու  
քաղաքականության և ընթացակարգերի մշակում, նյութերը  
նկարագրող մենագրության ստեղծում:

**Նպատակը** Նկարագրել Բոլոնիայի գործընթացի  
հիմնական նպատակները և ներկայացնել կրեդիտային  
համակարգի հինգ ոլորտների փոփոխմանն ուղղված  
ռազմավարությունը: Ինստիտուցիոնալ բարեփոխումները  
վավերացրելու, ճշգրտելու և գնահատելու համար մշակել  
տեսական հիմք և առաջարկել լավագույն փորձը:

Ուղեցույցը նախատեսված է ՀՀ կրթության և գիտության  
նախարարության և Հայաստանի բուհերի համար: Այն ընդգրկում է  
ընթացակարգեր և կրթության աստիճանի առաջին և երկրորդ  
փուլերի ծրագրերում ECTS չափանիշները կիրառելու  
ռազմավարություն:

ISBN 978-9939-50-014-0

## Բովանդակություն

Նախաբան	5
Բաժին I. Բոլոնիայի գործընթացի շրջանակները	7
Գլուխ 1. Ներածություն, համատեքստը և նպատակները	7
Գլուխ 2. Գործողությունների սկզբունքները Բոլոնիայից Լոնդոն	12
Բաժին II. Փոփոխությունների ռազմավարությունը	26
Գլուխ 3. Կազմակերպչական մոդելներ և համալսարանի կառուցվածքային փոփոխությունների ռազմավարություն	26
Գլուխ 4. Պրոֆեսրադախախոսական կազմի դերը ինստիտուցիոնալ փոփոխություններում	42
Գլուխ 5. Ուսանողների դերը ինստիտուցիոնալ փոփոխություններում	47
Բաժին 3. Փոփոխություն կատարելու ռազմավարություն	52
Գլուխ 6. Ուսուցման նոր մանկավարժության ընդունման ռազմավարություն	52
Գլուխ 7. Ուսանողների գնահատման մեթոդների և գնահատման համակարգի ընդունման ռազմավարություն	58
Գլուխ 8. Առարկայական ծրագրերի մշակման ռազմավարություն	67
Գլուխ 9. Ուսումնական պլանի և առարկաների մշակման ռազմավարություն	72
Գլուխ 10. Դիպլոմի միջուկների կառավարման համակարգի մշակման ռազմավարություն	88
Բաժին IV. Բոլոնիայի գործընթացի վավերագրումն ու գնահատումը	98
Գլուխ 11. Համալսարանի փորձի կողմնորոշիչ մեթոդ	98
Գլուխ 12. Մեթոդների և նյութերի գնահատում	103
Գլուխ 13. Դասախոսական կազմի և ինստիտուցիոնալ փոփոխությունների գնահատում	117
Օգտագործված գրականության ցանկ	134

1.	Կրեղիտային համակարգի կազմակերպման ընթացակարգը բարձրագույն ուսումնական հաստատություններում .....	148
2.	Բացատրական բառարան.....	179
3.	Դիպլոմի հավելված .....	193
4.	Պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավում և կարծիքների գնահատում .....	194
5.	Կրեղիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ.....	196
6.	Տեղեկատվական փաթեթ/առարկաների տեղեկագիր.....	200
7.	Ուսուցման պայմանագիր.....	204
8.	Ուսումնառության արդյունքներ .....	208
9.	Դիպլոմի միջուկ .....	210
10.	Դասընթացների գնահատման ձև .....	216
11.	Բոլոնիայի գրծընթացի մասնակից երկրներ.....	219

## Նախարան

Ներկա պայմաներում ուսանողները ապրում են արագ փոփոխվող միջավայրում: Նրանք մրցակցելու են խորը գիտելիքների վրա հիմնվող գլոբալ տնտեսությունում և աշխատաշուկայում: Էապես կարևորվում է այն հանգամանքը, որ համալսարանական կրթությունը պետք է ուսանողներին նախապատրաստի ապագա գործունության համար: Հաշվի առնելով՝ նոր՝ գլոբալ իրականությունը, համալսարանում ուսանողների դեպի այդ փոփոխությունները ձանաշելուն ուղղորդելը դառնում է հրատապ անհրաժեշտություն:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները լիովին գիտակցում և ընդունում են բարձր որակի կրթական ծրագրերի մշակման և իրականացման պատասխանատվությունը: Սա ենթադրում է ձկուն, ինքնավար հաստատությունների առկայություն: Հաստատություններ, որոնք ի վիճակի են մշակել իրենց եզակի առաքելությանն ու նպատակներին համահունչ ռազմավարություն և քաղաքականություն: Խելամիտ և ձիշտ գործելակերպով ինքնավար հաստատությունները կարող են մշակել ռամզավար ծրագրեր և արդյունավետ իրականացման քաղաքականություն, որոնք համահունչ են առաքելությանը և նպատակներին: Պետք է խորին համոզվածությամբ ընդունել, որ եկել է կրթական բարեփոխումներ իրականացնելու ժամանակաշրջանը:

ՀՊԱՀ-ն հետևողական և մեծ եռանդով աշխատում է Բոլոնիայի գործընթացն իրականացնելու ուղղությամբ, և մենք արդեն կարող ենք տեսնել որոշ արդյունքներ: Ուսանողների համար սա լավ նորություն է, քանզի Բոլոնիայի գործընթացը ստեղծում է ուսման ավելի բաց աշխարհ՝ մատչելիության, թափանցիկության, շարժունության և որակավորման ձանաշման ավելի մեծ հնարավորություններով:

Աշխատանքի փոփոխվող ոփթմում փոխանցվող հմտությունների զարգացումը պետք է լինի բոլոր կրթական ծրագրերի քաղաքուցիչ մասը: Գլոբալ տնտեսության

աշխատաշուկայում շատ կարևոր է զարգացնել ուսանողների՝ գիտելիքների արագ վերլուծության, համայրելու և կիրառելու ունակությունները, նորարարական մտածելակերպը և արդյունավետ թիմային աշխատանքը:

Նշանակալից նվաճումները մեծապես կախված են շահագրգիռ և համարձակ առաջնորդներից: Հարգանքներս եմ հղում հեղինակներին՝ գործընթացում ունեցած իրենց ներդրումների և մասնակցության համար: ԱՄՆ գյուղդեպարտամենտը աջակցել է բարեփոխումների նախաձեռնությանը մի շարք այլ կարևոր ծրագրերի հետ համատեղ: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Շոն Քարմողիին, Ֆրեդ Ջոնսոնին, Բլեյք Ստեֆլերին և մասնավորապես ծրագրի համակարգող պարոն Գլեն Շինին քաջալերանքի և աջակցության համար, Տեխասի համալսարանին՝ ցուցաբերած աջակցության և Զորջիայի համասարանին՝ գիտելիքները և փորձը փոխանցելու համար: Եվ վերջապես, Հայաստանի պետական ազգարային համալսարանի ողջ անձնակազմը կամովին ներգարավվել է այդ փոփոխություններում: Շնորհակալություն եմ հայտնում յուրաքանչյուրին, ով իր ներդրումն է կատարում այս աշխատանքում:

Միասին մենք կերտում ենք մեր ապագան:

Արշալուս Թարգերյան

Հայաստանի պետական ազգարային համալսարանի ռեկտոր

## **Բաժին I. Բոլոնիայի գործընթացի շրջանակները**

### **Գլուխ 1. Ներածություն, համատեքստ և նպատակներ**

Հստ Բուրկի (2005 թ.), «Ողջ աշխարհը կիրապուրվի եվրոպական բարձրագույն հաստատություններով իրենց կրթական աստիճանների պարզության շնորհիվ»:

Բոլոնիայի հոչակագիրը և դրան հաջորդող պաշտոնական այլ հոչակագրերը հայտնի են բարձրագույն կրթության շրջանակներում: Միջկառավարական այդ նախաձեռնությունը նպատակ ունի մինչև 2010 թվականը ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք և եվրոպական բարձրագույն կրթության համակարգը ներդնել ամբողջ աշխարհում:

Սկիզբը դրվեց 1999 թվականին, Բոլոնիայի համալսարանում կայացած հանդիպման ժամանակ, որտեղ 29 եվրոպական երկրներ ներկայացնող նախարարները ստորագրեցին հայտարարագիր, որում նշվեց այն ամենը, ինչ անհրաժեշտ է մինչև 2010 թվականը եվրոպական բարձրագույն կրթության տարածք ստեղծելու համար:

Ներկայումս 46 երկիր՝ ներառյալ Հայաստանը, ընդգրկված են ԵԲԿՏ-ում: Այդ պետությունների կրթության նախարարները հանդիպել են Պրահայում (2001 թ.), Բեռլինում (2003 թ.), Բերգենում (2005 թ.) և Լոնդոնում (2007 թ.) կայացած խորհրդաժողովների ընթացքում: Հաջորդ նախարարական խորհրդաժողովը տեղի է ունենալու 2009 թ. ապրիլի 28-29-ին, Լյուվենում և Լյուվայն-լա-Նյուվում:

Օրենսդրության համաձայն Հայաստանի բուհերը պարտավոր են փոփոխություններ կատարել ներկայիս կրթական համակարգում, ուսումնական պլաններում, ուսուցման և գնահատման մեթոդներում և վարչական կառավարման համակարգում, որպեսզի այն համապատասխանի Բոլոնիայի հոչակագրին և ԵՄ ապագայում ընդունվող հայտարարություններին:

Հոչակագրի հիմնական նպատակներն են՝

- Վերացնել Եվրոպայում ուսանողների շարժունությանը խոշընդոտող պատճառները
- Մեծացնել Եվրոպական բարձրագույն կրթության գրավչությունը

ամբողջ աշխարհում

- Սահմանել Եվրոպայում բարձրագույն կրթության համակարգի ընդհանուր կառուցվածք

- Կառուցվածքի հիմք ընդունել Բակալավրի և Մագիստրոսի կրթական աստիճանները

Բոլորնիայի 1999 թ. հոչակագրում ներկայացվել են հետևյալ վեց խումբ գործողությունները՝

- Պարզ և համեմատելի կրթական աստիճանների համակարգի ընդունում

- Երկու փուլերի վրա հիմնված համակարգի ընդունում

- Կրեդիտային համակարգի ստեղծում

- Շարժունության խթանում

- Որակի երաշխավորման հարցում համագործակցության խթանում

- Բարձրագույն կրթության ոլորտում եվրոպական չափանիշների ներդրման խրախուսում

Պրահայի հոչակագրում ներկայացվել են նաև հետևյալ երեք գործողությունները՝

- Հարատև ուսուցում

- Բարձրագույն ուսումնական հաստատություններ և ուսանողներ

- Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի համբեաց հետաքրքրության բարձրացում

### Գործընթացի նպատակները

Բուհում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի նպատակը այս ասպարեզում ՀՀ բուհերի համար միասնական կանոնակարգային և կազմակերպչական հենքի ձևավորումն է:

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն  
(Էջ 3, 2007)

Բեռլինի հոչակագրում ներկայացվել է գործողությունների մեկ այլ խումբ, որը վերաբերում է երրորդ կրթական աստիճանի փուլին:

- Դաշնաժամկեր դրկտորի կրթական աստիճանի համար և ԵԲԿՏ-ի ու եվրոպական հետազոտությունների տարածքի համատեղ գործունեության ծավալում

Բերգենում կայացած զագաթաժողովի ընթացքում հայտարարվել են հետևյալ հինգ առաջնային խնդիրները՝

- Որակի երաշխավորման վերաբերյալ չափանիշների և ուղեցույցների մշակում

- Որակավորման համար ազգային շրջանակների մշակում
- Համատեղ կրթական աստիճանների, այդ թվում՝ դրկտորի աստիճանի, շնորհում և պաշտոնապես ճանաչում
- Քարձրագրույն կրթության բնագավառում ուսուցման ձկուն մեթոդների հաստատում՝ հաշվի առնելով ավանդական ընթացակարգերը

2007 թ. Լոնդոնում ընդունված հոչակագրով նախարարները կրկին հաստատել են իրենց հավատարմությունը հետևյալ նպատակներին՝

- Ուսանողներին դաստիարակել որպես ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացիներ
- Ուսանողներին պատրաստել իրենց ընտրած մասնագիտությամբ աշխատելու համար և խթանել նրանց անձնային զարգացումը,
- Ստեղծել և ամրապնդել խորը գիտելիքների ընդարձակ բազա
- Աջակցել հետազոտություններին և նորամուծություններին

### Կարգի խնդիրները

1. Կրեդիտային համակարգի համար սահմանել միասնական չափորոշիչներ /սահմանունմեր, նորմեր/՝ համահունչ ECTS համաեվրոպական կրեդիտային համակարգի պահանջներին, որոնք պետք է միասնական լինեն ՀՀ բուհական համակարգի համար:
2. Սահմանել կրեդիտային համակարգում կիրառվող առանձին գործառույթները, ընթացակարգերը և գործնթացները, դրանց

- բնութագրիչները և իրականացման հնարավոր /պրակտիկայում հաջող կիրառություն գտած/ լուծումները և մոտեցումները:
3. Տալ ավանդական կրթական համակարգից ուսուցման կրեդիտային համակարգին անցնելու հիմնադրույթները:
  4. Բուհերին տրամադրել ուղեցույցներ կրեդիտային համակարգով ուսուցման իրենց սեփական կարգերը մշակելու համար՝ ենելով առանձին Տալ ավանդական կրթական համակարգից ուսուցման կրեդիտային համակարգին անցնելու հիմնադրույթները:
  5. Բուհերին տրամադրել ուղեցույցներ կրեդիտային համակարգով ուսուցման իրենց սեփական կարգերը մշակելու համար՝ ենելով առանձին բուհում կրեդիտային համակարգի հիմնական գործառույթների կիրարման ամբողջականությունից:
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն (Եջ 3., 2007)

Հայաստանը ընդունել է Բոլոնիայի հոչակագիրը որպես հիմնական ֆաստաթույթ՝ կրթական փոփոխություններ կատարելու և ծրագրերի զարգացման հնարավորություններն ընդլայնելու նպատակով: Հայաստանի կառավարության, կրթության և գիտության նախարարության և Հայաստանի քարձրագույն ուսումնական հաստատությունների հինգ հիմնական խնդիրներն են՝

1. Եռաստիճան համակարգի ներդրումը
2. Կրեդիտմերի փոխանցման և կուտակման համակարգի ներդրումը
3. Դիպլոմի միջուկների և հավելվածների համակարգի կիրառումը
4. Դոկտորական ծրագրերի և հետազոտությունների միջև կապի ամրապնդումը
5. Ուսման որակի գնահատման ազգային գործակալության ստեղծումը, որը կարժանանա վստահության և կճանաչվի ամբողջ աշխարհում:

### **Ներածություն**

1. ՀՀ քարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգը ներդրվում է 2007/2008 ուստարվանից, կրթական կրեդիտների՝ որպես ուսումնական ծրագրերի պատադիր տարր ներմուծմամբ և ուսանողների ակադեմիական տեղեկագրերում դրանց պարտադիր նշումով:

- |   |
|---|
| <p>2. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ամբողջական /փոխանցման ու կուտակման/ կիրառումը պարտադիր է՝ սկսած 2010/2011 ուստարվանից:</p> <p>3. Կրեդիտների փոխանցման և կուտակման ազգային համակարգը որպես հիմք է ընդունում համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգը, որի հիմնական կանոնները գործում են նաև ազգային կրեդիտային համակարգում՝ գործառույթների և ընթացակարգերի իրականացման միասնական հենք և ուղեցույցներ տրամադրելով այն կիրարկող բուհերին:</p> <p>4. Ազգային մակարդակում կրեդիտային համակարգի իրականացման միասնականություն ապահովելու նպատակով ԿԳՆ-ն պարբերաբար նորացնում է համակարգը՝ ներառելով նոր սահմանումներ, նորմատիվներ, ուղեցույցներ և գործիքակազմ։ Այդ համատեքստում յուրաքանչյուր ԲՈՒՀ ինքնուրուն է իր կրթական ծրագրերում կրեդիտային համակարգը կիրարկման հարցերում։</p> <p>5. Սույն օրինակելի կարգի հիման վրա ԲՈՒՀի կողմից ստեղծված կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման կարգը հաստատվում է ԲՈՒՀ-ի գիտական խոհրդի կողմից։</p> |
|---|

ՀՀ կրթության և գիտության նախարարություն (Էջ

## **Ամփոփում**

Մի շաբթ պատճառներով համալսարաններում փոփոխությունների ներդրման ընթացքը չափազանց դանդաղ է, մինչդեռ մարդկությունը արդյունաբերական հեղափոխությունից անցել է գիտելիքների հեղափոխության։ Աշխարհում տեղի ունեցող նոր գլոբալ փոփոխություններն այլ պահանջներ են ներկայացնում կրթական համակարգին, ուստի համալսարաններն իրենց կրթական, հետազոտական և խորհրդատվական գործունեությունը պետք է համապատասխանեցնեն դրանց։

## **Գլուխ 2. Սկզբունքներից՝գործողություններ. Բոլոնիայից՝Լոնդոն**

**Որակ – միջազգային շարժունություն – ինքնավարություն –  
թափանցիկություն –հանրամատչելիություն**

Բոլոնիայի գործընթացը կրկին հաստատում է իր նպատակը՝ նպաստել եվրոպական բարձրագույն կրթության համակարգերի համաձայնեցվածության ու համեմատելիության՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով դրանց տարբերությունները։ Հակառակ լայն տարածված կարծիքի՝ Բոլոնիան չի առաջարկում չափանիշների «ուղեցույցի» ընդունում։ Բոլոնիան խթանում է հինգ իդեալ որպես չափանիշների և ուղեցույցների հիմք՝ որակ, միջազգային շարժունություն, ինքնավարություն, թափանցիկություն և հանրամատչելիություն։

### **Որակ**

Կրթության որակը դժվար է սահմանել, սակայն համեմատաբար հեշտ է բացահայտել։ Որակը չափվում է ուսանողների, շահառուների և հասարակության ցանկությամբ և բավարարվածությամբ։ Որակյալ կրթությունը բարձրացնում է ուսանողի գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի մակարդակը, որոնք անհրաժեշտ են այս փոփոխվող աշխարհում գործելու համար։ Որակյալ կրթությունը բարձրացնում է գործատուների վստահությունը, ինչպես նաև բարելավում է կրթության հասարակական արժեքը։ Լոնդոնի հոչակագրում (2007թ.) նշվում է, որ «ԵԲԿՏ-ում որակի երաշխավորման չափանիշներ և ուղեցույց» ձեռնարկի մշակումը հզոր խթան է հանդիսանում որակական փոփոխություններ կատարելու առումով։

Ուսման որակը գնահատվում է ներքին և արտաքին չափանիշներով։ Գործադրված ջանքերն ուղղված են որակ ապահովող վեց ոլորտների վրա։

- Ուսուցման ցանկալի արդյունքների սահմանում

- Առարկայական դասընթացների ընտրություն և ուսումնական պլանների մշակում
- Ուսման և դասավանդման գործընթացների կազմակերպում
- Ուսանողի առաջադիմության գնահատում
- Որակի ապահովման համակարգի ներդրում

#### **Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները**

- Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.
  - ուսումնական ծրագիրը բաղկացած է ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացներից, որոնց յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դասընթացների նախապայմաններով,
  - ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
  - ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
  - դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ կախված դասընթացի կայացման ժամանակացույցից և/կամ դասավառովի նախապատվորյանից,
  - ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:
- Կրեդիտների փոխանցման գործառույթը պահանջում է միայն ծրագրային վերափոխումներ, իսկ կրեդիտների կուտակման գործառույթը՝ նաև ուսման կազմակերպման գործընթացի համապատասխան վերակառուցում՝ պահանջվող ընթացակարգերի ապահովման նպատակով:
- 2007/2008 ուս.տ-ից կրեդիտային համակարգը ՀՀ բուհերի բակալավրի կրթական ծրագրերում կարող է ներդրվել միայն փոխանցման գործառույթի մասն ։/առանց 3-րդ կետի II մասի/, իսկ մագիստրանտի կրթական ծրագրերում՝ նաև կուտակման գործառույթով /առանց 4-րդ կուրսի V մասի/։
- Ուսուցման կրեդիտային համակարգին անցնող բուհերը պետք է իրականացնեն համապատասխան ծրագրային և կազմակերպական վերափոխումներ, որոնց մասշտաբները պայմանավորված են բուհում կրեդիտային համակարգի հիմնական գործառույթների ներդրման ամբողջականությունից։
- Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝  
ա/ կրեդիտների փոխանցում, ինչը ենթադրում է ուսումնական ծրագրի,

բոլոր բաղկացուցիչների աշխատածավալների կրեդիտների օգնությամբ կարևորում և այդ կրեդիտների փոխանցման հնարավորություն ե/կրեդիտների կուտակում, ինչը ուսանողին տախս է դասախոսի, դասընթացների և դրանց յուրացման կիսամյակների ընտրության, ինչպես նաև ուսումնառության ինտենսիվության կարգավորման հնարավորություն և ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գրքընթացի առկայություն:

6. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի /դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն/ աշխատածավալներն արտահպտված են ուսանողի լրիվ ուսումնական ծանրաբերությունն / լսարանային, արտասարանային և ինքուրույն աշխատանք/ արտահպտող ECTS կրեդիտներով,

- կրեդիտներով արտահպտված կրթական արդյունքների փոխադարձ ձանաշման և որոշակի թիվ կրեդիտների ծրագրից ծրագիր փոխանցման /տեղափոխման/ հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն /Էջ 9, 2007/

Որակի ներքին երաշխիքները պայմանավորված են տարբեր գործոններով, այդ թվում՝ ուսանողների առաջադիմության և ներգրավվածության, դասավանդման մեթոդների և գործընթացների, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքների կանոնավոր գնահատմամբ: Լոնդոնի հոչակագրում շեշտվել է ուսանողների նախկին կրթության ձանաշման անհրաժեշտությունը: Այն հաստատությունները, որոնք ունեն որակի գնահատման ներքին համակարգ, ավելի խնդնավար են: Քանի որ որակի առումով հիմնական պատասխանատվությունը կրում են համալսարանները, ուստի անմիջապես իրենք պետք է զարգացնեն որակի բարձրացման և գնահատման համակարգը:

Որակի արտաքին երաշխիքներն են գնահատումը ուսանողերի և շահառուների, ինչպես նաև հավատարմագրող անկախ կազմակերպությունների կողմից: Ուսանողերը պետք է ընդգրկվեն կառավարման և ուսումնական խորհուրդներում: Որպես լիարժեք անդամներ՝ ուսանողներն իրենց ուրույն դերն ունեն կրթական

քաղաքականության մշակման, վարչական աշխատողների և աշխատակազմի գնահատման, ֆինանսական կառավարման, ակադեմիական ընթացակարգերի, ուսումնական ծրագրերի և գիտական հետազոտությունների գործում: Տեղեկացված և ընդգրկված շահառուները որակը գնահատում են գործուն խորհրդատվական մարմինների ու հավասար ձայնի իրավունք ունեցող գործընկերներից կազմված վերստուգիչ հանձնաժողովների միջոցով: Կրթության և գիտության նախարարությունը ներկայում մշակում է որակի երաշխավորման, գնահատման և բարձրացման անկախ գործակալության ստեղծման նախագիծը:

Լավագույն փորձի սկզբունքները որակի արտաքին երաշխիքների գործընթացում ընդգրկում են՝

- Ինստիտուցիոնալ ինքնավարության հարգումը
- Ուսանողների և շահառուների ներգրավումը որակի արտաքին գնահատման գործընթացի վերաբերյալ որոշումներ ընդունելու մեջ
- Համալսարանում որակի ներքին գնահատման և բարձրացման գործընթացների փորձը և արդյունքները հաշվի առնելը:

## **Միջազգային շարժունություն**

Միջազգային շարժունությունը Հայաստանում հետապնդում է երկու առավել կարևոր նպատակ՝ թույլ տալ ուսանողներին զարգացնել բազմաբնույթ հմտությունները և բարելավել համալսարանների համագործակցույթան որակը ու բազմազանությունը: Շարժունությունը բարելավում է նաև կրթական գործընթացի որակը՝ ապահովելով նոր տեխնոլոգիաներ, դասավանդման և ուսուցման նոր մեթոդներ: Պլանավորումը, ժամկետների սահմանումը և ֆինանսները կարևորագույն գործոններ են: Ներդաշնակ կանոնները նույնպես խթանում և ընդլայնում են շարժունությունը: Անհրաժեշտ է մշակել ուսանողներին ֆինանսավորելու և շարժունությունն ապահովելու դրամաշնորհների քաղաքականություն: Էրամուս ուսանողական

ցանցը առաջարկում է համընդհանուր կանոններ, որոնք խթանում են շարժունությունը: Բոլոնիայի գործընթացն առաջարկում է ընտրության ձկուն համակարգ: Շարժունության մեջ ներգրավված են ուսանողները, դասախոսները, հետազոտողներն ու աշխատակազմը, և այն կարող է իրականացվել թե՝ հորիզոնական, և թե՝ ուղղահայաց տարրերակներով, որոնք հավասարապես կարևոր են: Հորիզոնական շարժունությունը կարևորում է փոխանակման ծրագրերին մասնակցող ուսանողների կամ դասախոսների կարձամական ուսուցման հնարավորությունը: Շարժունությունը նախատեսված է մեծ թվով ուսանողների և դասախոսների համար և չի շնորհում կրթական աստիճան: Ուղղահայաց շարժունությունը ուսանողները ընդգրկում է կրթական աստիճան շնորհող ուսումնական ծրագրերում, որն իրականացնում է երկու կամ ավելի բուհերում: Բոլոնիայի գործընթացի ձկունության շնորհիվ կրթական աստիճան ստանալու համար ուսանողները կարող են օգտվել մի շարք աղբյուրներից: Ուղղահայաց շարժունությունը ուսանողներին թույլ է տալիս ավարտել առաջին փուլը (բակալավրիատ) մեկ համալսարանում և երկրորդ փուլը (մագիստրատուրա) շարունակել մեկ այլ համալսարանում կամ երկրում: Հայատանի ուսանողների և դասախոսների մոտավորապես 10%-ը մասնակցում է ուսումնական շարժունության ծրագրերին, սակայն իրավաբանական և ծրագրային արգելքները խոչընդոտում են գործընթացին: Դրանցից են այլ համալսարանների կողմից ակադեմիական որակավորումների պաշտոնական ձանաշման, ֆինանսական միջոցների պակասը, մշակութային և լեզվի խնդիրները, ինչպես նաև տղաների պարտադիր զինվորական ծառայությունը: Ակադեմիական ծրագրերը կանոնակարգում են կրեդիտների քանակը, որոնք կարող են փոխանցվել մեկ կրթական աստիճանից մյուսը: Կրեդիտների և դիպլոմի հավելվածի ներդրումը դյուրին է դարձնելու շարժունությունը և միանման կրթական աստիճանների շնորհումը: Ուսանողների փոխանակումը համալսարանների միջև բարելավվում է երկկողմանի պայմանագրերի միջոցով, սակայն երեսն դրանք

շատ դժվար է լինում մշակել և պահպանել: Հայաստանը երկկողմանի պայմանագրեր է ստորագրել Չինաստանի, Չեխիայի, Ռուսաստանի, Ալբանիայի, Ուկրաինայի և Միացյալ Նահանգների համալսարանների հետ:

### **Ինքնավարություն**

Ներդնելով Բոլոնիայի սկզբունքները՝ համալսարանները դառնում են ավելի ինքնավար և անկախ՝ ուսումնական պլանի մշակման, պայմանագրերի կնքման, ուսման վարձավճարի չափի որոշման, դասավանդման նոր մեթոդների ներդրման, մասնագիտությունների ընտրության և ռազմավարական պլանավորման հարցերում: Համալսարանի կառավարման ոլորտում կատարվող փոփոխություններին մասնակցում են համալսարանի աշխատակազմը, ուսանողները, հիմնադիրները, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Համալսարանի խորհուրդները մշակում են քաղաքականությունը, հաստատում բյուջեն և անցկացնում ռեկտորի ընտրություններ: Հատուկ բաժանմունքները Բոլոնիայի գործընթացին համահունչ պատասխանատվություն են կրում դրա իրականացման համար: Համալսարանում անհրաժեշտ է ստեղծել գրանցումներով զրադարձ գրասենյակ, ինչպես նաև նոր փոփոխություններ կատարել դիպլոմի միջուկների և հավելվածների համակարգերում:

### **Թափանցիկություն**

Թափանցիկությունն անհրաժեշտ է վստահություն ներշնչելու և կայուն հարաբերություններ զարգացնելու համար: Որակավորումը պաշտոնապես ճանաչելու նախադրյալներից մեկը բարձր որակի ապահովումն է: Վճռորոշ նշանակություն ունեն վեց գործուներ, որոնք անհրաժեշտ են առավել մեծ թափանցիկության, համեմատելիության և կրթական աստիճանների ու ակադեմիական որակավորման ճանաչման գործում: Դրանք են կրեդիտի փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը, ուսուցման արոյունքները, ուսուցման պայմանագրերը,

տեղեկատվական փաթեթը և առարկաների տեղեկագիրը, դիպլոմի միջուկը և դիպլոմի հավելվածը:

### **Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ**

Հստ ECTS-ում սահմանված սկզբունքի, ուսումնական տարվա ընթացքում ստացիոնար բաժնում սովորող մեկ ուսանողի ծանրաբեռնավճությունը չափվում է 60 կրեդիտով: Հայաստանում մեկ ուսանողի հաշվով ուսումնական ծրագրով նախատեսված է տարեկան մոտավորապես 1800 ժամ ծանրաբեռնավճություն, իսկ ECTS-ի մեկ կրեդիտը համապատասխանում է մոտավորապես 30 աշխատանքային ժամին: ECTS-ում ուսանողի ծանրաբեռնավճություն ասելով հասկանում են այն ժամանակը, որը պահանջվում է պահանավորված ուսումնական գործունեությունը ծավալելու համար, այն է՝ դասախոսություններին, լաբորատոր-գործնական պարապմունքներին և սեմինարներին հաճախելը, ինքնուրույն և անհատական պարապմունքները, նախագծերի վրա աշխատանքը և ընսություններ հանձնելը:

ECTS կրեդիտները կիրառվում են ուսումնական ծրագրի բոլոր կրթական քաղաքրիչների նկատմամբ (մոդուլներ, դասընթացներ, բաշխվածություն, ուսումնա-արտադրական պրակտիկա, աշխատանք ատենախոսության վրա և այլն) և արտացոլում են աշխատանքի այն քանակությունը, որ պահանջում է յուրաքանչյուր քաղաքրիչ՝ կոնկրետ նպատակներին կամ արդյունքներին հասնելու համար՝ ի հարաբերակցություն աշխատանքի ամբողջ քանակության հետ, որն անհրաժեշտ է ուսումնառության լրիվ տարին հաջողությամբ ավարտելու համար: Կրեդիտները շնորհվում են միայն պահանջվող աշխատանքն ավարտելուց և ուսուցման արդյունքները պատշաճ գնահատելուց հետո:

Ուսանողի առաջադիմությունը կարելի է փաստագրել գնահատականների հայաստանյան համակարգի և համարժեք ECTS համակարգի հիման վրա: Գնահատականների ECTS սանդղակը ուսանողների առաջադիմությունը տեղեկարգում է

Վիճակագրական հիմունքներով: Հետևաբար, ուսանողի առաջադիմության վերաբերյալ վիճակագրական տվյալները նախապայման են՝ գնահատականների ECTS համակարգի ներդրման համար: Գնահատականները ուսանողներին տրվում են ստուգարքային կարգով, հետևյալ կերպ՝ A-B-C-D-E-FX-F: “A”-ն արտահայտում է դասընթացի միավորների ամենաբարձր 10%-ը, “B”-ն՝ հաջորդ 25%-ը, “C”-ն՝ հաջորդ 30%-ը, “D”-ն՝ հաջորդ 25%-ը, իսկ “E”-ն՝ ամենացածր 10%-ը: Զախողված ուսանողների ստացած FX և F գնահատականների միջև տարբերությունն այն է, որ FX-ը նշանակում է՝ անբավարար հանձնելու համար պահանջվում է որոշակի աշխատանք, իսկ F-ը նշանակում է՝ անբավարար հետազայում պահանջվում է զգալի աշխատանք: Դիպլոմի միջուկի մեջ անբավարար գնահատականների միջև այսպիսի տարբերակումը թողնվում է տվյալ համալսարանի հայեցողությանը:

### **Ուսուցման արդյունքները**

Ուսուցման արդյունքները ունակությունների այն ամբողջությունն է, որը ցույց է տալիս, թե ուսանողն ինչ կիմանա, ինչ կհասկանա և ինչ կիարողանա անել ուսուցման գործընթացի ավարտից հետո: Ուսուցման արդյունքների վերաբերյալ բազմաթիվ սահմանումներ կան, սակայն լավագույն ձևակերպումներից մեկը տրված է ESTC 2005 թ. ուղեցույցում. Ուսուցման արդյունքներն այն բանի սահմանումն են, թե ուսուցման գործընթացի ավարտից հետո սովորողից ինչ է ակնկալվում իմանալ, հասկանալ և կարողանալ ի ցույց դնել: Ուսուցման արդյունքները արդյունքների վրա հիմնված համակարգի մաս են կազմում: Դրանք բնութագրում են ուսանողի առաջադիմությունը՝ ձեռք բերած գիտելիքների, այդ գիտելիքները հասկանալու և կիրառելու ունակության, ինչպես նաև վերլուծելու, համադրելու և գնահատելու ունակության առումով:

Ուսուցման արդյունքների կիրառման երեք առաջնահերթ հիմնավորումներն են՝

- ուսումնական հաստատություններին, գործառուներին և հանրությանը հստակորեն տեղեկացնել, թե որակավորում հասկացությունը գործնականում ինչ է նշանակում,
- նկարագրել ոչ ավանդական կրթության, այդ թվում՝ հեռահար կրթության, էլեկտրոնային ուսուցման, աշխատանքի բազայի վրա ուսուցման և ստացիոնար ուսուցման մատչելիությունը,
- նպաստել սովորական ժամանակային սահմաններից դուրս ուսուցման կազմակերպմանը:

Ավանդաբար, առարկայական դասընթացների նկարագրությունը հիմնված է եղել ներդրումների համակարգի վրա, որը գերազանցապես դասախոսակենտրոն համակարգ է: Այս մոտեցումը շեշտադրում է այնպիսի ներդրումներ, ինչպիսիք են՝ դասընթացի նպատակներն ու խնդիրները, մատչելիության պահանջները, դասընթացի տևողությունը, դասավանդման և գնահատման մեթոդները: Այս տեղեկատվությունն իրավագոր է, և դրա մեծ մասը պետք է արտացոլվի դիպլոմի հավելվածում: Ուսուցման արդյունքները նախատեսված են ոչ թե առարկայական ծրագրերին փոխարինելու, այլ դրանք լրացնելու համար:

Ունակությունները նկարագրվում են որպես ուսումնակազման և գնահատման կողմնորոշչիչներ, բայց ոչ երբեք որպես հաստատուն ու անփոփոխ պայմաններ: Դրանք հնարավորություն են տալիս ուսումնական պլանը կազմելիս լինել ձկուն և ինքնուրույն: Միևնույն ժամանակ, դրանք ապահովում են ուսումնական պլանի նախանշած նպատակների նկարագրությունը՝ մեկ ընդհանուր լեզվանով: Ուսուցման արդյունքների օգտագործումը առավել մեծ ձկունության հնարավորություն է տալիս, քան կարող է լինել ավելի ավանդական ուսումնական ծրագրերի դեպքում, քանզի դրանք ցույց են տալիս, որ տարբեր ուղիները կարող են ի վերջո հանգեցնել համեմատելի արդյունքների. արդյունքներ, որոնք կարող են շատ ավելի դյուրիխն կերպով ճանաչվել որպես մեկ այլ ծրագրի մաս կամ որպես ծրագրի հաջորդ շրջափուլ մուտք գործելու հիմք: Ուսուցման արդյունքների օգտագործումը ամենափ չի նսեմացնում այլ հաստատությունների, ինչպես նաև կրթական

այլ մշակույթների ինքնավարությունը: Հետևաբար, այս մոտեցումը բազմազանության հնարավորություն է ստեղծում ոչ միայն համընդհանուր, եվրոպական, ազգային կամ ինստիտուցիոնալ ծիրում, այլ նաև մեկ ծրագրի համատեքստում: Այս հայեցակարգի մանրամասներին կարելի է ծանոթանալ <http://tuning.unideusto.org/tuningeu/index.php?option=content&task=view&id=173> կայքի միջոցով:

### **Ուսումնական պայմանագիր**

Ուսումնական պայմանագիրը ներառում է ուսումնական որևէ աստիճանի միտված կրնկը ծրագրի համար պահանջվող առարկաների ցանկը, այդ թվում՝ ECTS կրեդիտները, որոնք կշնորհվեն յուրաքանչյուր առարկայի համար: Այդ ցանկը պետք է համաձայնեցվի թե ուսանողի և թե տվյալ հաստատության պատասխանատու ուսումնական մարմնի հետ: Ուղղահայաց շարժունության դեպքում, նախքան ուսանողի մեկնումը, ուսումնական պայմանագիրը պետք է համաձայնեցվի ուսանողի և շահագրգիռ մեկ կամ ավելի հաստատությունների միջև և, փոփոխություններ կատարվելու դեպքում անմիջապես թարմացվի գործուղող համալսարանի կողմից:

### **Տեղեկատվական փաթեթ և առարկայական տեղեկագիր**

Ըստ Բոլոնիայի գործընթացի՝ առաջարկվում է երկու լեզվով (կամ միայն անգլերեն, եթե ծրագիրը դասավանդվում է անգլերենով) Ինտերնետում պարբերաբար տեղեկադրել տեղեկատվական փաթեթ և առարկայական տեղեկագիր՝ կամ հրատարակել տպագիր օրինակը՝ մեկ կամ երկու գրքովկով: Տեղեկատվական փաթեթն ու առարկայական տեղեկագիրը պետք է բովանդակեն տեղեկատվություն համալսարանի և դրա պրոֆեսորադասախոսական կազմի, կրթական աստիճանների համակարգի, բակալավրիատի, մագիստրատուրայի և հետքուհական աստիճանների կառուցվածքի, առարկաների բնութագրի և ծածկագրի վերաբերյալ, ինչպես նաև՝

տեղեկատվություն ընդունելության ընթացակարգի և հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի մասին:

### **Դիպլոմի միջուկ**

Դիպլոմի միջուկը ուսանողի առաջադիմության վերաբերյալ պաշտոնական վկայություն է, որը ցույց է տալիս ուսումնասիրած առարկաների ցանկը՝ ըստ համարների և վերնագրերի, վաստակած ECTS կրեդիտները, վաստակած հայաստանյան կրեդիտները և նշանակված ECTS գնահատականները: Դիպլոմի միջուկը ուղղահայաց շարժունության ծրագրում ընդգրկված ուսանողին տրվում է գրծուղող համալսարանի կողմից՝ նախքան ուսանողի մեկնումը, իսկ ուսումնառության ավարտից հետո, վերադարձող ուսանողներին՝ հյուրընկալող համալսարանի կողմից:

### **Դիպլոմի հավելված**

Դիպլոմի հավելվածը տրվում է համալսարանի կողմից և լրացնից տեղեկություններ է պարունակում տվյալ կրթական աստիճանի մասին: Դիպլոմի հավելվածի նպատակներն են՝ բարելավել որակավորման միջազգային թափանցիկությունն ու դյուրընթեռնելիությունը և նպաստել ակադեմիչական որակավորման ձանաշմանը: Դիպլոմի հավելվածը պետք է անվճար տրամադրվի բոլոր շրջանավարտներին՝ եվրոպական որևէ հիմնական լեզվով: Դիպլոմի հավելվածը դիպլոմը կամ դիպլոմի միջուկը փոխարինող հիմնական փաստաթուղթ չէ, ինչպես նաև ավտոմատ կերպով չի երաշխավորում հյուրընկալող համալսարանի կողմից որակավորման ձանաշում:

Դիպլոմի հավելվածը տեղեկություններ է պարունակում ուսուցման բնույթի, մակարդակի, համատեքստի և կարգավիճակի, ինչպես նաև՝ ազգային կրթական համակարգի, մասնագիտական պահանջների և (կամ) իրավունքների, մատչելիությանը ներկայացվող պահանջների և առաջադիմության հնարավորությունների վերաբերյալ:

Ուսանողի առաջադիմությունը ներկայացնելու առումով դիպլոմի միջուկն ու դիպլոմի հավելվածը հիմնովին տարբերվում են: Դիպլոմի միջուկը արտացոլում է ուսանողի առաջադիմության ամբողջական պատկերը, ներառյալ ընդունվելու տարին, ընտրած մասնագիտությունը, հետազգում ուսումնասիրած առարկաները, բոլոր քննաշրջանները, կրկնած քննաշրջանները, ուսումնական մեկնարանությունները և գերազանցությամբ ավարտելու վերաբերյալ տեղեկատվությունը: Դիպլոմի հավելվածը ներկայացնում է միայն վերջնական արդյունքը և տվյալ որակավորման համար կուտակած կրեդիտները:

ECTS պիտակներ կտրամադրվեն հայաստանյան այն համալսարաններին, որոնք ճշգրտութեն կյիմեն ECTS-ին՝ առաջին և երկրորդ շրջափուլի աստիճաններ շնորհող բոլոր ծրագրերի համար: Պիտակը կրարձրացնի համալսարանի՝ որպես միջազգային գործակցության մեջ թափանցիկ և հուսալի գործընկերոց, հեղինակությունը: ECTS պիտակներ ստանալու համար սահմանված չափանիշներն են՝ ECTS կրեդիտների օգտագործումը, ուսումնական պայմանագրի նմուշները, դիպլոմի միջուկը և պաշտոնական ճանաշման վկայությունը:

Այսպիսով, կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգը, ուսուցման արդյունքները, առարկայական տեղեկագիրը, ուսումնական պայմանագրերը, դիպլոմի միջուկը և դիպլոմի հավելվածը դառնում են թափանցիկության գործիքներ: Բոլոր այս սկզբունքները միասին ներկայացնում են բարձր որակի ապահովմանը կոչված “գործիքակազմ”։ Վերջինիս կատարելագործմանն ուղղված ջանքերի գործադրումը համալսարանում պետք է դիտվի որպես առաջնային խնդիր:

## Հանրամատչելիություն

Անհերքելի փաստ է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններն էական ազդեցություն են գործում հասարակության ձևավորման վրա: Այդ ազդեցությունը հիմնվում է համալսարանների՝ որպես կրթական, գիտական,

ստեղծագործական գործունեության և գիտելիքների փոխանցման կենտրոնների ավանդական դերի, ինչպես նաև հասարակության զարգացման հիմքը կազմող արժեքների վերահիմաստավորման ու փոխանցման կրողը լինելու հանգամանքի վրա: Համալսարանի առավել ընդգրկուն նպատակների մեջ են մտնում ուսանողներին որպես ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացիներ դաստիարակելը, նրանց՝ ապագա աշխատանքային գործունեության համար նախապատրաստելը և անձի զարգացման համար հնարավորություններ ընձեռելը՝ գիտելիքների կայուն բազայի ստեղծման ու պահպանման, գիտական հետազոտությունների ու ինովացիայի խթանման միջոցով:

Բոլորնիայի գործընթացը դեկավարվում է խտրականության բացառման և անկողմնակալության սկզբունքներով, որոնք պետք է հարցվեն և խթանվեն: Հայաստանը հավանություն է տալիս այս սկզբունքներին, ինչպես նաև հավաստիացնում, որ ոչ ուսանողները և ոչ էլ պրոֆեսորադասախոսական կազմը որևէ տեսակի խտրականության չեն ենթարկվի:

Ըստ Գ. Զարությունյանի (2007 թ.), գոյություն ունի ՀՀ կառավարության կողմից հաստատված հատուկ ծրագիր, որն ուղղված է սոցիալապես անապահով խմբերին: Ծնողազորությունը կազմական հակամարտությունների ընթացքում գրիվածների երեխաների համար սահմանվել է համալսարաններ ընդունվելու պարզեցված ընթացակարգ: Հաշմանդամ ուսանողների համար ուսումն անվճար է: Համալսարաններում գործում է սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձերի փոխառուցման ձկուն ներքին համակարգ: 2006 թ. սահմանվեց ուսանողների առաջադիմության վրա հիմնված կրթաթոշակների և նպաստների վերաբերյալ հատուկ կարգ: Արդյունքների վերաստուգումը կատարվում է ինչպես ներքին կարգով՝ համալսարանի հատուկ հանձնաժողովի կողմից, այնպես էլ կրթության և գիտության նախարարության կողմից: Ուսանողներին օգնելու համար անհրաժեշտություն կա ստեղծել դեկավարման ու խորհրդատվական ծառայություններ:

## **Ամփոփում**

Բոլոնիայի գործընթացը աշխատանք է, որն ուղղված է ուսանողներին և պրոֆեսրադասախոսական կազմին հարափոփոխ աշխարհի համար լավագույնս նախապատրաստելուն և որը միաժամանակ նպաստում է համալսարանի հանրօգուտ գործունեության բարելավմանը։ Գործակցության ոգու միջոցով Բոլոնիայի գործընթացը նպաստում է չափարոշիչների և ուղեցույցների հենքը հանդիսացող հինգ իդեալների՝ կայացմանը՝ միաժամանակ առաջարկելով բարձրագույն կրթության եվրոպական համակարգերի համադրելիությունն ու համեմատելիությունն ավելացնելու բազմաթիվ ուղիներ։ Է. Ռոշերսը (2003 թ.) խրախուսում էր, որ ուսումավարության կիրառման միջոցով Բոլոնիայի գործընթացի չափանիշները արդյունավետ տարածում գտնեն հաղորդակցության զանազան ուղիներով։ Խնդիրը իդեալները գործողությունների վերածելն է, ինչպես նաև՝ Բոլոնիայից Լոնդրն և դրանից անդին հաղորդակցության կայացումը։

## ԲԱԺԻՆ II. Վերափոխումների ռազմավարություն

### Գլուխ 3. Համալսարանի վերակառուցման կազմակերպական մոդելներ և ռազմավարություն

“Հնարավոր չէ վերաձեւել համակարգը՝  
այն մասերի բաժանելով. բոլորը պետք է  
միասին հետևեն ամրողին:”

Փիթեր Սենջ և մյուսներ (1994 թ.),  
Կարգապահության հինգերորդ ձեռնարկ

Մոդելներն ապահովում են կազմակերպական բարդ կառուցվածքների ամբողջությունը: Բոլոնիայի հոչակագրի ոգով հայաստանյան կրթական համակարգից դեպի Եվրոպական կրթական համակարգի վերափոխումը լավագույնս կարելի է ուղղորդել որոշակի հայեցակարգի օգնությամբ:

Հայաստանյան համալսարանական մշակույթների միաձուլման հնարավորությունների մասին խոսելիս կարևոր է ընդունել, որ յուրաքանչյուր բոլի իր հետ բերում է սեփական հայեցակարգ ու տարամետ անհատական հետանկարներ, որոնք կարող են համակարգի ներսում նվազեցնել միատարրությունը: Զանալով ավելացնել միատարրությունը՝ տվյալ մոդելը համալսարանում պետք է ապահովի ամբողջ-մաս-ամբողջ հարաբերակցությունը: Բոլոնիայի գործընթացի կազմակերպական մոդելը տեսության, համատեքստի և լավագույն փորձի միասնությունն է: Տեսությունն ապահովում է գործընթացի հիմքը, համատեքստը՝ համապատասխան միջավայրը, իսկ լավագույն փորձն ուղղորդում է մոդելի կերտումն ու իրականացումը:

Կարլայլն ու Քրիստենսենը (2005թ.) եզրակացրել են, որ “Տեսության կերտումը տեղի է ունենում երկու հիմնական փուլերով՝ նկարագրական փուլ և նորմատիվային փուլ... (իսկ) շրջափուլն անցնում է երեք փուլերով՝ նկարագրություն,

դասակարգում և հիմնավորում” (Էջ 1): Տեսական այս աշխատանքը սկսվում է նկարագրության փուլով և շարունակվում դեպի միջավայրի առանձնահատկությունների դասակարգում:

Լավագույն փորձը մի մեթոդ է կամ տեխնիկական մի հնարք, որը հետևողականորեն տանում է ցանկալի արդյունքների: Դալլասի համասարանում (2006 թ.) եկել են այն եզրակացության, որ լավագույն փորձի օգտագործումը պահանջում է քննության առնել գոյություն ունեցող գիտելիքներն ու տեխնոլոգիաները, որոնք արդեն դրսերվել են որպես ցանկալի արդյունքների երաշխավորման արյունավետ միջոցներ: Լավագույն փորձի ուսումնասիրությունը կրկնվող գործընթաց է և վերափոխման անբաժան մասն է կազմում: Հաջողության արձանագրումից հետո լավագույն փորձը տարածվելու միտում ունի: Սակայն հաճախ դա շատ դանդաղ է ընթանում: Լավագույն փորձը որդեգրելու երեք հիմնական խոչընդոտներն են՝ եղած լավագույն փորձի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը, այդպիսի փորձի որդեգրման միջոցով փոփոխություններ մտցնելու շարժարիթների բացակայությունը և լավագույն փորձը կիրառելու համար պահանջվող գիտելիքների ու հմտությունների բացակայությունը:

### **Երեք հիմնական տեսություններ**

Դեպի Բոլոնիայի գործընթաց տանող բարեփոխումները հիմնվում են հոգեբանական դրական տրամադրվածության, տեխնոլոգիական փոփոխությունների և կազմակերպական զարգացման տեսական հենքի վրա: Մարդկային գործունեության այս երեք կողմերը արժեքավոր ուղեցույց են՝ Հայաստանի մշակութային ծիրը և այս կազմակերպական փոփոխության հնարավոր ազդեցությունը քննության առարկա դարձնելու համար:

#### **Դրական հոգեբանություն**

Ուսանելու տեսությունների միավորման ժամանակ բիհսիրիզմն ու կոնստրուկտիվիզմը հիմք են հանդիսանում

սոցիալական արդյունավետության համար: Թորնդայքը (1932 թ.) եկել է այն եզրահանգման, որ սովորել՝ նշանակում է կոնկրետ ազդակների և արձագանքների միջև կապեր հաստատել պարզևատրումների համակարգի կիրառման միջոցով։ Կոնստրուկտիվիզմը, ինչպես նկատել են Պիագետն ու Վիգոտսկին, սովորելու գործընթացը նկարագրում է ավելի շուտ որպես իմաստի կառուցում և վերակառուցում քան թե՝ գիտելիքի փոխանցում։ Սովորելն առավել արդյունավետ է լինում, եթե սովորողներն ակտիվորեն ներգրավվում և մասնակցում են իմաստալից արդյունքի կերտմանը։ Դրական հոգեբանությունն ամրապնդում է անհատների ներդրումները ճանաչելու, խրախուսելու և պարզևատրելու ծրագրերը։



### *Տեխնոլոգիական փոփոխություն*

Փոփոխությունների տեսությունը մեկ ամբողջություն է կազմում համալսարանների վերափոխման գործընթացի հետ։ Ըստ Ռոշերսի (2003 թ.), աշխատության, նորարարության որդեգրումն ու տարածումն ապահովում են կրթական զարգացման սինեմա։ Այն տեխնոլոգիական փոփոխությունը, որը նախանշած է Բոլոնիայի հոչակագրում, սոցիալական գործընթաց է, որը ներգրավում է դեկավարներին, պրոֆեսորադասախոսական կազմին, ուսանողներին և համալսարանի դերի և գործունեության ծիրի ազդեցությանը մեծապես ենթարկվող շահագրգիռ այլ անձանց։ Վերափոխման մոդելում եղած այս օդակը շեշտադրում է փոփոխությունների գործընթացի չորս առանցքային տարրեր։ Ինովացիոն տեխնոլոգիա, - որը որոշակի ուղիներով հաղորդվում է սոցիալական համակարգի անդամներին, ովքեր այն ընդունում են որոշակի ժամանակամիջոցի ընթացքում։

### *Կազմակերպական զարգացում*

Կազմակերպական զարգացումը վերափոխման գործընթացում ձևավորում է երրորդ օդակը։ Հայաստանյան համալսարանը աստիճանակարգային՝ հիերարխիկ կազմակերպություն է, որն անցում է կատարում դեպի սովորելու կազմակերպություն, ինչպես

Նկարագրել է Մենջը (1994 թ.): Կազմակերպական զարգացումն այն գործընթացն է, որի միջոցով որևէ համալսարան իր առաքելությունն առավել արդյունավետ ու կայուն դարձնելու նպատակով զարգացնում է իր ներքին կարողությունները: Բենիսը (1999 թ.) կազմակերպական զարգացումը դիտարկում էր որպես բարդ ռազմավարություն, որը ներառում է այնպիսի բարեփոխումներ, որոնք նոր տեխնոլոգիաներին, շուկաներին ու մարտահրավերներին հարմարվելը կդարձնեն առավել դյուրին:



### Վերափոխման չորս փուլերը

Եվրոպական ոճի համալսարան ձևավորելու նպատակով կատարվող վերափոխումը պահանջում է հստակ պլանավորում և ուսուրաներ: Վերափոխման փուլերն են՝ 1) վերափոխման գործընթացի նախագծումը և մշակումը, 2) մեթոդների, միջոցների և քաղաքականության միասնությունը համալսարանի կառուցվածքում, 3) փոփոխության ներկառուցումը համալսարանի արժեքների համակարգում, 4) փոփոխությունների

արմատավորումը և համապատասխանեցումը ժամանակի պահանջներին:

### **Փուլ առաջին. Վերափոխման նախագծում և մշակում**

Որեւէ վերափոխում սկսելուց առաջ պետք է ուսումնասիրել տվյալ կազմակերպության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու առկա խոշընդոտները: Ծրագրի գնահատումը սկսվում է ծրագրի նախագծման ու մշակման ցանկացած մանրութ հաշվի առնելուց: Կառուցվածքային բաղադրիչները, այդ թվում՝ մարդկանց, տեխնոլոգիաները, գործնթացները և առհասարակ կազմակերպությունը՝ որպես մի ամբողջություն, պատշաճ կերպով դիտարկելու, նկարագրելու և գնահատելու տեսակետից տեղին է օգտագործել կոնկրետ օրինակների ուսումնասիրության մեթոդը: Այն ենթադրում է քանակական և որակական տվյալների հավաքում՝ Լինկոլնի և Կուրայի (1985 թ.) և Դենզինի և Լինկոլնի (2005 թ.) առաջարկած մեթոդների օգտագործման միջոցով: Տվյալների ստացման աղբյուրներ են համարվում ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը և դասավանդման կառուցվածքը, համայստան ընդունվելու պահանջները, դասավանդման և ուսանողների գնահատման մեթոդները: Ղեկավարների, ֆակուլտետների, ամբիոնների և անհատական մակարդակով գրույցների, փոքր խմբերով քննարկումների, ֆոկուս խմբերի, ինչպես նաև ավանդույթների ուսումնասիրման միջոցով պետք է հասնել ընկալումների, ձգտումների, ակնկալիքների, գնահատականների և կանխատեսումների պաշարի կուտակմանը: Անհրաժեշտ է քննության առնել հստակորեն սահմանված կառուցվածքային բաղադրիչների վերաբերյալ արված դիտարկումները: Ճշգրտությունը և իրավագործությունն ստուգելու համար մասնակիցներին տրամադրվում են պրակտիկայի ընթացքում կատարված գրառումներ:

Նկարագրական փուլում տեղի են ունենում բազմակի դիտարկումներ և փոխագործողություններ՝ տվյալների հավաքման և վերլուծության համար սահմանված ժամանակի ընթացքում: Բացի

այդ, նկարագրական փուլում անհրաժեշտ է ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի կրթամշակութային արժեքներն ու հայաստանյան համալսարանների առավել հրատապ խնդիրները:

Ծրագրի	Վարչական	Հիմնական	Դասախոսների	Ուսանող-ն	Նյութեր
գնահատման	աջակցությունը	դասախոսներ	սեմինարներ	ֆորումներ	

### 1 փուլ. Բարեփոխումների նախազում և զարգացում

#### *Ղեկավարության հավանությունը*

Բարեփոխումների առաջընթացի համար խիստ կարևորվում է հանրային աջակցությունը, մասնավորապես աստիճանակարգային ղեկավարման երկարամյա փորձ ունեցող համալսարաններում: Բարեփոխումների արտոնումը պետք է ապահովեն համալսարանի ղեկավարները, օրենսդրական մարմինները և հասարակական շահակիցները: Այս առումով ուժուուրը և համալսարանի մյուս ղեկավարները պետք է հստակորեն արտահայտեն իրենց տեսակետն ու պատկերացումները: Բարեփոխումների գործընթացը պետք է սիստեմատիկ կերպով նկարագրել՝ օգտագործելով զանազան մեթոդներ, այդ թվում՝ շնորհանդեսներ, մամուլի հաղորդագրություններ, քաղաքականության վերաբերյալ հուշագրեր և գործադիր հրամաններ: Ակնհայտ պետք է լինի, որ զարեփոխումը տևական գործընթաց է, որը տվյալ ղեկավարի և քաղաքականություն մշակող մարմնի լիազորությունների ավարտից հետո էլ է շարունակվելու:

#### *Դասախոսական կազմի առանցքային անդամների ընտրանքը*

Արդյունավետ կազմակերպական զարգացման ու վերափոխման առումով առաջնահերթությունը տրվում է պրոֆեսորադարանախոսական կազմին: Ինչպես հասարակական բոլոր կազմակերպություններում, դասախոսները՝ սկսած

նորարարներից մինչև դանդաղաշարժերը, փոփոխությունների գործակալների դեր են ստանձնում և ընդգրկվում համապատասխանեցման կատեգորիաներում: Մերօրյա համալսարանների դասախոսները կարող են արագացնել կամ դանդաղեցնել փոփոխությունները: Ուսալանների փոփոխության արդյունավետության ու արդյունաբարության բարձրացման ռազմավարությունը խարսխվում է համալսարանի ներսում՝ կարծիք ունեցող առաջնորդների բացահայտման և կառուցվածքային սոցիալական ցանցերի լծակների օգտագործման վրա: Ստացված տվյալների հիման վրա պետք է կազմակերպել և համալրել աշխատանքային խմբեր:

Հայ Գրետցելի (2001 թ.) սոցիալական ցանցի վերլուծությունն ենթադրում է, որ խմբի անդամների միջև հաղորդակցության ձևն ազդրում է խմբի ներգրավվածության, արդյունավետության, բավարարվածության և տեսակետների վրա: Սոցիալական ցանցը բաղկացած է հաղորդակցության խմբից և բացահայտում է այդ խմբի ներսում եղած հանգույցները կամ կապերը: Կազմակերպությունների հաջողությունը կամ ձախողումը հաճախ կախված է լինում ներքին սոցիալական կառուցվածքից:

Համալսարանի հաստիքացուցակում եղած պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր անդամներին պետք է խնդրել, որ նշեն իրենց ամբիոնում կամ ֆակուլտետում աշխատող, բայց ամբիոնում չընդգրկված, ինչպես նաև համալսարանում աշխատող, բայց իրենց ֆակուլտետում չընդգրկված դասախոսների, ում հետ իրենք կուգենային աշխատել: Առավել հաճախակի նշված դասախոսներին պետք է երևան հանել որպես “առաջնորդների” և ներգրավել ինովացիայի արմատավորման գործընթացին: Որպես կանոն, դասախոսների ինտենսիվ վերապատրաստմանը մասնակցելու համար պետք է ընդգրկել պրոֆեսորադասախոսական կազմի 20%-ը:

*Դասախոսների համար աշխատաժողովների կազմակերպում և անցկացում*

Անցումը Բոլոնիայի գործընթացին տեղի է ունենում բովանդակային հինգ առաջնայնությունների միջոցով. ուսումնական պլանի և առարկայական դասընթացների նյութերի մշակում, դասավանդման մեթոդների և նյութերի կազմակերպում, առարկայական ծրագրերի մշակում, ուսանողների զնահատման և զնահատականի նշագրման համակարգեր և դիվլումի միջուկի կառավարման համակարգեր: Ժամանակի ընթացքում պետք է հստակեցվեն աշխատաժողովների միջև դադարները: Աշխատաժողովների ժամանակ անհրաժեշտ է օգտագործել նյութը ներկայացնելու զանազան մեթոդներ, այդ թվում՝ դասախոսություններ, ցուցադրումներ, ուղղորդվող քննարկումներ, կոնկրետ օրինակների ուսումնասիրություններ և գործնական վարժություններ:

### *Ուսանողական ֆորումների անցկացումը*

2007 թ. մայիսին Լոնդոնում ստորագրած կոմյունիկետվ նախարարները վերահստատեցին ուսանողներին աշխատանքային կարիերային, ժողովրդավարական հասարակությունում ակտիվ քաղաքացի դառնալուն ավելի լավ նախապատրաստելու և նրանց անձի աճին ու զարգացմանը նպաստելու իրենց պարտավորվածությունը: Բոլոնիայի գործընթացը առաջարկվող առավել հեռուն գնացող կրթական քաղաքականություններից մեկն է և իր ազդեցությունը կունենա ավելի քան 16 միլիոն ուսանողների վրա: Մինչդեռ Պլոմպենը (2006 թ.), Կառավարման զարգացման եկրոպական հիմնադրամի (EFMD) անցկացրած հարցումից պարզել է, որ գործընթացի քաղաքականությունը էապես չհասկացված է մնում ուսանողների շրջանում: Ուսանողների կողմից Բոլոնիայի ընկալման քացահայտմանն ուղղված EFMD-ի հարցմամբ պարզվեց, որ ուսանողների կեսը Բոլոնիայի բարեփոխումների վերաբերյալ խորը գիտելիքներ չունի:

Այդ հարցմանը մասնակցած ուսանողները պատասխանել են, որ համալսարան ընտրելու հարցում որոշիչ գործոնը եղել է “ընդհանուր համբավը”, գումարած ապագա զբաղվածության

հեռանկարները: Ուսանողների կեսը տեղյակ չի եղել շարժունության գծով տրամադրվող կրթաթոշակների մասին:

Ուսանողները շահագրգիռ են փոփոխությունների հարցում և պատկերացում ունեն հեռանկարների մասին: Մասնավորապես, առաջատար ուսանողներն ունեն փոփոխությունները կերտելու և խրախուսելու ներուժ: Ուսանողական ֆորումները պետք է կազմակերպեն առաջատար ուսանողները, ովքեր ակտիվ դերակատարում ունեն ուսանողական ինքնակառավարման մարմիններում: Ֆորումի շրջանակում պետք է կազմակերպել ձեպագրույց բարեփոխումների ընդհանուր նպատակների ու ընթացիկ վիճակի վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել ժամանակ՝ հարց ու պատասխանի համար: Ֆորումը կիսամյակի ընթացքում պետք է կազմակերպվի պարբերաբար, սակայն չպետք է խանգարի պարապմունքներին:

Անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես են ուսանողներն ընկալում Բոլոնիայի գործընթացը և թե որքանով այն, անկասկած, կազի շարունակական կրթության հարցում իրենց ընտրության վրա:

### *Նյութերի մատչելիության ապահովումը*

Համակողմանի ընկալման առումով էական նշանակություն ունի նյութերի մատչելիության ապահովումը: Գործնական նյութերը պետք է գետեղված լինեն որևէ մատչելի վեր կայքում: Դրանք կարող են օգտագործել ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի առանցքային անդամները, այնպես էլ շահագրգիռ այլ խմբեր: Գործընթացի արդյունավետության բարելավման առումով անհրաժեշտ է վարել հստակ քաղաքականություն: Ներքին փորձագետների մշակած նյութերն ավելի մեծ ազդեցություն են ունենում կրեդիտային համակարգի ընկալման ու կիրառման վրա: Նյութերը մատչելի դարձնելու օրինակ կարելի է տեսնել [www.sauabologna.com](http://www.sauabologna.com) կայքում:

**Փուլ Երկրորդ. Բարեփոխումների ինտեգրումը՝  
ռազմավարություն և մարտավարություն**

Երկրորդ փուլը նախատեսված է բարեփոխումների ինտեգրման միջոցով Բոլոնիայի գործընթացը խորացնել համալսարանում։ Ռազմավարության ու մարտավարության սեղուակետերն են՝ “նախնական մեծամասնություն” կազմող դասախոսների համար աշխատաժողովների անցկացումը, խորհրդատվություն դեկավարների համար, քաղաքականության մշակումը, ուսանողների զարգացումը, ուսպլանների ձգրտումը, դիպլոմի միջուկի վարումը, դասախոսական ֆորումների կազմակերպումը և նյութերի մատչելիության ապահովումը։


*Աշխատաժողովներ դասախոսների համար*

Օգտագործելով գործընթացին առաջին իսկ փուլից մասնակից դասախոսների ներուժը, այսպես կոչված “նախնական մեծամասնություն” կազմող դասախոսների համար։ Բովանդակային առումով առանձնացվում է հինգ առաջնային ոլորտներում՝ ուսպլանի և առարկայական դասընթացների մշակում, դասավանդման մեթոդների և նյութերի կազմակերպում, առարկայական ծրագրի մշակում, ուսանողների գնահատման և գնահատականների նշագրման համակարգեր և դիպլոմի միջուկի վարման համակարգեր։ Ժամանակի ընթացքում, պետք է հստակեցնել աշխատաժողովների միջև ընդհատումները։ Աշխատաժողովների ժամանակ հարկավոր է կիրառել դասավանդման բազմաթիվ մեթոդներ, այդ թվում՝ դասախոսություններ, ցուցադրումներ, ուղղորդվող քննարկումներ, կոնկրետ օրինակների ուսումնասիրություն, ինչպես նաև գործնական վարժություններ։ Զափազանց կարևոր է լրացուցիչ աջակցություն ցուցաբերել “ուսուցանողներին”, ինչպես նաև պահպանել գործընթացի ձգրտությունն ու ամբողջականությունը։ Այս փուլում հրամցվում են առավել համապարփակ գիտելիքներ և

վարքագիծ, իսկ փուլի հիմնական սևեռակետը Բոլոնիայի գործընթացի համապատասխան նյութերի և մեթոդների մշակումն է:

*Համալսարանի դեկանարության  
խորհրդատվություն*

Համալսարանի դեկանարությունը պետք է ներգրավված լինի ուսումնական պլաններում սխստեմատիկ փոփոխություններ կատարելու գործընթացում: Այս առումով ռեկտորից, պրոռեկտորներից, դեկաններից, ամբիոնների վարիչներից և համալսարանում գործող խորհուրդների և հանձնաժողովների դեկանարներից ակնկալվում է միասնական տեսակետ, որը պետք է հստակորեն ուղղորդված ու ձևակերպված լինի:



Համալսարանի դեկանարությունը պետք է ներգրավվի ազգային քաղաքականության մշակման գործընթացում՝ միաժամանակ պաշտպանելով սեփական բուհի առաքելության եզակիությունը: Վերափոխումների գործընթացը պետք է հետազոտվ ևս սխստեմատիկ կերպով բացատրել ու հրամցնել շահագրգիռ կողմերին: Պետք է ակներև լինի, որ վերափոխումը երկարաժամկետ պարտավորություն է, որը դառնում է համալսարանի զարգացման հենքը:

*Քաղաքականության մշակումը*

Շահագրգիռ կողմերի լայն ներկայացուցչությունը պետք է քննության առնի գոյություն ունեցող ազգային և

ներհամալսարանական կրթական ավանդույթները՝ հաշվի առնելով Բոլոնիայի հոչակագրում և հաջորդող կոմյունիկեներում ընդգրկված աշխատանքային ուղղություններով սահմանված նոր քաղաքականության դրույթները։ Մասնավորապես, պետք է մանրագնին քննության առնվեն և հստակեցվեն նոր քաղաքականության համար արդյունավետ և արդյունարար կարևոր հետևյալ խնդիրները։

- կրեդիտների համակարգը
- դյուրքնթեռնելի և համեմատելի աստիճանների համակարգը
- որակի երաշխավորման չափորոշիչներ և ուղեցույցը
- զիտելիքների հիմքի սահմանումը
- հորիզոնական և ուղղահայաց շարժունությունը
- սովորելու ձկուն ուղիները
- ուսանողներին ապագա կարիերայի համար նախապատրաստելն ու նրանց անձի զարգացումը
- ուսանողներին որպես ժողովրդավարական հասարակության ակտիվ քաղաքացի դաստիարակելը
- ուսանողների նախորդ ուսումնառության ձանաշումը
- զիտական հետազոտությունների և խնովացիայի խթանումը
- համատեղ աստիճանների շնորհումը
- հարատև ուսուցում։

### *Ուսանողների զարգացումը*

Ուսանողներին պետք է ընդգրկել Բոլոնիայի գործընթացն ավելի լավ հասկանալու և համալսարանի կառավարմանը մասնակցելու գործընթացների մեջ։ Անհրաժեշտ է ստեղծել լայն հնարակորություններ բակալավրի, մագիստրի աստիճաններ և հետքուհական կրթություն ստացող ուսանողների համար։ Բոլոր ուսանողներին պետք է խրախուսել միմյանց հետ համագործակցելու միջոցով հետազոտել կարիերայի և հետազա ուսմումնառության հնարավորությունները։ Ուսանողների տեղեկացվածությունն ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար հաղորդագրություններ տպագրել ուսանողական հանրապետական մամուլում։

Ամենամյա սեմինարները՝ ուսանողներին տեղեկատվություն տրամադրելուց բացի, նրանց օգնում են ներգրավել հասարակական աշխատանքի և գործակցության մեջ, ինչպես նաև նպաստում ինտեգրացված մասնագիտացումներին:

### *Ուսումնական պլաններում փոփոխություններ*

Երկրորդ փուլը պահանջում է միջառարկայական ուսումնական մաքսիմալ ինտեգրացում, ինչը բակալավրի մակարդակով կապահովի դասախոսների միջև պարապմունքների փոխանցելիություն: Այս ինտեգրացումը պահանջում է ֆակուլտետներից դուրս ընտրողական դասընթացների թվի մեծացում: Դասավանդման առավել սովորողամետ մեթոդները կփոխեն դասախոսական կազմի հիմնական ավանդույթներն ու մշակույթը: Անհրաժեշտություն կա վերակառուցել ուսումնական պլանները և նախատեսել նոր ուսումնական ծարգիր, ինչպես նաև ընդլայնել ուսումնական և աշխատանքային կարիերային վերաբերող խորհրդատվության ծավալները:

### *Դիպումի միջուկի վարումը*

Այս փուլը պահանջում է մշակել և ներդնել դիպումի միջուկի դինամիկ վարման համակարգ, որը ներառում է ուսանողներին տեղեկատվություն տրամադրելու՝ բոլոնիայի գործընթացին համահունչ գործառույթներ: Անհրաժեշտ է պլանավորել դիպումի միջուկի վարման համար LAN-ծրագրակազմի փոխկապակցիչի (ինտերֆեյս) ստեղծումն ու կիրառումը, որի միջոցով կարելի է պահեստավորել և հայթայթել դիպումի միջուկի, դիպումի հավելվածի և համալսարանի առարկայական դասընթացների տեղեկացրի մասին տեղեկատվությունը: Այս տարրը պահանջում է սիտեմատիկ պլանավորում, որը կարող է ներառել դիպումի միջուկների տնօրինումն ու ուսանողների համար անհրաժեշտ տեղեկատվություն ապահովող՝ ապագայում անհրաժեշտ համակարգի երկամյա կամ հնգամյա լիարժեք իրականացում:

### *Դասախոսների ֆորում*

Դասախոսական ֆորումների կանոնավոր կազմակերպմամբ հնարավորություն կլինի առավել բարենպաստ միջավայր ստեղծել դասախոսական կադրերի աշխատանքի ընդունման, նրանց առաջնադաշտման համար: Այս աշխատանքը կարող է ներառել քննարկումներ և գործողությունների պլան՝ նոր ուսուանների, դասընթացների, հետազոտական ծրագրերի և ուսումնական աշխատանքների մշակման համար, որոնք անհրաժեշտ են համալսարանների շրջանավարտներին դասախոսական աշխատանքով հրապուրելու, ինչպես նաև դիմորդներին՝ համալսարան ընդունվելու համար:


### *Նյութերի մատչելիություն*

Նյութերը՝ զանազան ձևերով մատչելի դարձնելուց բացի, դրանք պետք է նաև բարմացնել և գետեղել վեր կայքում: Դրանք կարող են օգտագործել թե պրոֆեսորա-դասախոսական կազմը և թե առհասարակ շահագրգիռ կողմերը: Գործնքացի արդյունավետությունը բարձրացնելու նկատառումով անհրաժեշտ է վարել հստակ քաղաքականություն և գործելակերպ հրամցնել: Ընդ որում, համալսարանից նշանակված փորձագետների մշակած նյութերը ավելի մեծ ազդեցություն են ունենում կրեդիտային համակարգի ընկալման և իրականացման վրա: Նյութերի մատչելիության աստիճանն էական նշանակություն ունի մեծ թվով մարդկանց կողմից համակարգի ընկալումն ապահովելու առումով:

### **Փուլ երրորդ. Բարեփոխումների իրականացումը. ուազմավարություն և մարտավարություն**


Երրորդ փուլը պահանջում է այնպիսի ուազմավարության և մարտավարության որդեգրում, որոնք ենթադրում են բարեփոխումների կայունացում և ընդունում դասախոսների և ուսանողների համար անցկացվող սեմինարների, համակարգի վերանայման, ներքին և արտաքին գնահատման, քաղաքականության ձգրտումների, ուսուանի

փոփոխությունների, դիմումի միջուկի վարման և աշխատանքի ընթացքում ստուգման ու գնահատման միջոցով:



Դասախոսական սեմինարները խթան են հանդիսանում՝ հասարակական շարունակական երկխոսությունների և գործնթացի առաջընթացին հետևելու համար: Սեմինարները պետք է հետապնդեն կոնկրետ խնդիրներ և կազմակերպվեն կանոնավոր կերպով: Սեմինարների ժամանակ կարելի է օգտագործել բազմազան մեթոդներ, այդ թվում՝ խմբային քննարկումներ, սիմպոզիումներ, կոլոկվիումներ, ֆորմալ կամ ցուցադրական ներկայացումներ, ինչպես նաև դասախոսություններ ու ելույթներ:

Ուսանողական սեմինարները ծառայում են ուսանողների մասնակցությունը խրախուսելու, ինչպես նաև նրանց կողմից Բոլոնիայի գործնթացի էությունն ու իդեալները հասկանալու նպատակին: Ուսանողական սեմինարների ժամանակ նույափես պետք է զանազան մեթոդների միջոցով ապահովել ակտիվ ներգրավվածություն:



Անհրաժեշտ է ավելի խորը ուսումնասիրել, թե ուսանողներն ինչպես են ընկալում Բոլոնիայի գործընթացը և թե այն որքանով կազդի շարունակական կրթության առումով նրանց ընտրության վրա:

### Ամփոփում

Համակարգի պարբերական վերստուգման միջոցով կարելի է ընթացիկ գործելակերպն ու փորձը համեմատել որպես ուղինիշ ընդունված գործելակերպի հետ: Այսպիսի վերստուգումները կարող են որպես ելակետ ընդունել աշխատակազմի կողմից իրականացվող ներքին գնահատումները կամ գործակցող համալսարանների փորձագետների կողմից իրականացվող արտաքին գնահատումները: Այս քննաստուգումներից ելնելով կարելի է վերանայել և ճշգրտել բուհի ռազմավարական հայեցակարգը: Ուսումնական պլանը չպետք է լինի ստատիկ, այլ շատ արագ արձագանքի գիտելիքների ու գործելակերպի մեջ տեղի ունեցող դինամիկ փոփոխություններին: Հորիզոնական և ուղղահայաց միզրացիայի ապահովման առումով փաստաթղթերը պետք է ստուգվեն՝ ճշգրտության ու գործակցող համալսարանների կողմից ընդունելի լինելու տեսանկյունից: Վերստուգման ու գնահատման միասնացված համակարգի գոյությունը կնպաստի ճիշտ որոշումների կայացմանը:

## **Գլուխ 4. Պրոֆեսորադասախոսական կազմի դերը ինստիտուցիոնալ փոփոխություններում**

80-20 կանոնը՝ առաջնորդության 80%-ը բխում է մարդկանց 20%-ից:  
Պարետոյի սկզբունքը

Պրոֆեսորադասախոսական կազմը՝ համալսարանի ավանդույթների պահպանողն ու կրողն է: Ավանդաբար, դասախոսական կազմը պահպանողական է և գերադասում է ոխուկի չղիմել և չխախտել ընդունված սովորույթները: Եվ հակառակը, եթե դասախոսական կազմը կանխատեսում է այն առավելությունները, որոնք կարող են ազդել իրենց կարգավիճակի վրա, բարելավել ուսման որակը և բարձրացնել համալսարանի վարկը, նրանք դառնում են փոփոխությունների ազդեցիկ գործակալներ:

### **Պրոֆեսորադասախոսական կազմի դերը դեկանական գործընթացում**

Օրենսդրութեն համալսարանի կառավարումն իրականացնում են կառավարման խորհուրդներն ու ռեկտորը: Սակայն, պրոֆեսորադասախոսական կազմը կարող է հանդես գալ խորհրդատուի և կարգավորողի դերում: Ռամոն (2001 թ.) նշում է, որ դասախոսական կազմի ներգրավվածության երեք հիմնական ոլորտներն են. 1) ուսումնական պլանները, առարկայական ծրագրերն ու դասավանդման մեթոդները և հետազոտությունները, 2) պրոֆեսորադասախոսական կազմի կարգավիճակին վերաբերող հիմնախնդիրները (օրինակ՝ աշխատանքի ընդունում, աշխատանքից ազատում, մարդկային ռեսուրսների պահպանում, հաստիքավորում և պաշտոնի բարձրացում), 3) կրթական գործընթացին վերաբերող ուսանողական կյանքի խնդիրները:

## **Պրոֆեսորադասախոսական կազմի էռոթունը**

Հստ հոգեբանների՝ դասախոսական կազմի անդամների տարրեր խառնվածքն իր ազդեցությունն է թողնում նորամուծությունների և փոփոխությունների հանդեպ իրենց պատրաստակամության վրա: Ընդունված սոցիալական սխեմայի համաձայն դասախոսական կազմն ունի հետևյալ դասակարգումը. նորարարներ, փոփոխություններն արագ ընդունողներ, արագ փոփոխվող մեծամասնություն, դանդաղ փոփոխվող մեծամասնություն և դանդաղկոտներ (Ռոշերս, 2003 թ.): Տվյալ դասակարգումը կիրառելով Բոլոնիայի գործընթացի համար՝ անհրաժեշտ է զարգացման փուլի սկզբում առանձնացնել և ներգրավել փոփոխություններն արագ ընդունողներին: Այս անձինք համալսարանում կազմում են դասախոսների թվի 10%-ը, կիրթ են, իրենց գործընկերների կողմից սիրված և համարվում են առաջնորդներ: Փոփոխություններն արագ ընդունողների վերլուծություններն ու որոշումները հիմնվում են կուտակված փաստերի և համընդհանուր կարծիքի վերլուծության վրա:

Բոլոնիայի գործընթացի ընդունումն արագացնելու նպատակով անհրաժեշտ է այս խումբը համալրել հաջորդական գործընթացի միջոցով, որի բաղադրիչներն են՝ գործառությների և արժեքների ներկայացումը, գործընթացը իրականացնելու գործում պատրաստակամության ցուցաբերումը, մասնագիտական աշխատանքում կրեդիտային համակարգի բաղադրիչների կիրառման փորձի՝ որպես իրենց ուսումնական կյանքի բաղկացուցիչ մասի ընդունումը (Ռոշերս, 2003 թ.):

Իրականացնելով Բոլոնիայի գործընթացի փոփոխությունները՝ արագ փոփոխվող մեծամասնության խմբում ընդգրկված դասախոսներին պետք է ներգրավել երկրորդ՝ ինտեգրացման, փուլ: Այս խմբի անդամները նույնպես հասուն, հիմնականում լավ տեղեկացված և լավ հասարակական կապեր ունեցող անձինք են: Կազմելով դասախոսական կազմի մոտավորապես մեկ երրորդը՝ նրանք իրենց որոշումները կայացնում են “արագ ընդունողների” խմբի հետ հաղորդակցման արդյունքների հիման վրա:

## **Պրոֆեսորադասախոսական կազմի տարրեր տեսակետները**

Չնայած Բոլոնիայի գործընթացը նախաձեռնվել է 1999 թ. համալսարանների մի փոքր խմբի կողմից, որոշ անձինք այն հաճախ դիտարկում են որպես կառավարությունների մակարդակով ներդրված գործընթաց: Տասնամյակներ շարունակ Հայաստանում բարձրագույն կրթության քաղաքականությանը վերաբերող որոշումները կայացվել են Կրթության և գիտության նախարարության կողմից՝ վաստակաշատ գիտնականների հետ համատեղ: Շատերը գտնում են, որ Բոլոնիայի գործընթացը որոշումներ կայացնելու կենտրոնը տեղափոխել է իրենց ազդեցության ոլորտից դեպի եվրոպական մակարդակ:

Գործընթացն առավել մանրամասն ուսումնասիրելուց հետո կարելի է նկատել դրա առավելությունները՝ ներառյալ տարրածաշրջանային և միջազգային ձանաչումը, արտասահմանյան ուսանողների թիվն ու կրթության որակը բարձրացնելու հնարավորությունները և առկա մեծ ինքնավարությունը համալսարանական կառավարման գործում:

Որոշ դասախոսներ գործընթացն ընկալում են որպես առավելությունների և ռիսկերի խարնուրդ պահանջող առավել պատասխանատվություն, ֆակուլտետների միջև առարկաների փոխանցում, համալսարանի ներսում և այլ համալսարանների միջև տեղի ունեցող ուսանողների շարժունություն և առարկաների՝ որպես կրթական աստիճանի մասի, ավելի լայն ընտրության հնարավորություն:

Հակառիսկային խմբին պատկանող դասախոսական կազմի անդամները գտնում են, որ Բոլոնիայի գործընթացը կավելացնի ուսումնական ծանրաբեռնավծությունը, ավելի կսերտացնի դասախոս-ուսանող հարաբերությունը, կրթական կառուցվածքում փոփոխություններ կմտցնի և կնվազեցնի դասախոսական կազմի ազդեցության մակարդակը համալսարանի քաղաքականության վրա: Այս կետերից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները, քանի որ բխում է առօրեական, հասարակական և միևնույն ժամանակ թարմ աշխարհայացքից բխող ներգրավված հաղորդակցման անհրաժեշտությունից:

## **Պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ներգրավումը**

Չատ կարևոր է Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ բաց քննարկումներ և զրույցներ վարել դասախոսական կազմի հետ: Կարծիք ձևավորող առաջնորդները (հիմնականում այդ խմբի մեջ մտնում են փոփոխություններ արագ ընդունողները) պետք է հնարավորություն ունենան օգտագործելու անցումն ապահովող անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունն ու փոփոխությունների հիմնավորումները: Դասախոսները պետք է կարևոր դեր կատարեն որոշումների կայացման գործընթացում, հատկապես այն բնագավառներում, որոնք մեծ ազդեցություն են գործում կրթական և գիտական ոլորտների վրա: Հատուկ դասընթացներին մասնակցելու արդյունքում այդ դասախոսները կարող են դառնալ փոփոխություններ իրականացնողներ:

Դասախոսական կազմը վարչական աշխատողների, ուսանողների, շահառուների և կառավարման մարմինների այն մասն է, որը ձևավորում է համալսարանի քաղաքականությունը և առաջնայնությունները: Ռամոն (2001 թ.) մատնանշել է դասախոսական կազմի համատեղ կառավարման ինը ցուցանիշ՝ ճանաչում, համապատասխան խոշընդուներ, հաղորդակցման ուղիներ, պահպանում, ազդեցություն, երկկողմանի համագործակցություն, ներկայացուցչականություն, պատասխանատու գործնական փորձ և անվտանգություն: Համատեղ կառավարման համար պետք է հղումներ կատարել նշված ցուցանիշներից յուրաքանչյուրին:

Այնուամենայնիվ, Բոլոնիայի գործընթացը հիմնական կազմակերպական փոփոխություններ ներմուծելու կոչ է: Մորգանը (2004 թ.) հորդորում է դասախոսական կազմի անդամներին ուսումնասիրել բարեփոխումների չնախատեսված հետևանքները կրթության և հետազոտությունների որակի վրա: Գործընթացը ավելի զլորալ նշանակություն ունի դասախոսական կազմի համար: Ավելի մեծ կարևորություն է տրվում ուսուցման արդյունքներին, քան լսարանային դասախոսություններին: Դասախոսական կազմը կարող է ընդունել կամ մերժել այս փոփոխությունները՝ կախված այն հանգամանքից, թե նրանք ինչպես են տեսնում ապագան:

## **Ամփոփում**

Հնդիանուր առմամբ, դասախոսական կազմի անդամները քննադատաբար են վերաբերվում Բոլոնիայի գործընթացի իդեալներին: Գործընթացն ավելի արդյունավետ կլինի, եթե հիմնական կառավարող խմբերը ընդունեն դասախոսական կազմի անդամներին որպես իրավական գործընկերներ:

Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է սկզբից ներգրավել իրենց գործընկերների շրջանում կարծիք ձևավորող առաջնորդներին:

Արդյունավետ գործելու համար դասախոսական կազմի անդամները պետք է լավ ընկալեն ընթացակարգային փոփոխությունները, դրական դիրքորոշում ձևավորեն իրենց տեսակետներում և պատրաստակամություն ցուցաբերեն կրեդիտային համակարգի բարարիչների կիրառման միջոցով փորձ ձեռք բերելու հարցում: Գործընթացը կարող է ավարտուն համարվել միայն այն դեպքում, եթե դասախոսները կիրառեն դրա դրույթներն իրենց աշխատանքում:

## **Գլուխ 5. Ուսանողների դերը ինստիտուցիոնալ փոկիոխություններում**

Ուսանողն ապագայի մեր ամենամեծ հույսն է

Ուսանողները համարվում են Բոլոնիայի գործընթացի լիիրավ անդամ: Ուսանողներն իրենց ուրույն տեսակետն ունեն որակյալ կրթության վերաբերյալ: Միաժամանակ այս փոփոխական աշխարհում նրանք պետք է ի վիճակի լինեն տարրերակելու «դիպլոմ ստանալը» և «հիմնարար գիտելիքներ ու ունակություններ ձեռքբերելը»՝ որպես հիմնական կառավարող խմբերից մեկը:

### **Լոնդոնի հոչակագիր**

Բոլոնիայի հոչակագրի նախնական տարրերակը անտեսում էր ուսանողների՝ որպես գործընթացում ներդրում կատարող շահառուի գործոնը: Բերգենը (2001 թ.) նշել է, որ Պրահայի խորհրդաժողովից հետո էր միայն, որ ուսանողները սկեցին համարվել որպես «...կարողունակ, ակտիվ և կրնատրուկտիվ գործընկերներ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ստեղծման և ձևավորման գործում...» (Էջ.1):

Վերջերս, 2007 թ. Լոնդոնի կոմյունիկեում նախարարները վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը.

- ուսանողներին դաստիարակել՝ որպես ժողովրդավար հասարակության ակտիվ քաղաքացիներ
- ուսանողներին նախապատրաստել իրենց ապագա կարիերայի համար և խթանել նրանց՝ անձի զարգացումը
- ստեղծել և պահպանել կայուն բազա՝ խորը գիտելիքներ ստանալու համար
- ազդակ հանդիսանալ հետազոտությունների իրականացման և նորամուծությունների ներդրման համար:

Ակնհայտորեն, ուսանողությունը հանդիսատեսից դառնում է գործող անձ, ում դերը համալսարանի կառավարման գործընթացում առավել կարևոր է:

### Ուսանողների էությունը

Իրենց էությամբ՝ ուսանողները հետաքրքրասեր են, պատրաստակամ և ցանկանում են ներգրավվել փոփոխությունների գործընթացում: Ընդհանուր առմամբ, ուսանողները բաժանվում են երկու խմբի. մեկը հակված է արտաքին փոփոխությունների, իսկ մյուսը՝ ներքին: 1970 և 80-ական թվականների ոսպիկալ ուսամողական ակտիվիտետներին հակառակ, այսօրվա ուսանողների մեծամասնությունը աշխատում է դրական, քայլ առ քայլ փոփոխություններ կատարել ներսից դեպի որևէ ուղղվածությամբ: Ինչպէս և դասախոսական կազմի անդամները, ուսանողները նույնպես դասակարգվում են ըստ տարբեր խառնվածքների՝ նորամուծությունների և փոփոխությունների հանդեպ իրենց վերաբերմունքի առումով: Կիրառելով այդ մոտեցումը Բոլոնիայի գործընթացի ընդունման համար՝ “փոփոխություններ արագ ընդունողների” խմբում ընդգրկված ուսանողները պետք է վաղ ներգրավվեն նախնական գարգացման փուլում:

#### 4.1. Տարեկան աշխատածավալը և ուսումնական ծանրաբերոնավճությունը

1. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում բոլոր կրթական աստիճաններում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական ծանրաբերոնավճությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ /լսարանային, արտադրանային և ինքնուրույն/ ուսումնական բեռնվածությանը:

3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից առնվազն 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային:

4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

5. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային

- ծանրաբերոնավծությունը կազմում է 23-30 ժամ, իսկ մազիստրոսի կրթական ծրագրում՝ 15-22 ժամ:
6. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական ծանրաբերոնավծություն /10% թույլատրելի շեղումով/, իսկ Մեկ ուսումնական տարրում՝ 60 կրեդիտ:
  7. Բացառիկ դեպքերում, ուսման բորձը առաջադիմություն ցուցաբերած ուսանողը համապատասխան թույլտվության դեպքում կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական ծանրաբեռնավծություն:
- ՀՀ կրթության և փոտության նախարարություն (էջ 10, 2007)

Համալսարանի ուսանողների ընդհանուր թվի մոտ 10%-ը ընտրվելու են որպես առաջնորդներ և նրանց ազդեցությունը ուսանողների վրա մեծ է լինելու:

Բոլորնիայի գործընթացի իրականացման ընթացքում ուսանողներն ել ավելի կներգրավվեն ինտեգրման փուլում: Կազմակերպվելու են բաց սեմինարներ և ֆորումներ՝ նոր և ընդհանուր տեղեկություններ տրամադրելու համար:

### **Ուսանողների դերը կառավարման գործընթացում**

Ըստ Գլանվիլի (2006 թ.)՝ «բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ձգտեն բարելավել ուսանողներին առաջարկվող կրթությունը» (էջ.49): Որպես «ներսի մարդ» ուսանողները համալսարանի կառավարման վերաբերյալ իրենց ուրույն կարծիքն ունեն և կարող են ներկայացնել արժեքավոր տեսակետներ համալսարանի փորձի կուրժան վերաբերյալ, այդ թվում՝ ուսումնական պլանի, դասավանդման և ուսուցման բնագավառներում որակի խնդիրների, դասախոսական կազմի և վարչական աշխատողների գնահատման և հաղորդակցման փորձի բնագավառների վերաբերյալ: Ուսանողները պետք է զգան, որ իրենք տեղ ունեն կառավարման գործընթացում՝ ընտրված, նշանակված և ոչ պաշտոնական առաջնորդների կարգավիճակով: Եվրոպայի ուսանողների ազգային միությունում (2005 թ.) ընդգրկված ուսանողները տարբեր հարցեր են բարձրացրել «Ու գիրք» հրատարակության մեջ: Տարածայնությունների և քննադատությունների մեծ մասը կարելի է նվազեցնել

ուսանողներին գործընթացի մշակման փուլում ընդգրկելու միջոցով: Անհրաժեշտ է իրականացնել հայ ուսանողների տեսակետների պաշտոնական գնահատում՝ իրենց կարծիքները պարզելու, ինչպես նաև փոփոխությունների հետևանքները հասկանալու համար:

### **Ուսանողների ներգրավումը**

Ներգրավումը հանգուցային նշանակություն ունեցող մարտավարություն է, որի միջոցով ուսանողները ավելի լավ են ընկալում Բոլոնիայի գործընթացն ու իրենց դերը համալսարանի կառավարման գործում: Ուսանողները պետք է լիովին հասկանան Բոլոնիայի գործընթացի բաղադրիչները, այդ թվում՝ կրեդիտների փոխանցման համակարգը, ուսանողների շարժունությունը, որակի բարձրացումը, համալսարանի ինքնավարությունը, բափանցիկությունը և հանրամատչելիությունը: Ուսանողներին պետք է խրախուսել՝ բացահայտելու իրենց համալսարանի ուսումնական պլանների և աշխատանքային կարիերայի միջև գոյություն ունեցող կապը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել, որպեսզի բոլոր գործընթացները լինեն բափանցիկ, արդար և արդյունավետ:

Ներգրավման մարտավարությունը պետք է լինի բազմազան: Այն պետք է ընդգրկի ամենամյա սեմինարներ, սիստեմատիկ լրատվական հայտարարություններ ուսանողական մամուլում, և մի շարք հասարակական գործառույթներ, որոնք կազմակերպվում են՝ ուսանողների մասին տեղեկատվության տրամադրման, թիմային և գործընկերային աշխատանքի, ինչպես նաև ինտեգրացված մասնագիտությունների խթանման համար:

### **Ամփոփում**

Համալսարանի մի քանի հիմնական համարվող կառավարող խմբերից մեկի ուսանողները պետք է գործնական ներգրավվածություն ունենան Բոլոնիայի գործընթացի մեջ: Նրանք պետք է զգան, որ իրենց ներդրումն արժեքավոր է, և իրենց դերը կարևոր՝ փոփոխությունների գործընթացում:

Շատ դեպքերում, փոփոխություններն արագ ընդունողների և արագ փոփոխվող նախնական խմբերի մեծ մասում ընդգրկված ուսանողները դառնում են ընտրված, նշանակված և ոչ պաշտոնական առաջնորդներ: Նրանք կարող են իրենց ազդեցությունն ունենալ կատարվող փոփոխությունների ուղղվածության և արագության վրա: Ուսանողների ներգրավումը պետք է կազմակերպվի բազմաթիվ՝ այդ թվում պաշտոնական և ոչ պաշտոնական գործառույթների միջոցով: Ուսումնասիրությունների համաձայն՝ այն համալսարաններն ունեն առավել գործուն ինքնավարություն, որոնք մեծ տեղ են տալիս ուսանողությանը:

### **III Բաժին. Բարեփոխմանը նպաստող ռազմավարություն**

#### **Գլուխ 6. Ուսուցման մանկավարժական նոր մեթոդների ընդունման ռազմավարություն**

Հարցազրույցի ենթարկված պրոֆեսորադասախոսական կազմն այնպես էր մեզ ուսուցանում, ինչպես իրենց էին ուսուցանել . . .

Բոլոնիայի հռչակագիրը (1999 թ.) չի սահմանում բարձրագույն կրթության եվրոպական ոլորտ մուտք գրքելու համար որպես նախապայման “ուսուցման նոր մանկավարժական մեթոդների ընդունումը”: Սակայն ուսուցման որակը համալսարանի առաքելության անբաժան մասն է կազմում և խթանում է աշխարհով մեկ բարձրագույն կրթության եվրոպական համակարգի տարածմանը: Ինչպես արհեստավորի համար գործիքների, այնպես էլ հմտություն մանկավարժի համար շատ կարևոր է մեթոդների և նյութերի ընտրությունը: Որակյալ ուսուցման տակ ենթադրվում է որակի ապահովման չափանիշների պահպանումը:

Մանկավարժություն՝ դասավանդման արվեստ, գիտություն թե՝ մասնագիտություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանյան համալսարանական ուսուցման 70-90% կազմում են դասախոսությունները՝ մեջոդ, որը ուսանողի համար վերապահում է պասիվ դեր (ունկնդրում): Ուսուցումն իր սահմանմամբ ակտիվ գործընթաց է, որի շնորհիվ տեղի է ունենում վարքագիր փոփոխություն: Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ ուսուցման շարժադիրը ձևավորվում է այն ժամանակ, երբ ուսանողներն ակտիվորեն մասնակից են դաշնում ուսուցման գործընթացին: Թրայխլերը (1967 թ.) նշում է, որ ուսանողները սովորում են.

- կարդացածի 10%-ը,
- լսածի 20%-ը,

- տեսածի 30%-ը,
- տեսածի և լսածի 50%-ը,
- քննարկման արդյունքի 70%-ը, այն դեպքում, եթե հարգում են նրանց կարծիքը,
- անձնական փորձի 80%-ը
- այլ մարդկանց իրենց սովորեցրածի 90%-ը:

### **Հմուտ մանկավարժները հարցնում են՝ «Ո՞րն է նպատակը»**

Մերողների և նյութի ընտրության հիմնական նպատակն այն ակնկալիքն է, թե ինչ գիտելիքներ և հմտություններ կարող է ձեռք բերել շրջանավարտը ուսումնառությունից հետո։ Արդյոք հաջողությունը կախված է իմացակա՞ն, հոգեշարժի՞չ, թե՞ զգայական հմտություններից։ Սովորածն իրական կյանքում կիրառելիս հմտության ի՞նչ մակարդակ պետք է ուսանողն ի վիճակի լինի ցուցադրել։ Այս հարցերի հետ զուգահեռ առկա են որոշ ճնշող հիմնախնդիրներ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում դասավանդման և ուսումնառության միջավայրի վրա։

Դասավանդման մեթոդները դասակարգվում են երեք մեծ խմբեր՝ դասախոսի կողմից նյութի մատուցում, ուսանողների բանավոր քննարկումներ և գործնական կիրառումներ։ Ուսուցման համապատասխան մեթոդի ընտրությունը կախված է մանկավարժի փորձառությունից, լսարանի չափից, գնահատման անհրաժեշտ տեսակից և ուսանողների անհատական կարիքներից։

### **Աշխատաժողովները՝ որպես դասավանդումը բարելավելու մեթոդ**

Դասավանդումը բարելավելու նպատակով անցկացվում են բազմապիսի հարցերի քննարկմանը վերաբերող աշխատաժողովներ։

- դասավանդման հմտությունների զարգացում
- ուսանողամետ ուսուցման նպատակների ձևավորում
- ուսուցման նպատակների կապը գնահատման մեթոդների հետ

- ուսուցման ոլորտների ըմբռնում, ներառյալ՝ իմացական, հոգեշարժային և զգայական ասպարեզները
- ուսուցման նպատակների և արդյունքների սահմանում
- ուսումնական պլանի մշակում
- ուսանողի դասավանդման ոձերի տարրերակում
- գործակցային ուսուցման ռազմավարության օգտագործում
- խնդիրների լուծման մոտեցումների միասնականացում
- օրինակի ուսումնասիրումը՝ որպես ուսուցման մեթոդ

### **Դասավանդման և ուսուցման արդյունքներ**

Դասավանդման վարպետության ձևավորումը փաստում են այնպիսի դրական արդյունքներ, ինչպիսիք են.

- նոր ուսումնական պլանի նյութերի մշակում և ընդունում,
- առաջավոր գիտելիքների և տեղեկատվության ինտենսիվ փոխանցում,
- դասախոսների և ուսանողների՝ անզերենի իմացության բարելավում,
- դասախոսների կրթական մակարդակի բարձրացում,
- ուսանողների բարելավված կարողություններ,
- ուսանողների կողմից չափանիշ հանդիսացող ավելի շատ նյութերի սերտում,
- ուսումնական առարկայի կրկնության նվազեցում,
- դուրս մնացող ուսանողների քանակի նվազեցում
- առավել կայուն կրթական ծրագրեր:

### **Աշխատաժողովների թեմաներ. դասավանդման և ուսուցման մեթոդներ**

- Կրեդիտային համակարգի համառոտ ուրվագիծ (նպատակները, կրթական աստիճանի պլանավորումը, կրեդիտների քանակը, կարողությունները, որակի ապահովումը, ուսումնական առարկաների կառուցվածքը):
- Կարողությունների վրա հիմնված դասավանդման և ուսուցման մեթոդներ (Բլումի իմացական ասպարեզ, Կրաքիոլի զգայական ասպարեզ, Միմփսոնի հոգեշարժային ասպարեզ):

- 3) Ուսանողամետ ուսուցման նպատակներ կազմելը (նպատակը, տարրերը, կապը գնահատման մեթոդի հետ, գործադրման բայեր):
- 4) Ուսանողամետ ուսուցման նպատակներ կազմելը (ստորին կարգ. գիտելիք, ընկալում, կիրառում):
- 5) Ուսանողամետ ուսուցման նպատակներ կազմելը (վերին կարգ. վերլուծություն, համադրում, գնահատում):
- 6) Ուսանողամետ ուսուցման նպատակներ կազմելը (զգայական. ընդունում, պատասխանում, արժեքավորում, դասակարգում՝ ըստ բարդության աստիճանի)
- 7) Ուսանողամետ ուսուցման նպատակներ կազմելը (հոգեշարժային ընկալում, ազդեցություն, ուղղորդվող պատասխան, բարդ բացահայտ պատասխան):
- 8) Լսարանային ուսուցման մեթոդների ընտրություն (մեծ խումբ, փոքր խումբ, անհատական մեթոդներ):
- 9) Լսարանային ուսուցման մեթոդների ընտրություն (ներկայացման մեթոդներ, ուսանողների բանավոր փոխգործողության մեթոդներ, կիրառման մեթոդներ):
- 10) Պարապմունքի պլանի մշակում (նպատակը, ձևը, ուսուցման և դասավանդման կազմակերպումը):
- 11) Ուսանողամետ դասապլանի մշակում (ստորին կարգ. գիտելիք, ընկալում, կիրառում):
- 12) Դասի ուսանողամետ պլանի մշակում (վերին կարգ. վերլուծություն, համադրում, գնահատում):
- 13) Հարցադրման օգտագործումը որպես դասավանդման մեթոդ (չուղղորդվող քննարկում, ուղղորդվող քննարկում):
- 14) Ցուցադրման-ներկայացման մեթոդի օգտագործում (ցուցադրությունների տեսակները և եղանակները, ցուցադրումների մեթոդաբանությունը):
- 15) Կոնկրետ դեպքի ուսումնասիրության մեթոդի օգտագործումը (դեպքերի տեսակները, ներկայացնելու ձևը, դեպքերի մեթոդաբանություններ):
- 16) Ընթերցանության և ինքնակրթության մեթոդներ:

- 17) Գործնական կիրառման մեթոդներ (ցուցադրություններ, գիտագործնական գործուղումներ, անհատական նախագծեր, փորձարկումներ):
- 18) Դասավանդման մեթոդների ընտրություն և օգտագործում:
- 19) Դասավանդման ռեսուրսների ընտրություն և օգտագործում (ինտերնետ, մասնագիտական ամսագրեր և պարբերականներ, ուսումնաօժանդակ նյութեր, մոդելներ, մասնագիտական ընկերակցություններ):
- 20) Ուսանողի գնահատման և գնահատականների նշանակման մեթոդի մշակում:
- 21) Լսարանային տեստերի մշակում (ամրագրված պատասխան, ուսանողի ներկայացրած պատասխան):
- 22) Լսարանային տեստերի գնահատում (նորմերի կիրառում՝ ի հակակշիռ չափանիշների կիրառման):
- 23) Լսարանային տեստերի արդյունավետության գնահատում (ուսուցման արդյունքների գնահատում, տեստերի մասին վիճակքություն, տեստավորման սխաններ):
- 24) Դասախոսի գնահատման մեթոդի մշակում (ուսանողների գնահատականներ, գործընկերների գնահատականներ, ինքնազնահատականներ, դասավանդման խորագրեր, փաթեթներ):

### **Ամփոփում**

Համալսարանի բարձր վարկանիշի համար կարևոր նշանակություն ունի որակյալ ուսացումը: Ռողենշայնն ու Ֆուրստը (1973 թ.) պարզել են, որ “լավ” դասախոսները ցուցաբերում են վարքագիր մի շարք հատկանիշներ. բազմազանություն, խանդակառություն, գործարար ոճի կառավարում, նպատակին ուղղված մոտեցումներ, հումորի տեղին օգտագործում, ուսանողներին չափանիշային նյութեր սերտելու հնարավորության ընձեռում, ուսանողների գաղափարների օգտագործում, ուսանողներին քննադատելու սահմանափակում, կառուցողական մեկնաբանությունների օգտագործում, փորձնական հարցերի շարունակական կիրառում:

Դասավանդման համապատասխան մեթոդի և նյութերի ընտրությունը կախված է դասախոսի փորձառությունից, լսարանի չափից, գնահատման անհրաժեշտ տեսակից և ուսանողների անհատական կարիքներից:

Դասավանդման մեթոդները դասակարգվում են երեք մեծ խմբերի՝ դասախոսի կողմից նյութի մատուցում, ուսանողների բանավոր փոխգործողություններ և գործնական կիրառումներ: Միայն այն դեպքում է խորհուրդ տրվում դասախոսություն կարդալ, եթե անհրաժեշտ է ներկայացնել սոսկ փաստեր, և եթե լսարանում ուսանողները շատ են: Գիտելիքի վրա հիմնված ավելի զլորակ հասարակությունում ուսանողներից ակնկալվում է վերլուծել, համարել և գնահատել իրական հիմնախնդիրները: Սա արդյունավետորեն է իրականանում, եթե օգտագործվում են կիրառման մեթոդներ՝ գործնական նախագծեր, օրինակի ուսումնասիրություն և փորձնական ուսուցում: Միևնույն ժամանակ բարձր մակարդակի զգայական ուսուցումը՝ արժևորումը, արժեքների բնորոշումը և դասակարգումը, նույնակա լավ է իրականացվում ուսուցման ակտիվ մեթոդների օգտագործման շնորհիվ, ներառյալ գործնական նախագծերը, կոնկրետ օրինակների ուսումնասիրությունը և փորձնական ուսուցումը: Այս ամենի առանցքը ուսանողի ներգրավվածությունն է:

Կոնկրետ նյութերի համար օգտվել “Դասավանդում և ուսուցում” բաժնից, հետևյալ հասցեով.  
<http://www.sauabologna.com/teachingandlearning.asp>

## **Գլուխ 7. Ուսանողների գնահատման մեթոդների և գնահատականների համակարգերի ընդունման ռազմավարություն**

Ոչինչ չի քայբայում որակն այնպես,  
ինչպես գնահատման և գնահատականների վատ համակարգը...

Բոլոնիայի գործընթացի էական մասն են կազմում ճիշտ գնահատման մեթոդներն ու գնահատականների համակարգերը: Գնահատումը մի միջոց է, որը նախանշում է ուսանողների առաջադիմության մակարդակը, գործընթացները կամ ծրագրերը, ինչպես նաև այն, թե ստացված արդյունքը որքանով է համապատասխանում կրթական նպատակներին: Այդուհանդեռձ, ուսանողի գնահատումը սահմանափակված է վարքագծով, որը մենք կարող ենք տեսնել կամ լսել, և սովորաբար այն լոկ ցանկալի վարքագծի ընտրանքն է: Հուսալի և արդյունավետ լինելու համար գնահատման օրինակը պետք է ներկայացուցչական լինի՝ տվյալ առարկայի շրջանակներում ուսանողի ունակությունների համար, ինչպես նաև քննության գործընթացում օգտագործվող միջոցը պետք է ի զորու լինի համապատասխան արդյունքի հանգեցնել:

### **Նպատակը**

Ուսանողի գնահատումն ավելին է, քան գնահատական նշանակելը: Բացի առաջադիմության որակը նախանշելուց ուսանողի գիտելիքները, հմտություններն ու մոտեցումները, գնահատումը սովորողի հետ հետադրած կապ է ապահովում որպես գործատուի համար որակի և ուսուցման հաջողության ցուցանիշ:

### **Առանձնահատկությունները**

Ուսանողի գնահատման մեթոդները պետք է ներառեն չորս առանձնահատկություն՝ պետք է լինեն տվյալ գնահատմանը համապատասխան, վստահելի, օբյեկտիվ և ըմբռնելի:

Համապատասխանությունն ուսանողի որոշակի չափանիշի՝ գիտելիքի, հմտության կամ մոտեցման չափումն է՝ ստուգելով հենց այն հատկանիշը, որի ստուգման համար և մշակվել է: Համապատասխանությունը կարող է ներառել բովանդակության, կառուցվածքի, և (կամ) կանխատեսման համապատասխանություն: Բովանդակության համապատասխանությունը չափում է նյութի և տեստի կետերի հարաբերակցությունը: Կառուցվածքի համապատասխանությունը չափում է տեստի հիմքում ընկած տեսական հենքը: Կանխատեսման համապատասխանությունը ապագա առաջադիմության՝ կամ հաջորդ առարկայի ուսուցման ժամանակ կամ աշխատանքի մոտավոր նախանշումն է:

Հուսալիությունը չափման այն միջոցն է, որը ժամանակի ընթացքում միշտ նույն արդյունքն է տալիս: Գնահատման միջոցի հուսալիությունը կիանգեցնի որոշակի առաջադիմության կայուն ստուգումների իրականացմանը:

Գնահատման օբյեկտիվությունը վերաբերում է անձնական մոտեցումից դուրս գնահատականի նշանակման կարողությանը: Գնահատողի կանխակալ կարծիքը չպետք է ազդի առաջադիմության գնահատականին: Ծուբրիկը գնահատման այնպիսի միջոց է, որը նպաստում է օբյեկտիվությանը:

Ըմբռնելիությունը դասավանդման նպատակներից բխող ամրողական գիտելիքի, հմտությունների կամ մոտեցման չափումների խումբ է: Ըմբռնելիությունը կախված է ներկայացնեցական ընտրանքից և տեստի մեծությունից:

Գնահատման մեթոդների միջոցով պետք է տարբերակվեն առաջադիմության մակարդակները: Գնահատման մեթոդները պետք է արդար լինեն՝ գնահատողի կանխակալ կարծիքից զերծ: Սա կարող է նվազագույնի հասցել ռազմավարական մի շարք մոտեցումների միջոցով՝ ներառյալ բուբրիկների և անանուն զմահատման օգտագործումը:

### Հիմնախնդիրներ

Գնահատմանը վերաբերող հարցերն են. 1) ե՞րբ պետք է գնահատումը իրականանա, 2) որքա՞ն հաճախ է պետք

“ընտրանքը” կազմել և 3) ի՞նչ մեթոդներով պետք է ուսուցումը զնահատել:

### **Գնահատման համակարգը**

1. Ուսանողների գիտելիքների գնահատաման համակարգը պետք է ունենա զնահատման և նշագրման հստակ և հրապարակված չափանիշներ:
2. Գնահատման օգտագործվող սանդղակը պետք է հնարավորություն տա առանց դժվարության հաշվարկելու կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորները միևնույն ծրագրում ընդգրկված տարրեր ուսումնական ծանրաբերոնավճություն ունեցող ուսանողների առաջադիմությունները համեմատելու համար:
3. Գնահատման օգտագործվող սանդղակը պետք է հնարավորություն տա հաշվարկելու ուսանողի միջին որակական գնահատականը կիսամյակի ը ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման համար:
4. Գնահատումները կարող են կատարվել ինչպես թվային կամ տառային նշագրումով՝ տարրերակված գնահատականներով, այնպես էլ «ստուգված/յուրացված» սկզբունքով:
5. Գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (ստուգաք կամ տարրերակված գնահատում) անկախ բոլոր տեսակի գնահատումներն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ առանձին քննաշրջաններում կազմակերպվող քննությունների օգնությամբ:

ՀՀ գիտության և կրթության նախարարություն (Բաժին 4.4., 2007)

Գնահատումը շարունակական գործընթաց է, սակայն այն հաճախ լավ չի ներկայացվում ուսանողին կամ գնահատականները հուսալի չեն լինում: Գնահատումը պետք է հիմնվի բազմակի չափումների վրա և ոչ թե մեկ վերջնական քննությամբ: Գնահատումը պետք է ավարտվի առարկայի կամ մողուլի հիմնական բաժնի ավարտին: Այն պետք է նոր վարքագծերի կիրառման փորձ հանդիսանա: Սակայն այն չպետք է երկար ժամանակ լիի դասերից: Ըստրանքը պետք է նաև ժամանակի և բովանդակության ներկայացուցչություն ապահովի: Գնահատման մեթոդները պետք է համընկնեն ուսուցման նպատակներին: Օրինակ, եթե ուսուցման նպատակն է ձևավորել խնդիրների

լուծման հմտություն, ապա գնահատման միջոցը պետք է ստուգի այն կարևոր քայլերը, որոնք կիրառվում են տվյալ ասպարեզում. խնդրի վերհանում, համապատասխան գրականության ուսումնասիրություն, կիրառելի վարկածի ձևակերպում, վարկածի ստուգում, ստացված արդյունքների հիման վրա որոշման կայացում: Շատ գործատուներ այս գործնթացի կարևոր մաս են համարում որոշում կայացնելիս պատասխանատվություն կրելու հատկանիշը:

### **Գնահատման տեսակները**

Ուսուցման արդյունքների նպատակներից և կիրառումից բխում է գնահատման երկու լայն տեսակ: Ֆորմատիվ և սումատիվ գնահատումները օգտագործվում են որպես տարբեր նպատակներով ուսուցման նախատեսուավորման և հետտեստավորման չափումներ: Չափանիշի և նորմերի վրա հիմնված գնահատումների միջոցով ստուգում է առաջադիմությունն ըստ չափորոշի կամ ըստ խմբում մեկ անհատի առաջադիմությանը մյուսների համեմատ:

Ֆորմատիվ գանահատումը կիրառվում է ուսուցման որակի առումով ուսանողի և դասախոսի միջև հետադարձ կապ ապահովելու համար և սովորաբար իրականացվում է դասընթացի կամ ծրագրի ուսումնասիրության նախնական փուլում: Միաժամանակ ուսանողի համար այն համարվում է տարբեր տեսակի տեստեր հանձնելու գործնական փորձ: Ֆորմատիվ գանահատման արդյունքներն արժեքավոր են պլանավորման և փոփոխությունների իրականացման համար:

Մյուս կողմից՝ սումատիվ գնահատումը ուսուցման արդյունքների ստուգման միջոց է: Այն հիմնական մեթոդ է առարկայի գնահատականների սահմանման համար, սակայն կարող է նաև կիրառվել հետագա դասընթացներում փոփոխություններ մտցնելու համար:

Չափանիշի վրա հիմնված գնահատումը ստուգում է առաջադիմությունն ըստ սահմանված և ընդունված չափորոշի: Ուսանողը պետք է հասնի առաջադիմության այս մակարդակին,

որպեսզի տեսար հանձնած համարվի: Ուսանողի ստացած միավորները հաշվարկվում են ըստ չափանիշի և ոչ թե այլ ուսանողների ստացած միավորների համեմատ:

Նորմերի վրա հիմնված գնահատումը ցույց է տալիս, թե ուսանողի առաջադիմությունն ինչպես է համեմատվում իր համակուրսեցիների առաջադիմության հետ: Հաճախ այս մեթոդում թվաբանական միջինն ստացվում է ընդհանուր նշանակված գնահատականներից՝ ստանդարտ շեղման հիման վրա: ECTS անցողիկ գնահատականները հետևյալն են՝ A-B-C-D-E-FX-F. A գնահատականները շնորհվում են ամենալավ առաջադիմություն ցուցաբերած 10%-ին, B-երը՝ հաջորդ 25%-ին, C-երը՝ հաջորդ 30%-ին, D-երը՝ հաջորդ 25%-ին և E-երը՝ հաջորդ 10%-ին: Fx և F գնահատականները նշանակում են, որ աշխատանքը ձախողված է:

### **Ըստրման գործուներ**

Գնահատման մեթոդների ընտրությունը պետք է կատարվի՝ ելնելով որոշման կարևորությունից, դրա կատարման համար պահանջվող ժամանակահատվածից, և գնահատման իրականացման համար անհրաժեշտ նյութական ծախսերից: Գնահատման մեթոդների ընտրությունը միշտ էլ ենթադրում է փոխազդում՝ իդեալական տարբերակը գտնելու հարցում:

### **Դասընթացները՝ որպես ուսանողների գնահատման մեթոդների և նշագրման համակարգերի բարելավման մեթոդ**

Գնահատման և զանահատականների գերազանց համակարգի մշակումը բաղկացած է հետևյալ մասնիկների միասնականացված աշխատախմբերից:

- Փորմատիվ և սումատիվ մեթոդներ
- չափանիշի և նորմերի վրա հիմնված գնահատումներ
- վստահելիության, օբյեկտիվության և համապատասխանության ավելացման համար ոուրիշի կազմում
- տեսառավորման միջոցների ձևավորում
- անհատական և խմբային աշխատանքի գնահատում

- ուսանողների գնահատման համագործակցային ուսումնական իրադրությունում
- կրեդիտի քանակի և որակի հաշվարկում

### **Ուսանողների գնահատման մեթոդներ և գնահատականների համակարգեր**

Ուսանողների գնահատման մեթոդներն ու նշագրման համակարգերը վավերագրում են դրական արդյունքներ, որոնք ներառում են.

- ուսանողի ճշգրիտ գնահատում և գնահատականների նշանակում,
- նոր ուսումնական պլանի նյութերի մշակում և ընդունում,
- առաջընթաց և տեղեկատվության գիտելիքի փոխանակում,
- դասախոսների և ուսանողների կողմից անզերենի բարելավված կիրառում,
- ուսանողների բարելավված կարողություններ,
- ուսանողների համար չափանիշ հանդիսացող ավելի շատ նյութերի սերտում,
- տարբեր կրթական աստիճանների ծրագրերի միջև գիտելիքի փոխանակման բարելավված համակարգ
- ուսանողների գնահատման նոր մեթոդներ
- դասախոսների գնահատման նոր մեթոդներ
- դուրս մնացող ուսանողների քանակի նվազեցում
- առավելագույն կայուն կրթական ծրագրեր:

### **Աշխատաժողովների թեմաներ. ուսանողների գնահատման մեթոդներ և նշագրման համակարգեր**

- 1) Կրեդիտային համակարգի համառոտ նկարագիրը (նպատակները, աստիճանների պլանավորումը, կրեդիտների ծավալը, կարողությունները, որակի ապահովումը, ուսումնական առարկաների կառուցվածքը):
- 2) Կարողությունների վրա հիմնված դասավանդման և ուսուցման մեթոդներ (իմացական, զգայական, հոգեշարժային):

- 3) Առարկաների նկարագրերի մշակում (գիտելիքի օբյեկտներ, գիտելիքի տիրույթներ, կրեդիտների քանակ, տեսություն և կիրառություն):
- 4) Ուսանողների ուսուցման գնահատում (թարմացված է 2007թ. մայիսի 7-ին,  
<http://www.une.edu.au/tlc/staff/publications/assess-student-learning.pdf>):
- 5) “Ե՞րբ” և “ինչպե՞ս” գնահատելու ընտրությունը (թարմացված է 2007թ. մայիսի 7-ին,  
[http://www.umass.edu/oapa/oapa/publications/online\\_handbooks/course\\_based.pdf](http://www.umass.edu/oapa/oapa/publications/online_handbooks/course_based.pdf)):
- 6) Ուսանողների գնահատման և նշագրումների մշակում (ֆորմատիվ, ներլսարանային, մասնակցություն, գնահատման սանրդակ, առարկայի գնահատականներ):
- 7) Ուսուցման նպատակների կապակցում ուսանողների գնահատման հետ:
- 8) Ստորին կարգի իմացական տեստային հարցերի նմուշների մշակում (ըստ առարկայի):
- 9) Վերին կարգի իմացական տեստային հարցերի նմուշների մշակում (ըստ առարկայի):
- 10) Առանձին դեպքերում ուսանողի ուսուցման գնահատում (թարմացված է 2007թ. մայիսի 7-ին, from <http://www.une.edu.au/tlc/staff/publications/assess-student-learning.pdf>):
- 11) Ուսուցման գնահատումն ըստ միավորային համակարգի (օրինակներ, առավելություններ, ընդհանուր սխալներ):
- 12) Հետադարձ կապի օգտագործումը որպես գնահատման միջոց (տեսություն, արդյունավետ հետադարձ կապի առանձնահատկություններ, մեթոդներ):
- 13) Ուսանողի ուսուցման գնահատումը կիսամյակի ընթացքում (թարմացված է 2007թ. մայիսի 7-ին,  
<http://www.une.edu.au/tlc/staff/publications/assess-student-learning.pdf>):

- 14) 14) Լսարանային գանահատման արդյունքների մեկնաբանում և օգտառքում (թարմացված է 2007թ. մայիսի 7-ին, <http://www.une.edu.au/tlc/staff/publications/assess-student-learning.pdf>):
- 15) ՀՊԱՀ-ի շրջանավարտի կարողությունների սահմանում (Բոլոնիայի եռաստիճան. համակարգ՝ բակալավրի, մագիստրանտի և դոկտորի աստիճաններ):
- 16) ՀՊԱՀ-ի շրջանավարտի մասնագիտական կարողությունների սահմանում (Փակուլտետային վեց չափորոշիչներ):
- 17) Հավատարմագրում ըստ Բոլոնիայի գործնթացի վերանայման
- 18) Ուսանողների գնահատում. Դասախոսների ձեռնարկ (թարմացված է 2007թ. մայիսի 7-ին, <http://www.sasked.gov.sk.ca/docs/policy/studeval/index.html>):
- 19) Առարկայի/գործակարական գնահատման ձևաչափ, Ֆլորիդայի համալսարան, բժշկական ֆակուլտետ (թարմացված է 2007թ. մայիսի 7-ին, <http://www.med.ufl.edu/oea/cc/c&cevalassessmentform.html>):

### **Ամփոփում**

Բոլոնիայի գործնթացը հաստատում է բարձրագույն կրթության եվրոպական համակարգի մրցունակությունն ու համադրելիությունն ավելացնելու պատրաստակամությունը: Գնահատման և նշագրման ձիւս գործող համակարգը կարևոր նշանակություն ունի որակի, ուսանողների շարժունության և միասնականացված կոչումների շնորհման չափորոշիչների ձևավորման գործում:

Եթե որակյալ կրթությունն ավելացնում է ուսանողի գիտելիքները, հմտություններն ու մոտեցումները, որոնք կարևոր են այս արագ փոփոխվող աշխարհում գործելու կարողության առումով, ապա հաջողությունը կախված է գնահատման և նշագրման ձիւս գործող համակարգից, որը պետք է լինի թափանցիկ, արդար, խիստ և արդյունավետ:

Կրթության գնահատումը համակարգված պարբերական գործընթաց է, որով ստուգվում է, թե անհատները, գործընթացներն ու ծրագրերը որքանով են համապատասխանում կրթական նպատակներին: Գնահատման համակարգերը ներառում են ֆորմատիվ և սումատիվ մեթոդներ: Գնահատականները նշանակում են՝ օգտագործելով թե՛ չափանիշի, և թե՛ նորմերի վրա հիմնված մոդելներ: Համալսարանի բարձր վարկանիշի համար կարևոր է ունենալ ուսանողների գնահատման և նշագրումների համապատասխան և վստահելի համակարգեր:

Գնահատումը պետք է հիմնվի բազմակի չափումների և ոչ մեկ դիտարկման վրա: Չափման միջոցը պետք է արտացոլի ուսանողի մտահորիզոնի սահմանները և սերտածի բովանդակության խորության: Գնահատման մեթոդները պետք է համապատասխանի ուսուցման նպատակներին:

Գլոբալացված հասարակարգում կարևոր է մտապահելու և “անզիր” սովորելու մեթոդը փոխարինել բարդ խնդիրներ լուծելու համար գիտելիքների ինտեգրումով, այն է՝ վերլուծություն, սինթեզ և գնահատում: Պետք է ստուգվեն ուսանողի ձեռք բերած հմտությունները: Լրացնից տեղեկությունների համար օգտվել “Գնահատման մեթոդներ” բաժնից, հետևյալ հասցեով.

<http://www.sauabologna.com/evaluationmethods.asp>

## **Գլուխ 8. Առարկայական ծրագիր մշակելու ուսումավարություն**

Առարկայական ծրագրերը զիտելիքի վրա  
հիմնված հասարակարգի հենասյուներն են...

Բոլոնիայի գործընթացը պատրաստակամություն է արտահայտում դյուրընթեռնելի և համադրելի կոչումների համակարգ, հավասարաթեք կրեդիտների համակարգ և ուսուցման արդյունքների փոխանցման պարզ մեթոդ։ Այս արդյունքների փոխանցման հիմնական միջոցները առարկայական ծրագրերն ու այն գործընթացներն են, որոնք կիրառվում են դրանք չափելու համար։

Առարկայական ծրագրերն օգտակար են վարչական աշխատողի, հավատարմագրման մասնագետի, դասախոսի կամ ուսանողի համար։ Ցուրաքանչյուր խմբի համար շահեկան է, որ առարկայի դասավանդումը կազմակերպված լինի ամբողջական, մանրամասն և ճշգրիտ կերպով։ Որպես առարկայի ուսուցման ճշգրիտ համարուտագիր, առարկայական ծրագիրը յուրատեսակ փոխըմբռնման հուշագիր է դասախոսի և ուսանողի միջև և սովորելու պարտականությունը արդյունավետորեն փոխանցում է ուսանողին։

Ուսուցման այս “Ճանապարհային քարտեզը” օգտակար է նաև շարժունության առումով՝ համալսարանների և կրթական աստիճանների համեմատության համար։

**Առարկայական ծրագրի՝ ութ բաժիններն են.**

- 1) Առարկայի բնութագիր՝՝ ներառյալ անվանումը, նկարագրությունը, նպատակները, կրեդիտները և նախապայմանները
- 2) Առարկայի դասավանդման մեթոդը՝ ներառյալ հաճախումները, մասնակցությունը պարապմունքներին, բաց թողած քննությունները և լաբորատոր աշխատանքին՝ վերաբերող անվտանգության հարցերը

- 3) Գնահատման մեթոդները՝ ներառյալ քննությունների տեսակները
- 4) Գնահատման չափորոշչիներն ու քաղաքականությունը
- 5) Դասավանդողի մասին տեղեկատվություն
- 6) Պահանջվող տեքստերը, հղումներն ու գրականությունը
- 7) Լրացուցիչ ընթերցանություն և այլ գործողություններ
- 8) Ուսանողներին աջակցելու ծառայություններ

### **Դասընթացներ օգտագործումը որպես առարկայական ծրագրի մշակման մեթոդ**

Առարկայական ծրագրերի մշակման և կառավարման համակարգը բաղկացած է հետևյալ միասնականացված գործառություններից.

- ուսանողի գիտելիքների ճշգրիտ գնահատում և գնահատականների նշանակում,
- նոր ուսումնական պլանի նյութերի մշակում և ընդունում,
- նորագույն գիտելիքների և տեղեկատվության փոխանակում,
- դասախոսների և ուսանողների կողմից անզերենի բարելավված իմացություն,
- դասախոսների կողմից գիտելիքների պաշարի նորացում,
- ուսանողների բարելավված կարողություններ,
- ուսանողների կողմից ավելի մեծ ծավալի նյութերի սերտում,
- տարրեր աստիճանների ծրագրերի միջև գիտելիքի փոխանակման բարելավված համակարգ,
- դասընթացի կրկնության հաճախականության կրծատում,
- առավել կայուն կրթական ծրագրեր

### **Առարկայական ծրագրի**

Առարկայական ծրագրի մշակման վերաբերյալ աշխատաժողովները կարձանագրեն դրական արդյունքներ, ներառյալ.

- շրջանավարտի իմացության և գործողությունների նկարագրում,
- առարկայի ձեզրիտ նկարագրության մշակում,
- կոնկրետ առարկաների կրեդիտների ծավալի որոշում
- ուսանողների զնահատման և զնահատականների նշագրման գործընթացների նկարագրություն,
- առարկայական ծրագրի օրինակի մշակում:

### **Աշխատաժողովների թեմաներ. առարկայական ծրագրի մշակում**

- 1) Կրեդիտային համակարգի համառոտ նկարագիր (նպատակները, կրթական աստիճանների պլանավորումը, կրեդիտների ծավալը, կարողությունները, որակի ապահովումը, ուսումնական առարկաների կառուցվածքը):
- 2) Կրթական աստիճանների պլանավորում (շրջանակները, կրեդիտների ծավալը, կրեդիտների որակը, դիպլոմի հավելված),  
<http://ec.europa.eu/education/programmes/socrates/ects/doc/example4.pdf>  
[http://ec.europa.eu/education/policies/rec\\_qual/recognition/diploma\\_en.html](http://ec.europa.eu/education/policies/rec_qual/recognition/diploma_en.html)
- 3) Ակնկալիքներ համալսարանի շրջանավարտներից ըստ մասնագիտության:
- 4) Առարկայական ծրագրի մշակման Թայլերի մոդելը (նպատակը, փորձը, փորձի կազմակերպումը, պարզել՝ արդյոք նպատակը հասանելի է եղել, թէ՞ ոչ):
- 5) Բակալավրի կոչման համար գիտելիքների բազայի կուտակում և ստուգում:
- 6) Ուսումնական պլանի բովանդակությունը, ծավալը, հաջորդականությունը, շարունակականությունը և հաշվեկշիռը:
- 7) Ուսումնական պլանի նպատակների և խնդիրների սահմանում (համալսարանի հիմնական ուղղվածությունը,

- ֆակուլտետի հիմնական ուղղվածությունը և  
մասնագիտական առարկաները):
- 8) Կարողությունների վրա հիմնված դասավանդման և  
ուսուցման մեթոդներ (իմացական, զգայական,  
հոգեշարժային):
  - 9) Առարկայի նկարագրության մշակումը (հիմնական  
տարրերը, կրեդիտների ծավալը, տեսություն և  
կիրառություն):
  - 10) Առարկայական ծրագրերի և առարկաների տեղեկագրերի  
մշակում  
(<http://universitysenate.syr.edu/curricula/writing.html> //  
<http://tamu.edu/cte>):
  - 11) Առարկայական ծրագրերի մշակում (հիմնական  
բաղադրիչները. անվանում, նկարագրություն,  
նպատակներ, պահանջվող նյութեր, գնահատման  
մեթոդաբանություն, հաճախման քաղաքականություն,  
հանձնարարություններ, գնահատման սանդղակ,  
գնահատման չափանիշներ, OSU AGED 3103:  
Գյուղատնտեսական կրթության ուսուցման հիմնատարրեր  
և մոտեցումներ):
  - 12) Ուսանողների գնահատման և գնահատականների  
սխեմաների մշակում (ֆորմատիվ, ներլսարանային,  
մասնակցային, գնահատման սանդղակ, առարկայի  
գնահատականներ):
  - 13) Ուսուցման ռեսուրսների ընտրություն և օգտագործում  
(ինտերնետ, ամսագրեր և պարբերականներ,  
ուսումնաօժանդակ նյութեր, մոդելներ, մասնագիտական  
ընկերակցություններ):

### **Ամփոփում**

Առարկայական ծրագիրը եռագործառութային փաստաթուղթ  
է. ուսանողին է հաղորդում առարկայի դասավանդման  
շրջանակները, գործնքացներն ու գործողությունները,  
դասախոսների համար իմաստալից ուսուցում կազմակերպելու և

հաջորդականություն ապահովելու միջոց է ծառայում, և համարվում է համալսարանի ղեկավարների և շահառու խմբերի միջև առարկաների և բովանդակության փոխանցման միջոց:

Յուրաքնչյուր համալսարան պետք է ընդունի առարկայական ծրագրի ստանդարտացված ձևաչափ, որը կամրագրի Բոլոնիայի գործընթացի չափանիշները:

Լրացուցիչ տեղեկությունների համար օգտվել “Առարկայական ծրագրեր” բաժնից հետևյալ հասցեով.  
<http://www.sauabologna.com/coursesyllabi.asp>

## **Գլուխ 9. Ուսումնական պլան և առարկաներ մշակելու ռազմավարություն**

Ուսումնական պլանը համարվում է “Ճանապարհային քարտեզ” գիտելիքի վրա հիմնված հասարակությունում...

Իսկ առարկաները ուսումնական պլանի  
“Ճանապարհային նշագրումներն” են ...

Ուսումնական պլանը առարկաների՝ ուսուցման արդյունքների միատարր շղթա է: Առանձին առարկան, որը երբեմն կոչվում է մոդուլ, ուսուցման արդյունքների հաջորդականություն է, որը վերաբերում է հիմնական նյութին, խնդրին կամ հարցին: Փոխլրացնող առարկաների և դրանց հետ կապված փորձառությունների շարքը կազմում է ուսումնական պլան:

### **Դասընթացները և կրթական մոդուլները**

1. Մեծածավալ դասընթացները կարող են բաժանվել առանձին կրթական մոդուլների: Դասընթացների մոդուլացումը կատարվում է՝ ելնելով նվազագույն կիսամյակների ընթացքում դրանք ավարտելու սկզբունքից:
2. Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց բնույթով բաժանվում են 3 հիմնական խմբերի՝
  - ա) պարտադիր դասընթացներ, որոնք յուրացվում են սահմանված կիսամյակներում
  - բ) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ընտրում է ուսանողը՝ պահպանելով դրանց նախապայմանները
  - գ/ ընտրովի դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամբարգրված, այնպես էլ ազատ:

ՀՀ Գիտության և կրթության նախարարություն /Բաժին 5.2, 2007/

Բոլոնիայի գործընթացն ուսումնական պլանի խնդիրների հանդեպ դրսեռում է մեկ այլ վերաբերմունք “ուսուցակենտրոն” սխեմայից անցում կատարելով դեպի “ուսումնակենտրոն” սխեմա, այսինքն “դասավանդումից և ժամանակից” դեպի “ուսուցում և արդյունքներ”. “լսարանային դասախոսությունների ժամերից”

դեպի “ուսանողների աշխատանքային ծանրաբերոնավծություն”, այլ կերպ ասած՝ “միայն ակադեմիականից” դեպի “ակադեմիական և աշխատանքի ընդունվելու հնարավորություն”:

Ոմանք ասում են, որ դա մտածելակերպի արմատական փոփոխություն է:

Համալսարանի ուսումնական պլանի մշակումը ներառում է պլանավորողների և շահառուների մեծ խումբ՝ ներառյալ համալսարանի դասախոսներ, վարչական աշխատողներ, ուսանողներ և շրջանավարտներ, արտադրության դեկավարներ և պետական մակարդակով քաղաքական որոշում կայացնողներ. բոլոր նրանց, ով կշահի որակյալ համալսարանական ուսուցման, հետազոտության և գիտասփյուր ծրագրերից: Ուսումնական պլանի մշակումը պետք է ներառի երեք ոլորտ. 1) համալսարանական հեռանկարներ, 2) առանձին առարկային վերաբերող հեռանկարներ և 3) ուսանողական հեռանկարներ:

Ուսումնական պլանը “ստանդարտացված” է:

Ֆիգելի (2006 թ.) հիմնավորմամբ, “Եվրոպական բարձրագույն կրթությունը տարաբնույթ է և պետք է մնա այդպիսին լեզուների, մշակույթի, համակարգերի և ավանդույթների տեսանկյունից: Միևնույն ժամանակ մենք տարբեր ազգային համակարգերի միջև բավարար աստիճանի մրցունակության կարիք ունենք: Սա բացարձակապես անհրաժեշտ է, եթե մենք ուզում ենք ընտրության և շարժունության տեսանկյունից հնարավորություններ ստեղծել մեր քաղաքացիների համար” (էջ 6-7): Միևնույն ժամանակ եվրոպական հասարակությունը (2007 թ.) բազմազանություն մտցրեց ուսումնական պլանում. “...առարկաների, ուսուցման մեթոդների բազմազանությունը և ներգրավված անձանց ընտրության ազատությունն այն հիմնական հատկանիշներն ու արժեքավոր կողմերն են, որոնք պետք է պահպանել” (էջ 1):

Ուսումնական պլանի և գիտական աստիճանների խնդիրն այլևս մեկ համալսարանի կամ մեկ կրթական աստիճանի հարց չէ: Աստիճանաբար աճում են համատեղ կրթական աստիճանների մշակումը և համալրումը ուսանողների շարժունության և համալսարանների համագործակցության միջոցով: Ուսուցումը

դիտվում է որպես հարատև գործընթաց և ոչ թե կրթական աստիճան ձեռքբերելու կարգատև միջոց: Պրահայի կոմյունիկեյում (2001 թ.) կրթության նախարարները կոչ արեցին, որ բարձրագույն կրթության ոլորտը “բոլոր մակարդակներում ավելացնի եվրոպական բովանդակությամբ, հակվածությամբ և կազմակերպական մեթոդներ՝ մոդուլների, առարկաների և ուսումնական պլանների մշակումը, մասնավորապես այն մոդուլները, առարկաները և ուսումնական պլանները, որոնք ընդհանուր են տարբեր երկրների հաստատությունների համար և առաջնորդում են դեպի համատեղ կրթական աստիճանի ձանաշմանը” (Էջ 2):

### **1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանների նպատակն ու արդյունքները**

Բոլոնիայի գործընթացն ընդունել է եռասաստիճան համակարգ, որտեղ առաջին աստիճանի համար պահանջվում է 3-4 տարի տևողությամբ կրթություն և մոտ 180-240 ECTS կրեդիտներ: Մի շարք եվրոպական երկրներ օրենքով սահմանել են, որ ուսանողների համար ուսումնական տարին ունի 1500-1800 ժամյա աշխատանքային ծանրաբերունավծություն: Երկրորդ կրթական աստիճանի համար պահանջվում է 1-2 տարի տևողությամբ կրթություն և մոտ 90-120 ECTS կրեդիտներ՝ երկրորդ կրթական աստիճանի մակարդակում առնվազն 60 կրեդիտով: Երրորդ կրթական աստիճանը սահմանված կրնկրետ տևողություն կամ նախանշված ECTS կրեդիտներ չի պահանջում:

Որակավորումներ շնորհելու խնդրի վերաբերյալ ձևավորված Բոլոնիայի աշխատախումբը (2004 թ.) հաստատեց, որ “գիտական առաջին աստիճան ավարտածի որակավորում շնորհվում է այն ուսանողներին, ովքեր.

- Հիմնվելով միջնակարգ կրթության ընթացքում ձեռքբերված գիտելիքների վրա՝ ցուցաբերել են տվյալ ուսուցման ոլորտում իմացություն և գիտելիքների առկայություն և ներկայումս գտնվում են այն մակարդակի վրա, որը նրանց հասու են այն գիտելիքները, որոնք նրանք կստանային ընտրված ուսման ոլորտում առաջին

փուլի ավարտից հետո՝ թեև առաջմ կարիք ունեն օգտվելու խորացված և ժամանակակից դասագրքերից:

• Կիրառելով ձեռքբերված գիտելիքներն ու ընդունակությունները՝ կարող են պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերեն իրենց աշխատանքի հանդեպ. ինչպես նաև ցուցադրեն իրենց կարողությունները տվյալ ուսուցման ոլորտում իրենց փաստարկները պաշտպանելու և ինդիքներին լուծում տալու միջոցով:

• Կարող են կուտակել և մեկնաբանել համապատասխան տվյալները (սովորաբար իրենց ուսուցման ոլորտում)՝ սոցիալական, գիտական կամ էթիկայի ինդիքները արտացոլող դատողություններ կատարելու նպատակով:

• Կարող են և մասնագիտական, և սիրողական լսարանին տեղեկատվություն, մտքեր, ինդիքներ և լուծումներ հաղորդել:

• Զեռք են բերել այնպիսի գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են հետազայում ուսումը շարունակելու ավելի բարձր մակարդակում” (Է.76-77):

Այնուհետև, որակավորումներ շնորհելու խնդրի վերաբերյալ Բոլոնիայի աշխատախումբը հայտարարեց, որ “Երկրորդ կրթական աստիճանն ավարտածի որակավորում շնորհվում է այն ուսանողներին, ովքեր.

• Հիմնվելով առաջին կրթական աստիճանում ձեռքբերված գիտելիքների վրա՝ ցուցադրել են գիտելիքների և ընդունակության առկայություն, որը հաճախ հետազոտություն կատարելու ընթացքում հիմք է հանդիսանում և հնարավորություն է ընձեռում յուրօրինակություն ցուցաբերել գաղափարները զարգացնելիս կամ կիրառելիս:

• Կարող են կիրառել իրենց գիտելիքները, ունակությունները և ինդիքներին լուծումներ տալու հմտությունները նոր կամ անծանոթ ոլորտներում, որոնք վերաբերվում են նրանց ուսուցման ոլորտին:

- Գիտելիքները միասնականացնելու և խրթին խնդիրների լուծելու, ինչպես նաև անավարտ կամ սահմանափակ տեղեկատվությամբ դատողություններ ձևավորելու կարողություն ունեն, որը ներառում է գիտելիքի և դատողությունների կիրառման կապակցումը սոցիալական և եթիկայի հետ առնչվող խնդիրների հետ:
- Կարող են մասնագիտական և սիրողական լսարանին հստակորեն հաղորդել իրենց եզրակացությունները և դրանց հիմքում գտնվող գիտելիքն ու տեսակետները:
- Զեռք են բերել այնպիսի գիտելիքներ, որոնք հնարավորություն կտան նրանց ուսումը շարունակել առավել ինքնուրույն կերպով (Էջ 77):

Վերջապես, որակավորումներ շնորհելու խնդրի վերաբերյալ ձևավորված Բոլոնիայի աշխատախումբը հայտարարեց, որ “Երրորդ կրթական աստիճանի որակավորում շնորհվում է այն ուսանողներին, որոնք

- Ուսուցման ոլորտում և դրան առնչվող հետազոտության մեթոդների հմտություններում վարպետացման համակարգված ըմբռնում են ցուցաբերել:
- Գիտական ազնվությամբ հետազոտություն ընկալելու, նախագծելու և վերամշակելու կարողություն են ցուցաբերել:
- Ներդրում են կատարել իրենց ինքնատիպ հետազոտությամբ, որն ընդլայնում է գիտելիքի սահմանները հիմնական աշխատանք մշակելով, որոնց մի մասը արժեվորվում են ազգային կամ միջազգային հրատարակումների ցանկը:
- Ունակ են նոր և խրթին մտքերի քննադատական վերլուծություն կատարելու, գնահատելու և համադրելու:
- Կարող են իրենց գործընկերների, գիտական լայն հանրության և հասարակության հետ հաղորդակցվել իրենց մասնագիտական վարպետության ոլորտների վերաբերյալ:
- Գիտելիքի վրա հիմնված հասարակությունում իրենցից կարելի է ակնկալել, որ կարողություն ունենան խթանելու ակադեմիական և մասնագիտական համատեքսում

տեխնոլոգիական, սոցիալական կամ մշակութային առաջընթաց” (Էջ 77-78):

### **Ուսումնական պլանի մշակման ընդհանուր մողել**

Թայլերը (1949 թ.) չորս հենքային հարցերի միջոցով մշակել է ուսումնական պլան կազմելու և գնահատելու կառուցվածք:

- 1) Կրթական ինչ նպատակներ է հետապնդում հաստատությունը:
- 2) Ինչպես պետք է այս նպատակների ձեռքբերման համար օգտակար ուսուցման փորձը ընտրվի:
- 3) Ինչպես պետք է ուսուցման փորձառությունը կազմակերպվի, որպեսզի դասավանդումն արդյունավետ լինի:
- 4) Ինչպես պետք է ուսուցման փորձառության արդյունավետությունը գնահատվի:

Այս հարցերն այսօր ել մնում են արդիական: Գուցե իր ժամանակից առաջ անցած Թայլերը ուսուցումը բնորոշում էր որպես ուսանողի նախաձեռնությամբ իրականացվող գործընթաց, նշելով, որ “կարևորն այն է, թե ինքը [ուսանողն] ինչ է անում սովորելու համար, այլ ոչ թե այն, թե դասախոսն ինչ է անում”(Էջ 63): Սա է Բոլոնիայի գործընթացի մոտեցումը:

### **Թյունինգի մողել**

Թյունինգը (2006թ.) առաջարկել է մեկ հաստատության կողմից կամ համատեղ կրթական աստիճանների ուսումնական պլանի նախագծման, իրականացման և դասավանդման մողել: Որպես առարկայական ծրագրի նախագծման հիմնական պայման սահմանվել են առաջին քայլեր հանդիսացող հինգ հարցեր:

- Արդյո՞ք հասարակական պահանջ կա նման ծրագրի համար:
- Այլյո՞ք այդ անհրաժեշտությունը շահառուների՝ գործառուների, մասնագետների և մասնագիտական մարմինների, հետ խորհրդակցության հետևանք:

- Այդո՞ք ծրագրի հանդեպ բավականաշափ ուշադրություն է դարձվում ակադեմիական տեսանկյունից:
- Այդո՞ք ընդհանուր տեղեկատվական աղբուրներ նախանշվել են:
- Այդո՞ք հասանելի են ծրագրի համար անհրաժեշտ ուսուրաները:

Թյունինգը (2006թ.) նկատել է, որ համատեղ աստիճան շնորհող ծրագրերի համար առկա են չորս լրացուցիչ հարցեր.

- Այդո՞ք բոլոր ներգրավված հաստատությունները պատրաստակամություն են ցուցաբերվում:
- Այդո՞ք առկա է պաշտոնական համաձայնության հուշագիր կամ ուսումավարական միավորում:
- Այդո՞ք բավարար երաշխիքներ կան, որպեսզի ծրագիրը օրինականորեն ճանաչվի բոլոր համագործակցող երկրների կողմից:
- Այդո՞ք որևէ համաձանություն կա ծրագրի տևողության վերաբերյալ ECTS կրեդիտների առումով:

#### **Ուսումնական գործնքացի և դասընթացների ժամանակացույցը**

1. Բուհը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում հրապարակում է /ուսումնական տարվա սկզբի կայքում տեղադրված էլեկտրոնային տարբերակի տեսքով/ տվյալ տարվա ուսումնական օրացույցը /ուսումնական գործնքացի կազմակերպման ժամանակացույցը/ ըստ կիսամյակների, որտեղ ըստ օրերի նշվում են ուսուցման սկզբը և ավարտը, դասընթացներին գրանցման /եթե նախատեսվում է/ դրանց փոփոխությունների կատարման ժամկետները, քննաշրջանները և արձակուրդները:

2. Բուհը յուրաքանչյուր կիսամյակի համար վաղօրոք կազմում և հրապարակում է պարապմունքների դասացուցակը, իսկ դասընթացներին գրանցման գործառությի կիրարկման դեպքում՝ առաջադրվող բոլոր դասընթացների և քննությունների ժամանակացույցը, որտեղ բերվում է տեղեկատվություն դասընթացների կայացման վայրի, օրվա և դասի, դասախոսի, ընդգրկված ուսանողների թույլատրելի քանակների, քննությունների օրվա և այլնի վերաբերյալ:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն /2007, 5.4/

**Քայլեր ուստիմնական պլանների մշակման համար՝ 1-ին աստիճան**

Ուսումնական պլան մշակելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

- սահմանել առաջին կրթական աստիճանի անվանումն ու նպատակը,
  - սահմանել, թե շրջանավարտն ի՞նչ պետք է իմանա և կարողանա կատարել,
  - առարկաները դասակարգել ըստ անվանումների և նպատակին հասնելու համար անհրաժեշտ կրեդիտների ծավալի. հաճախ կոչվում է ուսուցման համաձայնագիր կամ կրթական աստիճանի պլան,
  - դիպլոմի այնպիսի միջուկի ձև մշակել, որը ներառված կլինին բոլոր առարկաները, կրեդիտների ծավալը, ստացած գնահատականները, ավարտման ամսաթիվը և շնորհված աստիճանը
  - մշակել պաշտոնական դիպլոմի ձև
  - մշակել դիպլոմի հավելված, որը կներառի դիպլոմի միջուկի բաղադրիչների նկարագրությունը:

**SWOT** ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ

- Բոլոնիայի գործընթացի մոդելի ուժեղ կողմերն են հաղորդակցությունը, համապատասխանությունն ու համարժեքությունը: Անհատներն ու կազմակերպությունները կարող են նայել ամբողջ պաշտոնական նամակագրությունը և հանգել ընդհանուր և միատեսակ կարծիքի:
  - Թույլ կողմն այն ջանքերի ծավալն է, որն անհրաժեշտ է՝ Բոլոնիայի գործընթացն ամբողջությամբ իրականացնելու համար և ուսումնական պլանները “համընդհանուր մի մոդելի” ստիպողաբար համապատասխանեցնելու միտումը:

- Հնարավորությունները ներառում են Եվրոպայի և աշխարհի երկրների մեծ մասի կողմից կրթական աստիճանի ընդունումը: Բոլոնիայի գործընթացն առաջարկում է ուսանողների շարժունություն և ուսուցման փաստագրված արդյունքներ, ինչպես նաև տրամադրում է բարձրաժեք ակադեմիական հմտություն:
- Բոլոնիայի գործընթացի իրականացման վտանգն այն է, որ կրթությունը կարող է իշնել սովորական սպառողական ապրանքի մակարդակի, որը կշեշտի տնտեսությունն ու արդյունավորությունը՝ արժեքի և արդյունավետության փոխարեն: Ինչպես և ցանկացած փոփոխության դեպքում չնախատեսված հետևանքները կարող են անակնկալի բերել:

### **Աստիճանի ուրվագիծ մշակելը**

Առաջարկվող յուրաքանչյուր աստիճան պետք է համապատասխանի համալսարանի դերին և առաքելությանը: Ծրագրի որակն ապահովելու համար անհրաժեշտ են նաև համապատասխան մանկավարժական ու ֆինանսական ռեսուրսներ:

Կրթական աստիճանը պետք է ներառի նպատակների նկարագրություն և ուսուցման արդյունքներ՝ ներառյալ ձեռք բերվող հիմնական և մասնագիտական կարողությունների նկարագրություն: Ուսուցման արդյունքները վերածվում են ուսումնական պլանի, որը տեղեկություն է ներառում բովանդակության և կառուցվածքի մասին: Ուսուցման արդյունքները հաջորդականությամբ ներկայացված են կրթական միավորների՝ առարկաների կամ մոդուլների տեսքով, որը համապատասխանում է համալսարանում իրականացվող դասավանդմանը:

Դասընթացները պետք է մշակվեն նյութի էության, սովորողի ունակությունների, առկա ռեսուրսների հիման վրա: Ուսումնական մեթոդներն ու նյութերը պետք է խնամքով ընտրվեն, ինչը կօպտիմալացնի ուսուցման գործընթացը: Ուսուցման

արդյունքները գնահատելու համար պետք է սահմանել գնահատման մեթոդներ՝ որակի ստուգման նպատակով:

### **Քայլեր դասընթացի մշակման համար**

Կրթական աստիճանի պլանի հիման վրա պետք է ընտրել աստիճանի համար կարևոր գիտելիքների, հմտությունների և մոտեցումների զարգացման եղանակ: Այդ եղանակը պետք է նաև համադրելի լինի համալսարանի աշխատանքային օրացույցի հետ: Սովորաբար առարկաները դասավանդվում են 17-շաբաթյա ժամանակահատվածում, իսկ մոդուլները կարող են դասավանդվել տարբեր ժամանակահատվածներում:

Առարկայի դասավանդման ճիշտ պլանը՝ ներառյալ ուսումնական պլանը, կօգնեն ուսանողներին հասնելու կրթական աստիճանի նպատակներին: Ուսանողների շահագրգությունն ու ներգրավվածությունը կարելի է բարձրացնել ուսուցման և գնահատման տարատեսակ միջոցների շնորհիվ: Դասընթացներն ուսանողների համար պետք է ապահովեն տեսությունը, համատեքստը և կիրառման հիմունքները.

- Սահմանել և հաջորդաբար ներկայացնել ուսուցման արդյունքները:
- Սահմանել նախապայման հանդիսացող գիտելիք, հմտություններ ու մոտեցումներ:
- Հաջորդաբար ներկայացնել ուսուցման համար իրականացվող գործողությունների շրջանակ:
- Ընտրել ուսուցման արդյունավետ մեթոդներ:

Ուսուցման մեթոդներն ու միջոցները կարող են ներառել

- Կոնկրետ օրինակների ուսումնասիրություն
- Ցուցադրություն
- Այցելություններ գործարաններ
- Ուղղորդված քննարկումներ
- Անհատական աշխատանք
- Դասախոսություն

- Քննարկումներ
- Ըսթերցումներ
- Անհատական ուսուցման մոդուլներ
- “Սոլյուտիյան” հարցադրումներ

Ուսուցման արդյունքները կարող են փաստվել գնահատման մի շաբթ մեթոդներով և գործիքներով.

Գնահատման գործիքներն են.

- Խմբային նախագծերը
- Անհատական նախագծերը
- Նպատակային տեստերը
- Տեստեր շարադրության տեսքով
- Հետազոտություն տեղական պայմաններում
- Կուրսային աշխատանքները
- Առաջադիմությունը
- Ներկայացումները
- Շաբաթական ստուգարքները

**Աշխատաժողովների կիրառումը որպես ուսումնական պլանի և առարկայական նյութերի մշակման մեթոդ**


Ուսումնական պլանի և առարկայական նյութերի լավագույն համակարգի մշակումը կազմակերպվում է՝ հաշվի առնելով հետևյալ տարրերը.

- Գիտելիքի և տեղեկատվության փոխանակման բարելավում
- Դասախոսների և ուսանողների անզերենի իմացության բարելավում
- Դասախոսների գիտակրթական մակարդակի բարձրացում
- Ուսանողների կարողությունների բարելավում
- Ուսանողների կողմից ավելի շատ չափանիշային նյութերի յուրացում
- Ուսումնական դասընթացի կրկնության նվազեցում
- Դուրս մնացող ուսանողների քանակի նվազեցում
- Կայուն կրթական ծրագրերի ավելացում

## Ուսումնական պլանի և դասընթացի մշակման արդյունքները

Ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի գերազանց համակարգի մշակումը կիհանգեցնի դրական արդյունքների, որոնք ներառում են.

### Թյունինգի որակի ապահովման դինամիկան



- Ուսումնական պլանի նախագծերի վերաձևում
- Ուսումնական պլանի նոր նյութերի մշակում և ընդունում
- Շահառուների ներգրավում ուսումնական պլանի մշակման գործընթացում

- Ուսումնական պլան մշակող հանձնաժողովների դերի և պարտականությունների սահմանում
- Անցում դեպի “ուսուցման արդյունք” մոդելը
- Ծրագրի գնահատման շարունակականությունը

**Աշխատաժողովների թեմաներ՝ ուսումնական պլանի և առարկայական նյութերի մշակում .**

1. Կրեդիտային համակարգի համառոտ նկարագիրը (նպատակներ, կրթական աստիճանների պլանավորում, կրեդիտների ծավալ, կարողություններ, որակի ապահովում, ուսումնական դասընթացների կառուցվածք, դիացումի հավելված):
2. 2010 թ. ուսումնական պլանի նկարագիրը, ամերիկյան մոդելի և բոլոնիայի նպատակները, շրջանակները, տարրերը, սոցիալական ուժը:
3. ՀՊԱՀ-ում տարբեր կրթական քաղաքականությունը ու դրա հարաբերակցությունը բոլոնիայի և ամերիկյան համալսարանների հետ (ո՞վ (ի՞նչ) ունի գերակայություն, ո՞րն է ինքնավարության չափը):
4. Ուսումնական պլանի վերաբերյալ որոշումների կայացման հիմնական կանոնների մշակումը, ՀՊԱՀ-ի, բոլոնիայի և ամերիկյան ստանդարտների հավասարակշռությունը:
5. Ուսումնական պլանի մշակման մոդել (նպատակ, փորձ, փորձառության կազմակերպում, ինչպես պարզել, թե արդյոք նպատակն իրականանալի է):
6. Բակալավրի աստիճանի համար հիմնարար գիտելիքի կուտակումն ու գնահատումը:
7. Ուսումնական պլանի բովանդակության, շրջանակների, հաջորդականության, շարունակականության և հավասարակշռության սահմանումը:
8. Ուսումնական պլանի նպատակների և խնդիրների սահմանումը (համալսարանի նպատակը, ֆակուլտետի նպատակը և կոնկրետ առարկաները):

9. կարողությունների վրա հիմնված ուսումնական պլանի հենքը (ըստ նորմերի կամ չափանիշների):
10. Ուսուցման փորձի ընտրության կոնկրետ գործողություններ
11. Ուսուցման պայմանագրերի մշակում
12. Ուսումնական պլան մշակող հանձնաժողովների (ամբիոններ, ֆակուլտետներ, համալսարանական խորհուրդներ և խորհրդակցական խմբեր) պարտականությունները:
13. Ուսումնական նյութերի սահմանում և մշակում (տեսության, համատեքստի և գործնական աշխատանքի միավորում):
14. Ուսումնական ռեսուրսների ընտրություն և օգտագործում (ինտենսուտ, ամսագրեր և պարբերականներ, ուսումնաօժանդակ նյութեր, մոդելներ, մասնագիտական միավորումներ):
15. Ուսումնական պլանի՝ որպես որակի հենքի, գնահատումը:
16. Ծրագրի գնահատման իրականացումը, ներքին և արտաքին ստուգումները:

### **Ամփոփում**

Ուսումնական պլանը կարևոր նշանակություն ունի Բոլոնիայի գործընթացի համար: Այն պլանավորում է ուսուցման պաշտոնական և ոչ պաշտոնական արդյունքները, այն է՝ մի շարք փոխվացնող առարկաներ և հարակից փորձ: Բոլոնիայի գործընթացը՝ ուսումնական պլանին վերաբերող խնդիրներում բոլորովին այլ տեսակի մտածողություն է ներմուծում՝ “դասավանդումից և լսարանային ժամանակից” անցում կատարելով դեպի “ուսուցում և արդյունքներ” մոտեցմանը:

Ուսումնական պլանի և առարկաների նախագծումը պետք է իրականանա համալսարանի կառուցվածքի ներսում և պետք է ներառի երեք ոլորտ. 1) համալսարանի հեռանկարներ, 2) առանձին առարկաներին վերաբերող հեռանկարներ, 3) ուսանողների հետ

կապված հեռանկարներ: Մշտապես որոշակի լարում է առկա “լավ գործող ընդհանուր կրթությունը”, “միջառարկայական կրթությունն” ու “մասնագիտական կրթությունը” հավասարակշռելու գործընթացում, որն անհրաժեշտ է կարիերայում հաջողության հասնելու և ընդհանուր առմամբ հասարակությանը ծառայելու համար: Ուսումնական պլանի նախագիծը պետք է զորացնի ուսանողների մտավոր, բարոյական և սոցիալական զարգացումը՝ ընձեռելով հիմնարար արժեքների հիման վրա եզրակացություններ անելու հնարավորություն:

Ուսումնական պլանի մշակման յոթ քայլերն են.

- սահմանել առաջին կրթակուլի աստիճանի անվանումն ու նպատակը,
- սահմանել թե շրջանավարտն ի՞նչ պետք է իմանա և կարողանա կատարել,
- առարկաները դասակարգել ըստ վերնագրերի և նպատակին հասնելու համար անհրաժեշտ կրեդիտների ծավալի. (հաճախ կոչվում է ուսուցման համաձայնագիր կամ կրթական աստիճանի պլան),
- դիպլոմի այնպիսի միջուկի մշակումը, որը կարտացոլի բոլոր առարկաների վերնագրերը, կրեդիտների ծավալը, ստացած գնահատականները, ավարտման ամսաթիվը և շնորհված աստիճանը,
- պաշտոնական դիպլոմի ձևի մշակում,
- պաշտոնական դիպլոմ,
- դիպլոմի հավելվածի մշակում, որը կներառի նկարագրություն դիպլոմի միջուկի բաղադրիչների վերաբերյալ:

Առարկայական դասընթացներն ուսումնական պլանի և աստիճանի պլանի տարրերն են: Դասընթացի մշակումը ներառում է.

1. Ուսուցման արդյունքների սահմանում և հաջորդաբար ներկայացում
2. Նախապայման հանդիսացող գիտելիքի, հմտությունների ու մոտեցումների սահմանում

Հաջորդաբար ներկայացնել ուսուցման համար իրականացվող գործողությունների շրջանակը

1. Ընտրել ուսուցման արդյունավետ մեթոդներ
2. Ընտրել գնահատման արդյունավետ մեթոդներ

Ուսումնական պլանի և առարկայի մշակումը դինամիկ գործընթաց է, որը շարունակաբար դիտարկում է նոր տեսություններ, համատեքստային նոր իրադրություններ և նոր կիրառություն: Ուսումնական պլանի էռթյան, ֆինանսավորման և կառավարման վերաբերյալ հիմնախնդիրները պետք է շարունակական լինեն, քանի որ կրթական աստիճանը ենթադրում է մուավոր խստապահանջության և մասնագիտական համապատասխանության միասնություն:

Լրացուցիչ տեղեկությունների համար օգտվել “Առարկայական նյութեր” քաժնից հետևյալ հասցեով.

<http://www.sauabologna.com/coursematerials.asp>

## **Գլուխ 10. Դիպլոմի միջուկի կառավարման համակարգի մշակման ռազմավարություն**

Դիպլոմի միջուկի կառավարման համակարգն անվտանգություն, ազնվություն և վստահություն ապահովելու հետ մեկտեղ պետք է ծցըրիտ, ընթեռնելի և համադրելի տվյալներ ներկայացնի...

Բոլոնիայի գործընթացի (1999 թ.) համար մեկ նպատակը կրթական աստիճանների դյուրընկալ և համադրելի համակարգի ընդունումն է: Դիպլոմի միջուկը և դիպլոմի հավելվածը համարվում են թափանցիկություն ապահովող հիմնական միջոցներ՝ Բոլոնիայի գործընթացն ասորագրած 45 երկրների համար: Բուրկը (2005 թ.) նկատել է, որ “Եվրոպական կրթական աստիճանների ընթեռնելիությունը հիմք կհանդիսանա, որպեսզի Եվրոպական բարձրագույն կրթությունը գրավիչ լինի աշխարհի մասցած երկրների համար” (էջ 14):

### **Դյուրընթեռնելի և համադրելի աստիճաններ**

Բավական առաջընթաց է նկատվում դիպլոմի միջուկի և հավելվածի ավանդական տեսակի՝ դեպի Եվրոպական և ամերիկյան համալսարանների միջև համադրելի տեսակի փոխվելու գործընթացում: Այս մոդելը տեղական կարիքների և Եվրոպական չափորոշիչների հավասարակշողած տարրերակ է, այս մոդելը կարելի է այնպես նախագծել, որ բոլոր կողմերի՝ ուսանողների, համալսարանների, գործատունների և հավատարմագրող կառույցների համար “հաղթանակած” իրավիճակ ստեղծվի:

Դիպլոմի միջուկը, դիպլոմի հավելվածի, տեղեկատվական փաթեթի և ուսուցման համաձայնագրի հետ միասին, օրինական փաստաթուղթ է համարվում ECTS-ի համար: Դիպլոմի միջուկը վկայագրում է ուսանողի ակադեմիական առաջադիմությունը՝ թվարկելով նրա ընդունվելու և ավարտելու ամսաթիվը, առարկաների համարները և վերնագրերը, տեղական կրեդիտներն

ու գնահատականները, ECTS-ի կրեդիտներն ու գնահատականները, և կրթական աստիճանի անվանումն ու կրթափուլը: Կրեդիտի փոխանցման դեպքում դիպլոմի միջուկը այլ երկիր մեկնող ուսանողներին պետք է տրվի մայր համալսարանի կողմից և ուսումնառություն ավարտին վերադարձող ուսանողներին հանձնվի հյուրընկալող համալսարանի կողմից:

### Որակի ապահովում

Ընդհանուր չափորոշիչների ու պայմանավորվածությունների և համալսարանական ինքնավարության ու նորամուծությունների միջև առկա է որոշակի լարվածություն: Բեռլինի կոմյունիկեում (2003 թ.) հանվել են լարվածություն առաջացնող հնարավոր գործուները և տրվել են որակի ապահովման հիմնական պահանջները ազգային մակարդակով հաստատելու հանձնարարականներ: Կոմյունիկեն նաև շեշտել է “որակի ապահովման առումով բոլորի համար ընդունելի չափանիշների և մեթոդարանության” մշակման անհրաժեշտությունը (եջ 3):

#### Ակադեմիական տեղեկագիրը

1. Ակադեմիական տեղեկագիրը օգտագործվում է ուսանողի ուսումնական գործունեությունը և առաջադիմությունն ուսման որոշակի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար՝ ուսումնասիրված դասընթացների և կրթական մոդուլների, շնորհված կրեդիտների և ստացած գնահատականների գրանցման միջոցով: Այն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:
2. Բուհի համապատասխան ուսումնական ստորաբաժանումը յուրաքանչյուր ուսանողի համար՝ նրա ընդունման պահից սկսած, վարում է ակադեմիական տեղեկագիրը, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի վաստակած կրեդիտները և գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների:
3. Ուսանողի ստացած կրեդիտը վավերագրվում է նրա ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ է նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
4. Ուսանողի ուսամն առաջադիմության ընդհանրացման արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակին արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի արաջադիմությունը ամրողացնող՝

ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները

գումարային կրեդիտների քանակը

- գնահատված կրեդիտների քանակը
- վարկանիշային միավորները
- միջին որակական գնահատականը

5. Գումարային կրեդիտը կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

6. Գնահատված կրեդիտը գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով:

7. Վարկանիշային միավորը բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյաների գումարն է:

8. Միջին որակական գնահատականը /ՄՈԳ/ գնահատականների կրեդիտներով կշռված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորների գնահատված կրեդիտների վրա բաժանելով /արդյունքը կլրացվում է 1/100-ի ճշտությամբ/:

9. Տարբերվում են կիսամյակային /հաշվարկված առանձին կիսամյակի համար/ և ամփոփիչ /հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար/ վարկանիշային միավորները և ՄՈԳ-եր:

10. Ըուներ պարտավոր է ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն (Կետ 4.5, 2007.)

## **Դիպլոմի միջուկի ընդհանուր մոդել**

### I. Առարկայի տվյալների բազա

Ներառում է առարկայի համարը և անվանումը, առարկայի նկարագրությունը, տեղական կրեդիտները, ECTS կրեդիտները (վավերացված դասախոսական հանձնաժողովի անդամի, ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի, ակադեմիական հարցերով պրոռեկտորի կողմից)

### II. Ուսանողի տվյալների բազա (վավերացված ուսանողի, ընդունելության գծով պատասխանատուի, արձանագրությունների բաժնի դեկավարի, ուսումնական հարցերով պլոտեկտորի կողմից)

**III. Կրթական աստիճանին վերաբերվող պահանջների տվյալների բազա**

Ներառում է հիմնական, մասնագիտական և ընտրովի առարկաները, հետազոտությունն ու որակավորման քննությունները (վավերացված դասախոսական հանձնաժողովի, ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի, ուսումնական հարցերով պրոռեկտորի կողմից)

**IV. Ուսուցման համաձայնագրի տվյալների բազա**

Ներառում է հիմնական առարկաները, մասնագիտական և ընտրովի առարկաները, հետզոտությունն ու որակավորող քննությունները (վավերացված ուսանողի, ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի, ուսումնական հարցերով պրոռեկտորի կողմից)

**V. Առարկայի գրաֆիկի տվյալների բազա**

Ներառում է առարկայի ժամանակային գրաֆիկը, լսարանի տեղը և չափը, ներգրավված ուսանողների քանակը (վավերացված դասախոսի, ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի, ուսումնական հարցերով պրոռեկտորի կողմից)

**VI. Դասախոսի կողմից նշանակվող գնահատականն ըստ առարկայի, ըստ ուսանողի**

Ներառում է ավարտման ամսաթիվը, առարկայի համարն ու անվանումը, տեղական կրեդիտներն ու գնահատականները, ECTS կրեդիտներն ու գնահատականները (վավերացված՝ դասախոսի, ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի, ուսումնական հարցերով պրոռեկտորի կողմից)

**VII. Արձանագրությունների պատասխանատուի տվյալների բազա**  
Ներառում է ընդունման և ավարտման ամսաթիվը, առարկայի համարը և անվանումը, տեղական կրեդիտներն ու գնահատականները, ECTS կրեդիտներն ու գնահատականները, կրթական աստիճանի անվանումն ու կրթափուլը (վավերացված, ֆակուլտետի դեկանի, արձանագրությունների բաժնի դեկանավարի, ուսումնական հարցերով պրոռեկտորի կողմից)

**VIII. Դիպլոմի հավելվածի տվյալների բազա**

Ներառում է դիպլոմը կրող անձի որակավորումները, կրթական աստիճանի որակավորումը, որակավորման մակարդակը, ձեռքբերած բովանդակությունն ու արդյունքները, որակավորման գործառույթը, լրացրցից տեղեկություն, հավաստագրում, որակավորումը շնորհող մարմնի կողմից վկայագրում (վավերացված՝ ուսանողի, ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի, ուսումնական հարցերով պրոռեկտորի կողմից) IX. Ուսանողի պաշտոնական դիպլոմի միջուկն ու հավելվածը Ներառում է ընդունման և ավարտման ամսաթիվը, առարկայի համարը և անվանումը, տեղական կրեդիտներն ու գնահատականները, ECTS կրեդիտներն ու գնահատականները, կրթական աստիճանի անվանումն ու կրթափուլը (վավերացված՝ ուսանողի, ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի, ուսումնական հարցերով պրոռեկտորի կողմից)

### **Դիպլոմի հավելված**

Բեռլինի կոմյունիկեն (2003 թ.) փաստում է, որ “2005 թվականից սկսած յուրաքանչյուր ուսանող պետք է ինքնարերաբար և անվճար ստանա դիպլոմի հավելված: Այն պետք է գրված լինի առավել տարածված եվրոպական արդյունավետ լեզուներից մեկով”: (Էջ 5)

Եվրոպական հանձնաժողովը (2006 թ.) նշում է, որ դիպլոմի հավելվածը, որը երբեմն կոչվում է Եվրոփասսի դիպլոմի հավելված (ԴՀ), համալսարանի կողմից բողարկված մի փաստաթուղթ է, որը տրվում ուսանողներին համալսարանն ավարտելիս: ԴՀ-ը մատչելի ձևով ներկայացնում է ուսանողի ստացած որակավորումը և նկարագրում է այն բարձրագույն կրթական համակարգի բովանդակությունն ու կառուցվածքը, որի շրջանակներում այն պատրաստվել է: Այն պետք է գերծ լինի բոլոր տեսակի գնահատողական մեկնաբանություններից, համարժեքության մասին պնդումներից կամ ճանաչման վերաբերյալ առաջարկություններից: Այն ձկուն և չպարտադրվող միջոց է, որը նախագծվել է ժամանակ, որամ և աշխատանքային

ծանրաբերոնավճություն խնայելու նպատակով: Այն կարելի է հարմարեցնել տեղական պահանջներին:

Ըստ Եվրոպական հանձնաժողովի՝ դիպլոմի հավելվածը բաղկացած է ութ բաժիններից.

1. տեղեկություն որակավորում ստացած անձի մասին,
2. տեղեկություն որակավորման մասին,
3. տեղեկություն որակավորման մակարդակի մասին,
4. տեղեկություն բռվանդակության և ձեռք բերված արդյունքների մասին,
5. տեղեկություն որակավորման գործառույթի մասին,
6. լրացուցիչ տեղեկություններ,
7. դիպլոմի հավելվածի վկայագրումը հաստատության կողմից,
8. դիպլոմի հավելվածի վկայագրումը որակավորում շնորհող մարմնի կողմից:

Դիպլոմի հավելվածը ստեղծվում է ազգային հաստատությունների կողմից՝ ըստ Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպայի խորհրդի և Յունեսկո-ի համատեղ աշխատանքային խմբի կողմից մշակված նմուշի, որոնք փորձարկել ու լրամշակել են այդ նմուշային տարրերակը: *Տես հավելված 4, Դիպլոմի հավելվածի նմուշ:*

Դիպլոմի հավելվածը չի փոխարինում բնօրինակ դիպլոմը կամ կրթական աստիճանը կամ ձանաշում երաշխավորող ավտոմատացված համակարգը: Դիպլոմի հավելվածը տրամադրվում է այն բուհի կողմից, որը շնորհում է նաև դիպլոմի բնօրինակը կամ կրթական աստիճանը:

## **Աշխատաժողովների կիրառումը որպես դիպլոմի միջուկի կառավարման և բարելավման մեթոդ**

Դիպլոմի միջուկի կառավարման գերազանց համակարգի մշակումը բաղկացած է հետևյալ տարրերի շուրջ միավորված աշխատախմբերից:

- Որակի ապահովում և ապահովություն
- Ընդունելություն համաշրան

- Ուսանողի գրանցումների առանձնահատկություններ
- Կրթական աստիճանի պլանավորում
- Առարկայի տեղեկագրի առանձնահատկություններ
- Ուսուցման անհատական պայմանագրի մշակում
- Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ և դիպլոմի հավելվածի անվանումներ
- Դիպլոմի միջուկի կառավարման համակարգի դիագրամի կազմում
- Դիպլոմի միջուկի էլեկտրոնային տարբերակների առանձնահատկություններ՝ սարքակազմ (հարդիկեր), ծրագրակազմ (սոֆթվեր), անվտանգություն, հուսալիություն
- Առարկայի գնահատականի մասնագրումը/սահմանումը (ուսուցման որակ)
- Ուսանողների գնահատականների գրանցման առանձնահատկություններ

### **Դիպլոմի միջուկի կառավարման համակարգի արդյունքներ**

Դիպլոմի միջուկի կառավարման գերազանց համակարգի մշակումը կիանութեանի դրական արդյունքների, այդ թվում՝

- ճշգրիտ գնահատականների նշանակում,
- գիտելիքի և տեղեկատվության փոխանակում,
- դասախոսների և ուսանողների անզերենի իմացության բարելավում,
- դասախոսների գիտակրթական մակարդակի բարձրացում,
- տարբեր կրթական աստիճաններ շնորհող ծրագրերի շրջանակներում գիտելիքների բարելավում,
- ուսանողների գնահատման և գնահատականների նշանակում նոր մեթոդներ,
- ուսումնական առարկայի կրկնության նվազեցում,
- դուրս մնացող ուսանողների քանակի նվազեցում,
- առավել կայուն կրթական ծրագրեր:

## **Աշխատաժողովների թեմաներ՝ դիպլոմի միջուկի կառավարման համակարգի մշակում**

1. Կրեդիտային համակարգի համառոտ նկարագիր (նպատակները, կրթական աստիճանների պլանավորումը, կրեդիտների ծավալը, կարողությունները, որակի ապահովումը, ուսումնական առարկաների կառուցվածքը):
2. Կրթական աստիճանի պլանավորում (շրջանակը, կրեդիտների ծավալը, կրեդիտների որակը, դիպլոմի հավելված) թարմացված է 2007 թ. մայիսի 7-ին: [http://ec.europa.eu/education/programmes/socrates/ects/doc/example\\_e4.pdf](http://ec.europa.eu/education/programmes/socrates/ects/doc/example_e4.pdf)  
[http://ec.europa.eu/education/policies/rec\\_qual/recognition/diploma\\_en.html](http://ec.europa.eu/education/policies/rec_qual/recognition/diploma_en.html)
3. Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ և դիպլոմի հավելվածի վերնագրեր (ECTS և ԴՀ վերնագրեր):
4. Դիպլոմի հավելված (տեղեկություն որակավորման ստացած անձի մասին, տեղեկություն որակավորման մասին, տեղեկություն որակավորման մակարդակի մասին, տեղեկություն բովանդակության և ձեռք բերված արդյունքների մասին, տեղեկություն որակավորման գործառույթի մասին, լրացրույթի տեղեկություններ, դիպլոմի հավելվածի վկայագրումը, տեղեկություն բարձրագույն կրթության ազգային համակարգի մասին): Օրինակները տրամադրված են: Թարմացված է 2007 թ. մայիսի 7-ին: <http://www.europeunit.ac.uk/resources/E-04-10%20.pdf>
5. ՀՊԱՀ-ում դիպլոմի միջուկի կառավարման համակարգի դիմումը
6. Դիպլոմի միջուկի կեկտրոնային տարբերակների առանձնահատկություններ (սարքակամ (հարդիք), ծրագրակազմ (սոֆթվեր), անվտանգություն, հուսալիություն)
7. Համակարգչային ծրագրեր դիպլոմի միջուկի համակարգի համար: Թարմացված 2007 թ. մայիսի 7-ին: <http://usos.mimuw.edu.pl/eunis-2005/eunis2005.pdf>
8. Ուսանողների ընդունելություն ՀՊԱՀ

9. Անհատական ուսուցման պլանի մշակում (Բոլոնիայի ուսուցման համաձայնագիր)
10. Ուսանողների գրանցումների առանձնահատկություններ (առաջին կուրսի ուսանողներ, երկրորդ կուրսի ուսանողներ, շրջանավարտներ)
11. Առարկայի կատալոգի առանձնահատկություններ (գրացուցակի)
12. Դիպլոմի կատալոգի առանձնահատկություններ (գրացուցակի)
13. Ուսանողների գնահատականների գրանցման առանձնահատկություններ
14. Ուսանողների շարժի վերաբերյալ խնդիրներ
15. Անհատական ուսուցման պլանի մշակում (ուսուցման համաձայնագիր)
16. Առարկայի անվանման մշակում (յուրաքանչյուր ֆակուլտետի համար առանձին)
17. Առարկայի կրեդիտների ծավալի առանձնահատկություններ
18. Առարկայի գնահատականի մասնագրումը (ուսուցման որակ)
19. Ապագայի համար խնդիրների պլանավորում (ինտերնետային օնլայն գրանցում, էլեկտրոնային կերպով քննական աշխատանքների կառավարում և վերահսկում, ուսանողների նոր տեղեկատվական համակարգերի իրականացում, UCAS-ի էլեկտրոնային տրամադրում, ուսանողների ազգային հետազոտություն, համատեղ գործառույթների համար տվյալների կուտակում, ուսանողների նոր տեղեկատվական համակարգերի պլանավորում և իրականացում, փոփոխական վճարներ, ֆինանսավորման վերահսկման և բաշխման համար վիճակագրություն HESA-ից, տարածաշրջանային համագործակցություն, HESA-ի տվյալների օգտագործման խթանման հեռանկար, էլեկտրոնային գրանցում, ուսանողների նոր տեղեկատվական համակարգերի մշակման ծրագրի կառավարում, ուսանողների նոր տեղեկատվական համակարգերի գործարկումը ողջ համալսարանում):

## Ամփոփում

Ինչպես և յուրաքանչյուր համատեղ ծրագրում, թափանցիկությունն էական նշանակություն ունի: Դիպլոմի արժեքը կախված է ուսանողի ջանափրության և ուսուցման արդյունքների որակի ապահովումից: Այս “ակադեմիական տարադրամը” ներփակված է առաջադիմության գրանցման դիպլոմի միջուկի և հավելվածի մեջ: Որպես չափորոշիչ օգտագործվում են ECTS կրեդիտները: Բոլոր երկրներում մեկ ուսումնական տարին համապատասխանում է ECTS 60 կրեդիտների՝ անկախ չափորոշից կամ որակավորման տեսակից:

Բեռլինի կոմյունիկետվ (2003 թ.) պարզաբանվել են լարվածություն առաջացնող հնարավոր գործոնները և երաշխավորություն է տրվել, որպեսզի որակի ապահովման հիմնական պահանջները հաստատվեն ազգային մակարդակով: Կոմյունիկեն նաև շեշտել է “որակի ապահովման համար բոլորի կողմից ընդունելի չափանիշների և մեթոդաբանության” մշակման անհրաժեշտությունը (էջ 3):

Բեռլինի կոմյունիկետում (2003 թ.) կոչ է արվում, որ “2005 թվականից սկսած յուրաքանչյուր ուսանող պետք է ինքնաբերաբար և անվճար ստանա դիպլոմի հավելված” (էջ 5):

Առաջարկվում է դիպլոմի միջուկի համակարգի մոդել, որը կավելացնի արդյունավորությունն ու վատահությունը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք օգտվել “Դիպլոմի միջուկի կառավարում” բաժնից հետևյալ հասցեով.  
<http://www.sauabologna.com/transcriptmanagement.asp>

## **Բաժին 4. Բոլոնիայի գործընթացի փաստագրում և գնահատում**

### **Գլուխ 11. Համալսարանի քաղաքականության կողմնորոշիչ մեթոդը**

*Կողմնորոշիչ մեթոդը պարզ  
գաղափար է, սակայն բարդ մոտեցում*

Մերիամ-Վերսթերը (2007 թ.) սահմանել է կողմնորոշիչ մեթոդը որպես “չափորոշիչ՝ ըստ որի ինչ-որ մի բան կարելի է չափել ստուգել կամ դատել...” (էջ 1): Այնուհետև, ըստ այլ ձևակերպումների “ սահմանված չափորոշիչների համաձայն, կողմնորոշիչ մեթոդը չափում է (մրցակցի արտադրանքը)` այն համեմատելու և բարելավելու համար” /էջ 1/: Թեև Բոլոնիայի գործընթացի համար որևէ պաշտոնական բառարան չի հաստատվել, Բոլոնիա-Բերգենի ինտերնետային կայքն (2005 թ.) առաջարկում է աշխատանքային բառարան:

Համաձայն Բոլոնիա-Բերգենի (2005թ.)՝ կողմնորոշիչ մեթոդը “կարևոր աշխատանքային տվյալների կուտակման և զեկուցման ստանդարտացված մեթոդ է, որը հնարավորություն է ստեղծում համեմատելու տարբեր կազմակերպությունների կամ ծրագրերի աշխատանքը՝ հիմնականում հաջողված փորձի կուտակման նպատակով” (էջ 1): Գործնականում կողմնորոշիչ մեթոդը ավելի կարևորում է լավագույն փորձի փոխանցումը, քան պաշտոնական համեմատական չափումների կատարումը:

Ծրագրի նպատակն է բարելավել կողմնորոշիչ մեթոդի մոտեցումները Եվրոպայում՝ նպատակ ունենալով ստեղծել համալսարանի ճիշտ կառավարման կողմնորոշիչ մեթոդի չափորոշիչներ: Սա կնպաստի բարձրագույն կրթության կառավարման արդիականացմանը, եվրոպական բարձրագույն

կրթության գրավչության բարձրացմանը և միջազգային մակարդակում դրա տեսանելիության բարելավմանը:

Անցումային ժամանակաշրջանում շատ կարևոր է ճշգրիտ կերպով հետևել ներկայումս իրականացվող քաղաքականությանն ու գործնական փորձին, և պարբերաբար համեմատել ժամանակի ընթացքում կատարվող փոփոխությունների հետ։ Կողմնորոշիչ մեթոդի ստեղծումը կարող է մանրամասն մշակված և թանկ գործընթաց լինել, այդ պատճառով առավել պարզ մոտեցում է առաջարկվում։ Առաջարկվող ռազմավարությունն է՝ օգնել համալսարանին գնահատելու իր առկա չափորոշչները և սահմանել գործնական փորձի բարելավման մեթոդներ։

Չափման միջոցների և մեթոդների ընտրությունը շատ կարևոր է։

Չափման միջոցները պետք է ընդգրկեն Բոլոնիայի ոգուն համահունչ գործնական փորձը, որը նպաստում է բարձրորակ ծրագրերի մշակմանն ու իրականացմանը և համապասասխանում է ECTS պահանջներին։

ECTS չափանիշները ընդգրկում են տեղեկատվական փաթեթը/առարկաների տեղեկագիրը, ECTS կրեդիտների կիրառումը, ուսուցման պայմանագրերի նմուշները, դիպլոմի միջուկը և ակադեմիական ձևաչափման պաշտոնական վկայությունները։ Լավագույն դեպքում, ցանկացած համալսարան կարող է մշակել մի համակարգ, որն իր կարիքներն առավել բավարարող համապատասխան կողմնորոշիչ մոդել է՝ միևնույն ժամանակ համեմատականություն ապահովելով այլ համալսարանների միջև։

ՀՊԱՀ-ի դեպքում, նախնական կողմնորոշիչ մոդելի ստեղծումը հիմնված է ութ քաղադրիչների վրա՝

1. Ապագա տեսակետ՝ ինստիտուցիոնալ և անձնական ապագա:
2. Կառավարում՝ ՀՊԱՀ և Հայաստանի բարձրագույն կրթության:
3. Դասավանդման պատմություն՝ ՀՊԱՀ SWOT-ի /ուժեղ և քույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ/։

4. Առաջնորդություն՝ հաջողության և աշխատանքի կատարման առանցքային արժեքները՝ ժամանակի ընթացքում առաքելության հետ հարաբերակցված:
5. Անձնական պատասխանատվություն՝ վերահսկման կենտրոնի
6. Փոփոխության հանդեպ զգայունության՝ ինստիտուցիոնալ և անձնական զգայունություն:
7. Ինքնարներներում, ինքնազնահատում, ընկալվող ներդրումներ, գործընկերների կարգավիճակ:
8. Ուսանողների առանձնահատկություններ՝ արդյունքների:

Շատ կարևոր է նաև ներգրավված մասնակիցների ընտրությունը: Նպատակային շահառուների խումբն ընդգրկում է համալսարանի առաջնորդներին, համալսարանի կառավարման մարմինների անդամներին, ուսանողներին և շրջանավարտներին, ազգային մակարդակում գործող քաղաքական գործիչներին/վարչական աշխատողներին, որոնք բարձրորակ համալսարանական դասավանդման, հետազոտության և գիտասփյուռ ծրագրերի շահառու կողմն են հանդիսանալու: Կողմնորոշիչ մեթոդի չափանիշը պետք է հիմնվի կողմերի աշխատանքի կատարման փաստերի թափանցիկ ներդաշնակեցման վրա:

Հերթփորդշայի համալսարանը /2001 թ./ մշակել է մի մոդել, որը կարող է ծառայել որպես ուղեցույց՝ համալսարանի լավագույն փորձի գրանցման համար: Կարելի է տվյալների բազ կիրառել համալսարանում ներդրված վեց կողմնորոշիչ փուլերում:

Փուլ 1: Սահմանել առաքելությունը, նպատակները և շահառուներին, ինչպես նաև պլանավորման համար անհրաժեշտ դեմոգրաֆիկ ցուցանիշները և հիմնավորումը:

Հարցերն ընդգրկում են՝

1. Ինչու՞ է համալսարանն իրականացնում կողմնորոշման մեթոդի գործընթացը:

2. Արդյո՞ք դա արվում է անմիջականորեն Բոլոնիայի գործընթացին վերաբերող որակի բարելավումներին աջակցություն ցուցաբերելու համար:
3. Արդյո՞ք դա արվում է համալսարանի ռազմավարության համար կարևոր քաղաքականության և գործնական փորձում կատարված փոփոխություններին աջակցություն ցուցաբերելու համար:
4. Արդյո՞ք դա արվում է ավելի մեծ համալսարանների (ազգային և միջազգային) հետ համեմատելու համար՝ մրցակիցներից սովորելու կամ համալսարանը կատարալեզարձելու նպատակով:

Փուլ 2: Նկարագրել ինստիտուցիոնալ գործոնները, այդ թվում՝ համալսարանի մշակույթը, ներկա ենթակառուցվածքը, փորձառության ոլորտը, ազգային հեղինակությունը, ուսանողների և պրոֆեսորա-դասախոսական կազմի առանձնահատկությունները:

Փուլ 3: Սահմանել ուսուցմանը, հետազոտություններին և գիտափյուր ծրագրերին նպաստող պրոֆեսորադասախոսական կազմի և անձնակազմի տարակարգերը:

Փուլ 4: Կազմի տարբեր անդամների համար անհրաժեշտ առողջիւ հմտություններ՝ կրեդիտային համակարգը հաջողությամբ ներդնելու նպատակով, ինչպես նաև կազմի համար մասնագիտական զարգացում՝ ներառյալ դասավանդման մեթոդաբանությունը, ուսանողի գնահատումն ու գնահատականների նշանակումը, ուսումնական պլանի մշակումը, առարկայական ծրագրերի մշակումը, դիպլոմի միջուկի համակարգի մշակումը և կառավարման համակարգը:

Փուլ 5: Կողմնորոշիչ մեթոդների և ժամանակի ընթացքում կատարված փոփոխություններից ստացված արդյունքների օգտագործում և շահառուների խմբերին գեկուցում:

**Փուլ 6: Շահառուների հետ քննարկման համար հիմնախնդիրների թափանցիկ հաշվետվության տրամադրում:**

### **Ամփոփում**

Կողմնորոշիչ մեթոդը արժեքավոր պատկերացումներ է ներկայացնում փոփոխությունների դինամիկայի վերաբերյալ, սակայն այն ժամանակատար գործընթաց է համալսարանի և շահառուների համար: Անհրաժեշտ է ստեղծել շահառուների մի փոքր խումբ և ժամանակ հատկացնել աշխատանքներն իրականացնելու համար: Շատ կարևոր է, որ աշխատանքը գործնական բնույթ կրի և նվազագույնի հասցվի:

Ճշգրիտ պլանավորումը հաջողության երաշխիքն է: Համալսարանը պետք է նվազագույն չափանիշներ ընտրի, որոնք օգտակար կինեն իրենց նպատակների համար: Կողմնորոշիչ մեթոդի տվյալների մեծ մասը կարելի է գտնել համալսարանի ներսում և, որտեղ որ հնարավոր է պետք է կիրառել առանց վերահամարման:

2-6 փուլերի իրականացման մանրամասները անհրաժեշտ է հետաձգել մինչև 1-ին փուլի ավարտը: Տեղեկությունների կուտակման ընթացքում պետք է հնարավորության չափով տեղակայել և օգտագործել առկա տվյալները: Տվյալների բազան պետք է նախագծված լինի այնպես, որ խթանի տվյալների կուտակումը, այնպես որ դյուրին դարձնել տվյալների կուտակումն ու վերլուծումը:


## **Գլուխ 12. Մեթոդների և առարկայական նյութերի գնահատումը**

**Առաջընթացը որոշվում է չափորոշիչների համաձայն՝  
սակայն կարևոր է իմանալ, թե որն է չափորոշիչը:**

Մեթոդները և առարկայական նյութերը կազմում են Բոլոնիայի գործընթացի չափորոշիչներին համահոնչ ուսումնական պլանի վերափոխման գործընթացի կարևոր մասը։ Առաջադիմություն ունենալու նպատակով կարևոր է սկսել գնահատման շրջանակներ մշակելուց։ Այս գլուխը կազմված է Թայլերի (1949թ.) առաջին և չորրորդ հարցերի հիման վրա։

1. Ո՞ն է նպատակը։
2. Ինչպես եք իմանում, որ նպատակն իրականացված է։

### **Դասավանդման համակարգի մոդել սխեմա**



Հաճախ գնահատումը ծրագրի զարգացման “վերջին քայլն” է համարվում։ Սակայն կողմնորոշման մեթոդի գործընթացում այն պետք է առաջիններից մեկը լինի։

Կրթական ծրագրի գնահատման ընթացքում կարևոր է սահմանել, ուսումնասիրել, չափել կամ դիտարկել ծրագրի բաղադրիչները և ծրագրում բաղադրիչների համատեղ աշխատանքը։ Ծրագրի սկզբից ի վեր գնահատումը պետք է դիտվի որպես աշխատանքների շարունակական մասը։ Միայն այս

տեղեկություններն ունենալու դեպքում, մենք կարող ենք  
խելամտորեն պլանավորել կամ փոփոխել մեր ծրագիրը:

### **Ծրագրի գնահատումն ուսանողի գնահատման համեմատ**

Ծրագրի գնահատումը կենտրոնանում է ծրագրի բաղադրիչների վրա՝ վերլուծուման, նախազման, մշակման և իրականացման, մինչդեռ ուսանողի գնահատման կիզակենտրոնում է ուսուցման և վարքագծի փոփոխությունները՝ հակազդեցություն, ուսուցում, վարքագիծ և արդյունք:

Ի՞նչ է ծրագիրը: Սովորաբար համալսարաններն աշխատում են իրենց առաքելության համաձայն և որպես անբաժանելի մաս ներառում են լրացուցիչ ծրագրեր՝ ուսուցումն ու հետազոտությունը որպես ակադեմիական կրթական աստիճանի մաս: Ծրագրի գնահատումը տեղեկություններ է կուտակում բոլոր ծրագրերի կրթական արժեքների և արդյունավետության մասին: Այն կարող է կենտրոնանալ նաև համալսարանի շրջանականերում իրականացվող մեկ ծրագրի շուրջ: Ծրագրի գնահատումը կարող է ընդգրկել բազմաթիվ մեթոդներ, այդ թվում՝ կարիքների գնահատում, հավատարմագրում, արդյունավետության որոշում, ինչպես նաև ֆորմատիվ և սումատիվ տվյալների կուտակում: Կիրարվող գնահատման մեթոդը կախված է կայացվող պարտադիր որոշումներից:

### **Մեթոդների և նյութերի գնահատման իրականացման հիմնական քայլերը**

Արդյունքների վրա հիմնված գնահատման գործընթացն ընդգրկում է յոթ հիմնական քայլ. (Մքնամարա, 2007 թ.):

1. Սահմանել հիմնական արդյունքներ՝ ծրագրի ուսումնասիրության կամ վավերացման համար ECTS-ի պիտակին արժանանալու նպատակով՝ նախատեսված Բոլոնիայի գործընթացի պահանջներին համահունք:
2. Նախապատվություն տալ արդյունքներին և ընտրել միայն հիմնական տեղեկություններ տրամադրող արդյունքներ՝

- դիպլոմի միջուկը, դիպլոմի հավելվածները, տեղեկատվական փաթեթները և ուսուցման պայմանագրերը:
3. Ցանկացած հիմնական արդյունք ներդնելու համար սահմանել, թե ի՞նչ ուսումնասիրվող միջոցներ կարելի է կիրառել՝ բոլոնիայի գործընթացի նպատակները իրականացնելու համար:
  4. Սահմանել “նպատակային” խնդիրներ ECTS-ի համար՝ դիպլոմի միջուկ, դիպլոմի հավելված, տեղեկատվական փաթեթ և ուսուցման պայմանագրեր, և որոշել, թե արդյոք կարելի է տեղեկություններ ստանալ՝ կիրառելով ընտրված միջոցները:
  5. Սահմանել թե ի՞նչ տեղեկություններ են անհրաժեշտ, որպեսզի ցուցադրեն, որ գործընթացը իրականանում է՝ համաձայն որոշված չափորոշիչներին:
  6. Որոշել, թե ինչպես կարելի է արդյունավետ կերպով տեղեկություններ հավաքել: Հնարավորության դեպքում կիրառել առկա տեղեկությունները:
  7. Վերլուծել և գեկուցել արդյունքների մասին:

### **Ծրագիրը գնահատվում է ըստ**

- Նպատակների
- Գործընթացի
- Արդյունքների

### **Մեթոդների ընտրման հիմնանպատակը**

Գնահատման մեթոդի ընտրման հիմնանպատակն է հանգուցային որոշում կայացնողներին կարևորագույն տեղեկություններ տրամադրել առավել մատչելի և գործնական ձևով: Ուսումնասիրել հետևյալ հարցերը (Մքնամարա, 2007թ.)՝

1. Ծրագրի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար ի՞նչ տեղեկություններ են անհրաժեշտ:
2. Կիրառելով առկա աղբյուրները՝ նշված տեղեկություններից ո՞ր տեղեկություններն է անհրաժեշտ կուտակել և վերլուծել:
3. Ո՞րն է տեղեկությունների հուսալիությունը:

4. Արդյո՞ք ընտրված մեթոդները կուտակում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- 5.Ի՞նչ լրացուցիչ մեթոդներ են առկա տեղեկությունները լրացնելու համար:
6. Արդյո՞ք տեղեկությունները հավասարի են ECTS կրեդիտների վերաբերյալ որոշում կայացնողների համար:
7. Արդյո՞ք ուսանողների առանձնահատկությունները համապատասխանում են գնահատման մեթոդներին /հաղորդակցման ուղիները, ազդեցությունը, ներկայացուցիչները, գաղտնիությունը/:
8. Ո՞վ կարող է կազմակերպել տվյալների կուտակման գործընթացը:
9. Ինչպե՞ս կարելի է տեղեկությունները վերլուծել և գեկուցել: Սովորաբար մեթոդների համակցությունը ավելի լավ արդյունքներ է տալիս:

#### **Տեղեկությունների վերլուծությունը և մեկնաբանումը**

Մընամարան (2007 թ.) և Թայլերը (1949 թ.) առաջարկում են սկսել հետևյալ հարցերից՝ ո՞րն է հիմնանպատակը կամ որո՞նք են գնահատման նպատակները: Սկսեք ծրագրի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ գնահատման նպատակի կամ պատասխանների տեսակների ուսումնասիրությունից: Տվյալները կարող են դասակարգվել ըստ կարգերի, միջոցառումների, աղբյուրների կամ արդյունքների, իսկ կարող են խմբավորվել՝ ըստ որակական կամ քանակական կարգերի: Սա դյուրինացնելու է տվյալների վերլուծությունը:

Վերլուծությունը կատարելիս ստուգեք տվյալների աղբյուրները՝ նմուշների կամ հարցվողների անկախ և կախված լինելը, հարցվողների անկանոն ընտրությունը, տարածայնությունների համատարրությունը և ոչ-պարամետրական կամ պարամետրական վիճակագրական տեստերի կիրառումը: Նպատակներից մեծ մասի համար, նկարագրական վիճակագրությունը բավարար տեղեկություններ է

տրամադրելու որոշումների կայացման համար: Բրայերսը (2007թ.) խորհուրդ է տալիս “տվյալների հետ սերտ կապ հաստատել”:

### **Գնահատման արդյունքների մասին գեկուցումը**

Մաքնամարան (2007 թ.) և Թայլերը (1949 թ.) առաջարկում են ավարտել հետևյալ հարցով՝ ինչպէ՞ս եք տեղեկանում, թե արդյո՞ք դուք իրականացրել եք նպատակը:

Հետևելով Բրայերսի խորհուրդներին՝ ուշադիր ուսումնասիրեր տվյալները և խմբավորեք բաժիններում: Զեկույցի մակարդակը և ծավալը կախված է որոշում կայացնողների կարիքներից: Բարձր է գնահատվում այն խմբագիրը, որը ընթերցում է զեկույցը ունկնդիրների տեսակետից:

Չատ կարևոր է խորհուրդները և եզրահանգումները ճշգրիտ կերպով նկարագրող գրծառնական ամփոփումը: Գործառնական ամփոփումը պետք է ընդգրկի գնահատման ենթակա ծրագրի համառոտ նկարագիրը և գնահատման նպատակների, մեթոդների և վերլուծության գործընթացի հակիրճ զեկույցը:

### **Ծրագրի գնահատման համար նախատեսված ֆորմատիվ գնահատումը**

“Սկսել - Դադարեցնել - Շարունակել” գործընթացը պարզ, սակայն հզոր ֆորմատիվ միջոց է, որը գործնական խորհուրդ է հաղորդում: Ընդամենը մի քանի րոպեի ընթացքում մասնակիցները մի շարք խորհուրդներ են տալիս ուսումնասիրության վերաբերյալ: Գործնական աշխատանքների գրառումները պետք է ընդգրկեն առաջարկություններ, ամսաթվեր և ձեռնարկված գործողություններ:

### **Ծրագրի գնահատման տարրերը**

Ծրագիրը գնահատելիս շատ կարևոր է որոշել անկախ տարածայնությունները, որոնք կարող են ազդել արդյունքի վրա, այսինքն՝ անձնական մեկնաբանությունները, ներկայացնողի առանձնահատկությունները, առարկայի բովանդակության բնույթը

և ֆիզիկական միջավայրը: Դասընթացների հետևյալ գնահատման ձևը ծրագրի գնահատման միջոցի օրինակ է:

## **Արյուսակ 12.1.ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱ (օրինակ)**

ԹԵՄԱ **Առարկայական ծրագրերի մշակում**

Անուն Ազգանուն:

Ֆակուլտետ: \_\_\_\_\_ Ամբիոն: \_\_\_\_\_

Ծանոթություն՝ շրջանակի մեջ վերցրեք ձեզ համար ընդունելի պատասխանը

- Այսօր իմ գիտելիքների մակարդակը առարկայական նյութերի և ուսումնական պլանի մշակման վերաբերյալ հետևյալն է՝  
**(Տարրական) (փորձառու) (հմտացություն) (մասնագետ)**

### **2. Գնահատում**

Ստորև բերված յուրաքանչյուր տարրերակի համար նշեք ձեր կարծիքը՝ շրջանակի մեջ առնելով մեկից մինչև վեց թվերից մեկը:

- բացարձակապես համաձայն չեմ; 2 - համաձայն չեմ; 3 - որոշ չափով համաձայն չեմ; 4 - որոշ չափով համաձայն եմ; 5 - համաձայն եմ; 6 - ամբողջովին համաձայն եմ

Կետ	1	2	3	4	5	6
1. Այս դասընթացը համապատասխանում է իմ ակնկալիքների						
2. Այս տեղեկությունները կարենո՞ւ են ինձ համար						
3. Այս դասընթացը համապատասխանում է մեր ամբիոնի պահանջներին						
4. Ստացած գիտելիքի կիրառումը օգտակար է ինձ մասնագիտական տեսակետից						
5. Դասընթացը հարմար էր կազմակերպված ժամանակային առումով						
6. Թեման լավ է ներկայացվել (դասախոսի կողմից)						
7. Նա խոսում էր պարզ և նրան հեշտ էր հասկանալ						
8. Նա ինձ ներգրավեց նյութի ներկայացման ժամանակ						

3. Զեր կարծիքով, այս դասընթացին ներակայացված տեղեկություններից /նյութերից/ ո՞րն է ամենաօգտակարը:

5. Արդյո՞ք Դուք կկարողանաք կիրառել Զեր ամբիոնում կամ ֆակուլտետում այն թեմաները, որ մատուցվեցին այս դասընթացի ընթացքում: (շրջանակի մեջ վերցրեք)

(Այո) (Միգուցե – համոզված չեմ) (ՈՉ)

Եթե ոչ, ապա ի՞նչ լրացուցիչ նյութեր են անհրաժեշտ:

6.Ի՞նչ լրացուցիչ թեմաներ եք առաջարկում՝ որպես այս դասընթացի շարունակություն:

### **Ակնկալիքներ**

**Իմ գիտելիքների և/կամ հմտությունների ներկա մակարդակն է՝**

- ❶... զրոյական գիտելիքներ կամ հմտություններ
- ❷... շատ քիչ գիտելիքներ կամ հմտություններ (սկսնակի մակարդակ)
- ❸... գիտելիքների կամ հմտությունների որոշակի պաշար
- ❹... Գիտակ և հմտություն (կիրառող)
- ❺... գիտելիքների և հմտությունների մեծ պաշար
- ❻... հմուտ գործածող (փորձառու)

The European Society for Engineering Education. (2007). SEFI Position on the Doctorate in Engineering. Retrieved August 15, 2007 from [http://www.sefi.be/wp-content/uploads/SEFI%20Position%20on%20the%20Doctorate%20in%20Engineering%20\(Bologna%20Process\)1.pdf](http://www.sefi.be/wp-content/uploads/SEFI%20Position%20on%20the%20Doctorate%20in%20Engineering%20(Bologna%20Process)1.pdf)

The National Unions of Students in Europe. (2005). The Black Book of the Bologna Process. Retrieved August 8, 2007 from  
[http://www.bologna-bergen2005.no/Docs/02-ESIB/0505\\_ESIB\\_blackbook.pdf](http://www.bologna-bergen2005.no/Docs/02-ESIB/0505_ESIB_blackbook.pdf)

The Opinion of ESN International on the Bologna Process. Retrieved July 27, 2007 from  
[http://esn.org/documents/files/ESN\\_on\\_Bologna\\_Process.pdf](http://esn.org/documents/files/ESN_on_Bologna_Process.pdf)

The UK Grad Program. (2007). Bologna Process. Retrieved July 26, 2007 from  
[http://www.grad.ac.uk/cms>ShowPage/Home\\_page/Policy/European\\_policy/Bologna\\_process/p!ekljFab](http://www.grad.ac.uk/cms>ShowPage/Home_page/Policy/European_policy/Bologna_process/p!ekljFab)

Thompson, Jr., R. & Willard, L. (2003). An Agenda for Institutional Change. Retrieved August 23, 2007 from  
[http://www.cur.org/publications/aire\\_raire/duke.asp](http://www.cur.org/publications/aire_raire/duke.asp)

Thune, C. (2003). ENQA and the Agenda for European Quality Assurance after Berlin. Retrieved August 18, 2007 from  
<http://www.kka.fi/pdf/muut/seminaari/laadunvarmistus/christianthune.ppt#394,1,Slide 1>

Thune, C. (2005). Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. Retrieved July 27, 2007 from  
[http://www.bologna-bergen2005.no/Docs/00-Main\\_doc/050221\\_ENQA\\_report.pdf](http://www.bologna-bergen2005.no/Docs/00-Main_doc/050221_ENQA_report.pdf)

Treichler, D.G. (1967). Are you missing the boat in training aids? *Audio-visual communications*. New York: United Business Publications. Retrieved August 13, 2007 from  
<http://www.developfaculty.com/tips/tip44.htm>

Tuning Educational Structures in Europe. (2006a). Educational structures, learning outcomes, workload and the calculation of ECTS credits. Retrieved August 15, 2007 from <http://www.tuning.unideusto.org/tuningeu/index.php?option=content&task=view&id=177#Overall>

Tuning Educational Structures in Europe. (2006b). Tuning of educational structures and programmes on the basis of diversity and autonomy. Retrieved August 15, 2007 from <http://tuning.unideusto.org/tuningeu/images/stories/archivos/TUNING%20METHODOLOGY%20PARA%20LA%20WEB.pdf>

Tyler, R.W. (1949) *Basic principles of curriculum and instruction*. Chicago: The University of Chicago Press.

Uludağ University-European University Association Relations Committee. (2003) Uludağ University Self-Evaluation Report. Retrieved August 23, 2007 from [http://intoffice.uludag.edu.tr/docs/IRP-Uludag%20Self%20Evaluation%20Report%20\\_Jan2003.pdf](http://intoffice.uludag.edu.tr/docs/IRP-Uludag%20Self%20Evaluation%20Report%20_Jan2003.pdf)

Umeå University (2007). *Important changes within higher education*. Retrieved August 14, 2007 from <http://www.umu.se/umu/eng/about/bologna.html#changes>

University of Dallas. (2006). Center of Information Assurance Best Practices. Retrieved July 30, 2007 from [http://colab.cim3.net/file/work/BPC/2006-08-21/ABA\\_Best\\_Practices.pdf](http://colab.cim3.net/file/work/BPC/2006-08-21/ABA_Best_Practices.pdf)

University of Hertfordshire. (2001). University of Hertfordshire ELTI Spreadsheets Proformas. Retrieved August 07, 2007 from [http://www.ltu.mmu.ac.uk/ebenchmarking/documents/s77652\\_3.pdf](http://www.ltu.mmu.ac.uk/ebenchmarking/documents/s77652_3.pdf)

- Universität Leipzig. (2003) Seminar on “Integrated curricula – Implications and Prospects.” Final Report. Retrieved August 15, 2007 from <http://www.uni-leipzig.de/studref/download/jointdegrees.pdf>
- University Of Niš. (2007). Bologna Process: Best practices. Retrieved July 26, 2007 from [http://www.aegee-nis.org.yu/bp/index.php?option=com\\_content&task=view&id=13&Itemid=28](http://www.aegee-nis.org.yu/bp/index.php?option=com_content&task=view&id=13&Itemid=28)
- Wagenaar, R (2007). Educational structures, Learning outcomes, Workload and the Calculation of ECTS credits. Retrieved August 15, 2007 from <http://www.tuning.unideusto.org/tuningeu/index.php?option=content&task=view&id=177#Overall>
- Wikipedia (2007). Bologna Process. Retrieved July 26, 2007 from [http://en.wikipedia.org/wiki/Bologna\\_process](http://en.wikipedia.org/wiki/Bologna_process)
- Wilson, L. (2007). The Europe of Knowledge 2020: A Vision for University based research and Innovation. Retrieved July 26, 2007 from [http://ec.europa.eu/research/conferences/2004/univ/pdf/slides\\_l'esley\\_wilson\\_en.pdf](http://ec.europa.eu/research/conferences/2004/univ/pdf/slides_l'esley_wilson_en.pdf)
- Zalta, E. N., (2006). Globalization. The Stanford Encyclopedia of Philosophy. Retrieved on June 28, 2007 from <http://plato.stanford.edu/entries/globalization/> (*First published Fri Jun 21, 2002; substantive revision Fri Jun 16, 2006*)

Հավելված 1.

Բուհում ուսումնական գործընթացի  
կրեղիտային համակարգով  
կազմակերպման  
օրինակելի կարգ

## Մշակող աշխատանքային խումբ

- Ա. Բուդայյան, Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարան (Նախագահ)
- Վ. Խաչատրյան, Կրթության Ազգային Ինստիտուտ (ԿԳՆ համակարգող)
- Ս. Մելիքյան, Կրթության և Գիտության Նախարարություն
- Հ. Ժամհարյան, Երևանի Պետական Համալսարան
- Ս. Գևորգյան, Երևանի Գեղարվեստի Ակադեմիա
- Լ. Ավետիսյան, Պետական Բժշկական Համալսարան
- Ա. Երգնլյան, Երևանի Թատրոնի և Կինոյի Ինստիտուտ
- Յու. Կուպայյան, Ֆիզիկական Կուլտուրայի Հայկական Պետական Ինստիտուտ
- Ս. Դավեյյան, Հայաստանի Պետական Ազրարային Համալսարան
- Ա. Գյողայյան, Ֆիզիկական Կուլտուրայի Հայկական Պետական Ինստիտուտ
- Ա. Հակոբյան, Գլածոր Կառավարման Համալսարան
- Ս. Շահինյան, Երևանի Ճարտարապետության և Շինարարության Համալսարան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարգի նպատակը

Կարգի խնդիրները

1. Ներածություն

2. Կրեդիտային համակարգի հիմնական դրույթները

3. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները

4. Կրեդիտային համակարգի հիմնական նորմերը ՀՀ բուհական համակարգում

4.1. Տարեկան աշխատածավալը և ուսումնական ծանրաբեռնավծությունը

4.2. Կրեդիտների հատկացումը

4.3. Կիսամյակային համակարգը

4.4. Կրթական ծրագրերը

4.5. Գնահատման համակարգը

4.6. Ակադեմիական տեղեկագիրը

5. Կրեդիտային համակարգի տարրերը և ընթացակարգերը

5.1. Ուսումնական ծրագիրը և ավարտական պահանջները

5.2. Դասընթացները և կրթական մոդուլները

5.3. Դասընթացների տեղեկագիրքը

5.4. Ուսումնական գործընթացի և դասընթացների ժամանակացույցերը

5.5. Ուսումնառության անհատական ծրագիրը և դասընթացներին գրանցման կազմակերպումը

5.6. Ուսման առաջադիմությունը

5.7. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

- 5.8. Կրեղիտների փոխանցումը
- 5.9. Ավարտական առողջիւ և աստիճանաշնորհում
6. Կրեղիտային համակարգի ինստիտուտները
  - 6.1. Կրեղիտների փոխանցման գործառույթի համակարգումը
  - 6.2. Ուսումնական խորհրդատունների ինստիտուտը
  - 6.3. Ակադեմիական գրանցումների գրասենյակը
  - 6.4. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները
7. Այլ դրույթներ
  - 7.1. Բուհի տարեկան ուսումնական բեռնվածքի հաշվարկը

## Կարգի նպատակը

Բուհում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի նպատակն է ՀՀ բուհերի համար ձևավորել միասնական կանոնակարգային և կազմակերպչական հենք՝ ուսման գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելու համար:

## Կարգի խնդիրները

- Կրեդիտային համակարգի համար սահմանել միասնական չափորոշիչներ (սահմանումներ, մոտեցումներ, ընթացակարգեր և նորմեր՝ ECTS համաեվրոպական կրեդիտային համակարգի պահանջների, որոնք պետք է միասնական լինեն ՀՀ բուհական համակարգի համար):
- Տալ ուսուցման կրեդիտային համակարգում կիրառվող առանձին գործառույթները, ընթացակարգերը և գործընթացները, դրանց բնութագրիչները և իրականացման հնարավոր (պրակտիկայում հաջող կիրառություն գտած) լուծումները և մոտեցումները:
- Բուհերին տրամադրել ուղեցույցներ՝ կրեդիտային համակարգով ուսուցման իրենց սեփական կարգերը մշակելու համար, ենելով բուհում կրեդիտային համակարգի հիմնական գործառույթների կիրարկման ամբողջականությունից:

## **1. Ներածություն**

1. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգը ներդրվում է 2007/2008 ուստարվանից, կրթական կրեդիտների՝ որպես ուսումնական ծրագրերի պարտադիր տարր ներմուծմամբ և ուսանողների ակադեմիական տեղեկագրերում դրանց պարտադիր նշումով:
2. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ընդլայնված օգտագործումը իր բոլոր գործառույթներով պարտադիր է սկսած 2010/2011 ուստարվանից:
3. Կրեդիտների փոխանցման և կուտակման հայկական համակարգը որպես հիմք ընդունում է համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգը, որի հիմնական կանոնները գործում են նաև հայկական կրեդիտային համակարգում, որպես գործառույթների և ընթացակարգերի իրականացման միասնական հենք՝ ուղեցույցներ տրամադրելով այն կիրարկող բոլոր բուհերին:
4. Ազգային մակարդակում միասնական իրականացում ապահովելու նպատակով ԿԳՆ-ն պարբերաբար նորացնում է ազգային կրեդիտային համակարգը՝ ներմուծելով նոր սահմանումներ, նորմատիվներ, ուղեցույցներ և գործիքամիջոցներ, որոնք չեն սահմանվում բուհերի կողմից: Այդ համատեքստում յուրաքանչյուր բուհ ինքնուրույն է իր կրթական ծրագրերում կրեդիտային համակարգի ներմուծման և դրա իրականացման հարցերում:
5. Սույն օրինակելի կարգի հիման վրա բուհերի կողմից ստեղծված կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման կարգերը հաստատվում են բուհի գիտական խորհրդի կողմից:

## **2. Կրեղիտային համակարգի հիմնական դրույթները**

1. Հետևյալ դրույթները վերաբերում են համաեվրոպական ECTS կրեղիտային համակարգին, ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և չեն կարող փոփոխվել բուհերի կողմից:
2. Կարողությունը գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ՝ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (միանման՝ ուսման ցանկացած բնագավառի համար):
3. Կրթական արդյունքը դրույթ է այն մասին, թե ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանշով, որը թույլ է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական արդյունքը գնահատման չափանիշի հետ միասին սահմանում են կրեղիտի շնորհման պահանջները:
4. Կրթական մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կարող է կրեղիտ տրվել: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված արդյունքների պարտադիր գնահատմամբ:
5. Կրթական մոդուլին ամրագրված կրեղիտները շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե մաս-մաս:
6. Կրեղիտը ուսանողի ստացած կրթական արդյունքների չափման միջոց է, որը տրվում է ուսանողին տվյալ կրթական մոդուլով նախանշված լրիվ ուսումնական բեռնվածության

կատարումից և կրթական արդյունքների առնվազն “բավարար” գնահատումից հետո:

7. ECTS կրեղիտը առանձին դասընթացով, կրթական որևէ մոդուլով կամ ուսումնական ծրագրով նախանշված կրթական արդյունքների հասնելու համար ուսանողից պահանջվող ուսումնական բեռնվածության չափման ժամաքանակով արտահայտված պայմանական միավոր է:
8. ECTS կրեղիտով սահմանվող ուսումնական ծանրաբերոնավճությունը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական գործողությունները, այդ թվում մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն:
9. Կրեղիտը չափում է միայն ուսումնական ծանրաբերոնավճությունը և չի ներառում կրթական ծրագրի այս կամ այն բաղադրիչի յուրացման որակը, դրա մակարդակը, բարդության աստիճանը կամ բովանդակությունը:
10. Կրեղիտը տրվում է ուսանողին միայն կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքների գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեղիտների լրիվ քանակը քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին:
11. ECTS կրեղիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում

է ուսանողի ուսումնական գործունեության (ուսումնառության) ծավալը:

12. Կրեդիտը չի փոխարինում գնահատականների օգնությամբ ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած գնահատականներով

13. Կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև չի գործում փոխադարձ ներգործության որևէ կապ:

14. Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգ է, որում համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է՝ կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի կուտակումից հետո:

15. Կրեդիտների կուտակման համակարգում կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար պետք է ստանալ կրեդիտների սահմանված քանակը՝ համաձայն ուսումնական ծրագրի պահանջների: Կրեդիտները շնորհվում և կուտակվում են միայն այն դեպքում, եթե պահանջվող կրթական արդյունքների հաջող ձեռքբերումը հաստատված է գնահատմամբ:

16. Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, համաձայն որի՝ մեկ ուսումնական տարում ուսանողի լրիվ ուսումնական ծանրաբերունավծությունը չափվում է 60 ակադեմիական կրեդիտով: Այն նախատեսված է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ECTS) ուսանողների

ձեռքբերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ դրանց տեղափոխումը դյուրացնելու համար:

17. Ուսուցման գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելիս սահմանվում են տվյալ կրթական ծրագրով նախատեսված որակավորման շնորհման համար անհրաժեշտ կրեդիտների քանակը, այդ կրեդիտները ձևավորող դասընթացների և կրթական մոդուլների բովանդակային կազմը՝ ծրագրի պարտադիր և ընտրովի առարկայացանկի տեսքով, դասընթացներին հատկացված կրեդիտները և ուսուցման ցիկլի նվազագույն տևողությունը: Համաձայն բուհի կողմից սահմանված կարգի և կրթական ծրագրի պահանջների՝ ուսանողներն իրենք են որոշում՝ երբ, ինչ ժամկետներում և ինչ բովանդակությամբ կուտակել որակավորման համար անհրաժեշտ կրեդիտների նվազագույն քանակը, որից հետո կարող են հայցել համապատասխան որակավորում:

18. Կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի բոլոր կառուցամասերին և դրանց բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին և ուսումնական այլ գործողություններին, որոնք ենթակա են առանձին գնահատման: Ուսումնական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների խնդիրները, նախապայմանները և համառոտագրերը, հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման եղանակները պետք է նախապես հրապարակված լինեն (տպագրված կամ տեղադրված բուհի կայքում):

19. Հավատարմագրված բուհերում և կրթական ծրագրերում ստացված կրեդիտները սկզբունքորեն ճանաչելի և փոխանցելի են բուհերի և կրթական ծրագրերի միջև, եթե դրանց բովանդակությունը նախանշված է, և փաստացի կրթական արդյունքները համապատասխանում են տվյալ ուսումնական

ծրագրի պահանջներին: Եթե կրեդիտների փոխանցման գործընթացում ներգրավված բուհերը այդ մասին կնքել են ECTS-ի պահանջներին համապատասխան եռակողմ (ուսանող, փոխանցող և ընդունող բուհեր) կրթական համաձայնագիր, ապա այն ունի իրավական ուժ:

### **3. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները**

1. Ուսուցման կրեդիտային համակարգին անցնող բուհերը պետք է իրականացնեն համապատասխան ծրագրային և կազմակերպական վերափոխումներ, որոնց ծավալները պայմանավորված են տվյալ բուհում կրեդիտային համակարգի հիմնական գործառույթների կիրարկման ամբողջականությունից:
2. Այդ գործառույթները երկուսն են՝
  - Ա. կրեդիտների փոխանցում (կրթական արդյունքի չափում/արժևորում և փոխանցում),
  - Բ. կրեդիտների կուտակում (դասախոսի, կրթական մոդուլների և դրանց յուրացման ժամկետների ընտրություն, կրթական արդյունքի կուտակում): Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք ատրիբուտներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով՝
3. Կրեդիտների փոխանցման գործառույթի (Ա) հիմնական տարրերն են՝
4. Մոդուլացված ուսումնական ծրագրերը, որոնց բոլոր բաղադրամասերի կրթական մոդուլների (դասընթացներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալներն արտահայտված են ուսանողի լրիվ ուսումնական ծանրաբերունավճությունն ըստանային,

արտալսարանային և խնքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS համատեղելի կրեդիտային արժեքներով:

5. Կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ձանաշման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի կամ բուհի պահանջներին համապատասխան:
6. Կրեդիտների կուտակման գործառույթի (Բ) հիմնական տարրերն են՝
  - a. Ուսումնական ծրագրի կրթական մոդուլների ցանկը բաղկացած է ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի մասերից: Կրթական մոդուլների յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դրանց անհրաժեշտ նախապայմանների առկայությամբ:
  - b. Ենթադրում (նախատեսում) է ուսանողների կողմից կրթական մոդուլների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման համապատասխան ընթացակարգերի, ինչպես նաև ուսանողների անհատական ուսումնական ծրագրերի կիրարկում:
7. Միևնույն դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի կազմակերպման դեպքում դրանցում ընդգրկվելու ուսանողի ընտրության հնարավորություն՝ ելնելով դասախոսի և (կամ) դասընթացի կայացման ժամանակացույցի նախապատվությունից:
8. Համապատասխան օրենսդրական դաշտի առկայության դեպքում միևնույն կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների տարրերակված ուսումնական ծանրաբերունավծությունների և ուսումնառության ժամկետների հնարավորություն:

9. Կրեղիտների փոխանցման գործառույթի ներդրումը բուհց պահանջում է միայն ծրագրային վերափոխումներ, իսկ կրեղիտների կուտակման գործառույթի ներդրումը՝ նաև ուսման կազմակերպման գործընթացի համապատասխան վերակառուցում պահանջուղ ընթացակարգերի ապահովման նպատակով (ուսումնառության անհատական ծրագրերի կիրարկում, ուսանողների գրանցում դասընթացներին, նրանց ակադեմիական տվյալների գրանցման կառուցի գործունեություն և այլն):

10. 2007/08 ուս.տ-ից կրեղիտային համակարգը ՀՀ բուհերի բակալավրի կրթական ծրագրերում ներդրվում է միայն փոխանցման գործառույթի մասով (առանց 3.2 կետի), իսկ մագիստրոսի ծրագրերում՝ միայն փոխանցման և (կամ) կուտակման գործառույթներով (առանց 4.3 կետի):

#### 4. Կրեղիտային համակարգի հիմնական նորմերը ՀՀ բուհական համակարգում

##### 4.1. Տարեկան աշխատածավալը և ուսումնական ծանրաբեռնավճությունը

1. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում բոլոր մակարդակի կրթական ծրագրերում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական քերնվածքությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեղիտի:

2. 1 ECTS կրեղիտը սահմանվում է որպես ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտավարանային և ինքնուրույն) քերնվածությամբ ուսումնական աշխատանք՝ ուսումնական ծրագրի դասընթացով կամ մոդուլով նախանշված կրթական արդյունքներին հասնելու համար: 1 կրթական կրեղիտի ժամային համարժեքը 30 ժամ է:

3. Ուսումնական տարվա տևողությունը սահմանվում է 40 շաբաթ, որից առնվազն 32-ը տրամադրվում է ուսումնական

պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:

4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:

5. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային ծանրաբերոնավծությունը կազմում է 23-30 ժամ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 15-22 ժամ:

6. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա միջինը 30 կրեդիտ ուսումնական ծանրաբերոնավծություն (10% թույլատրելի շեղումով): Ուսանողի տարեկան ուսումնական ծանրաբերոնավծությունը կազմում է 60 կրեդիտ:

7. Բացարիկ դեպքերում, ուսման բարձր առաջարիմություն ցուցաբերած ուսանողները բոլոր դրական բաղկացուցիչներին (դասընթացներ, կրթական մոդուլներ, պրակտիկաներ, կուրսային և ավարտական աշխատանքներ և այլն):

#### 4.2. Կրեդիտների հատկացումը

1. Կրեդիտներ հատկացվում են ուսումնական ծրագրի ինքնուրույն գնահատվող բոլոր կրթական բաղկացուցիչներին (դասընթացներ, կրթական մոդուլներ, պրակտիկաներ, կուրսային և ավարտական աշխատանքներ և այլն):

2. Կրեդիտների հատկացման հաշվարկի հիմքում դրվում է լսարանային (կոնտակտային) ժամերի քանակը՝ տարբերակված ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբարատոր պարապմունք և այլն), դասավանդման մեթոդների և քննության կազմակերպման ձևերի:

3. Դասընթացի մշակման և իրականացման համար պատասխանատու դասախոսը պարտավոր է պլանավորել ուսանողի ուսումնական գործողություններն այնպես, որ դրանց իրականացման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանեն դասընթացին հատկացված կրեդիտների

ժամային համարժեքներին՝ դասավանդման պատշաճ որակի ապահովումով:

4. Կրթական մողուլին հատկացվող կրեդիտները պետք է ունենան ամբողջական արժեքներ՝ ուսումնական ծրագրի մանրատվածության վտանգից խուսափելու և կրեդիտների կուտակման ու տեղափոխման գործառույթները դյուրացնելու նպատակով:

5. Կրեդիտային համակարգի կիրարկման դեպքում կիսամյակի ընթացքում ուսանողի ստացած կրթական արդյունքները կրկին չեն գնահատվում ուսումնական ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական (պետական) քննությամբ (կամ այդ քննության անցկացման դեպքում ուսանողին լրացնեց կրեդիտներ չեն տրվում):

6. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (նախագիծ, ատենախոսություն և այլն) կատարումով:

#### 4.3. Կիսամյակային համակարգը

1. Յուրաքանչյուր դասընթացի կամ կրթական մողուլի ուսուցման ստանդարտ տևողությունը 1 կիսամյակ է: Մեծածավալ դասընթացները բաժանվում են առանձին մոդուլների:

2. Եթե ուսումնական գործընթացով նախատեսված է դասընթացներին ուսանողների գրանցման գործառույթ, ապա բուհը կիսամյակի սկզբից առնվազն 1 շաբաթ առաջ հրապարակում է դասընթացների և քննությունների կայացման համատեղված ժամանակացույցը:

3. Անկախ դասընթացով կամ մողուլով նախանշված կրթական արդյունքների գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (ստուգաք կամ տարբերակված գնահատում), բոլոր տեսակի քննություններն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից

հետո կիսամյակի վերջում կազմակերպվող առանձին քննաշրջաններում:

#### 4.4. Կրթական ծրագրերը

1. Բակալավրի աստիճան շնորհող կրթական ծրագրերի ուսումնական լրիվ աշխատածավալը սահմանվում է 240 կրեդիտ, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 300 կրեդիտ:
2. Մագիստրոսի աստիճան շնորհող կրթական ծրագրերի ուսումնական լրիվ աշխատածավալը սահմանվում է 60-120 կրեդիտ, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 180 կրեդիտ:
3. Կրթական ծրագրում ընդգրկված ցանկացած դասընթաց կամ կրթական մոդուլ ծրագրում ներկայացվում է հատկացված կրեդիտների հետ միասին:
4. Կրեդիտներ հատկացվում են ուսումնական ծրագրի ինքնուրույն գնահատվող բոլոր կրթական բաղկացուցիչներին (դասընթացներ, կրթական մոդուլներ, պրակտիկաներ, կուրսային և ավարտական աշխատանքներ և այլն):
5. Կրեդիտների հատկացման հաշվարկի հիմքում դրվում է լսարանային (կոնտակտային) ժամերի քանակը՝ տարրերակված ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման մեթոդների և քննության կազմակերպման ձևերի:
6. Դասընթացի մշակման և իրականացման համար պատասխանատու դասախոսը պարտավոր է պլանավորել ուսանողի ուսումնական գրքորություններն այնպես, որ դրանց իրականացման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանեն դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքներին՝ դասավանդման պատշաճ որակի ապահովումով:
7. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտները պետք է ունենան ամբողջական արժեքներ՝ ուսումնական ծրագրի մանրատվածության վտանգից խուսափելու և կրեդիտների

կուտակման ու տեղափոխման գործառույթները դյուրացնելու նպատակով:

8. Կրեղիտային համակարգի կիրարկման դեպքում կիսամյակի ընթացքում ուսանողի ստացած կրթական արդյունքները կրկին չեն գնահատվում ուսումնական ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական (պետական) քննությամբ (կամ այդ քննության անցկացման դեպքում ուսանողին լրացուցիչ կրեղիտներ չեն տրվում):

9. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (նախագիծ, ատենախոսություն և այլն) կատարումով:

#### 4.3. Կիսամյակային համակարգը

1. Յուրաքանչյուր դասընթացի կամ կրթական մոդուլի ուսուցման ստանդարտ տևողությունը 1 կիսամյակ է: Մեծածավալ դասընթացները բաժանվում են առանձին մոդուլների:

2. Եթե ուսումնական գործընթացով նախատեսված է դասընթացներին ուսանողների գրանցման գործառույթ, ապա բուհը կիսամյակի սկզբից առնվազն 1 շաբաթ առաջ հրապարակում է դասընթացների և քննությունների կայացման համատեղված ժամանակացույցը:

3. Անկախ դասընթացով կամ մոդուլով նախանշված կրթական արդյունքների գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (սոուզարք կամ տարրերակված գնահատում), բոլոր տեսակի քննություններն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից հետո կիսամյակի վերջում կազմակերպվող առանձին քննաշրջաններում:

#### 4.4. Կրթական ծրագրերը

1. Բակալավրի աստիճան շնորհող կրթական ծրագրերի ուսումնական լրիվ աշխատածավալը սահմանվում է 240 կրեղիտ, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 300 կրեղիտ:

2. Մազիստրոսի աստիճան շնորհող կրթական ծրագրերի ուսումնական լրիվ աշխատածավալը սահմանվում է 60-120 կրեդիտ, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 180 կրեդիտ:

3. Կրթական ծրագրում ընդգրկված ցանկացած դասընթաց կամ կրթական մոդուլ ծրագրում ներկայացվում է հատկացված կրեդիտների հետ միասին:

## **5. Կրեդիտային համակարգի տարրերը և ընթացակարգերը**

### **5.1. Ուսումնական ծրագիրը և ավարտական պահանջները**

1. Մասնագիտության ուսումնական ծրագիրը (պլանը) ներկայացվում է համապատասխան կրթամասերում խմբավորված պարտադիր և ընտրովի (եթե այդպիսիք նախատեսված են) դասընթացների ցանկով։ Կրթամասերի քանակը և անվանումը սահմանում է բուհը։

2. Յուրաքանչյուր դասընթացի համար նշվում է նրա եզակի նույնացման թվանիշը (դասիշ), դասընթացի լրիվ անվանումը, նրան ամրագրված կրեդիտների քանակը, պարապմունքների իրականցման ձևը, կայացման կիսամյակի համարը (ամրագրված ուսումնական ծրագրերում) կամ կիսամյակը (աշնանային կամ գարնանային՝ ձևուն ուսումնական ծրագրի դեպքում), դասընթացի կամ կրթական մոդուլի նախապայմանը (եթե այդպիսին կա) և գնահատման ձևը։

3. Կրթական ծրագրի ավարտական պահանջներում նշվում է համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ կրեդիտների քանակը (ըստ կրթամասերի և ընդամենը) և հանրագումարային ամփոփիչ ՍՈԳ-ը (անհրաժեշտության դեպքում կարող է սահմանվել նաև ՍՈԳ-ի նվազագույն շեմ մասնագիտական կրթամասի համար)։

4. Բուհը, իր հայեցողությամբ, կարող է սահմանել ընդհանուր ավարտական պահանջներ՝ տվյալ կրթական աստիճանի բոլոր մասնագիտությունների համար և մասնագիտական ավարտական պահանջներ՝ առանձին մասնագիտությունների համար։

## 5.2. Դասընթացները և կրթական մոդուլները

1. Մեծածավալ դասընթացները կարող են բաժանվել առանձին մոդուլների: Դասընթացների մոդուլացումը կատարվում է հնարավորինս նվազագույն կիսամյակների ընթացքում դրանք ավարտելու սկզբունքով:

2. Առանձին դասընթացները և մոդուլներն իրենց բնույթով բաժանվում են 3 հիմնական խմբերի՝

ա) պարտադիր ամրագրված դասընթացներ, որոնք յուրացվում են պարտադիր և խիստ որոշակի հերթականությամբ,

բ) պարտադիր չամրագրված դասընթացներ, որոնց յուրացման հերթականությունը ընտրում է ուսանողը՝ պահպանելով դասընթացի նախապայմանները,

գ) ընտրովի դասընթացներ, որոնց առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման հաջորդականությունը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

## 5.3. Դասընթացների տեղեկագիրը

1. Բուհը հրապարակում է դասընթացների տեղեկագիրը (տպագրված և/կամ բուհի կայքում տեղադրված էլեկտրոնային տարրերակի տեսքով), որը թարմացվում է, առնվազն, յուրաքանչյուր ուստարում:

2. Դասընթացների տեղեկագիրքը պետք է մատչելի դարձնի բուհում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, որը պետք է պարունակի.

ա) ընդհանուր տեղեկատվություն բուհի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը և ընդունելության պայմանները, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, հիմնական ներբուհական կանոնները (հատկապես կրեդիտների փոխանցման և պաշտոնական ձանաշման վերաբերյալ) և այլն:

բ) տեղեկատվություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, նպատակները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի կառուցվածքը կրեղիտներով, քննական և գնահատման կանոնները, ավարտական ատեսավորման ձևը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

- առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը (որը պետք է պարունակի տեղեկատվություն դասընթացի տեսակի և մակարդակի վերաբերյալ), ուսուցման տարին և (կամ) կայացման կիսամյակը, դասընթացին ամրագրված կրեղիտների քանակը (ներառյալ շաբաթական լսարաններին ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական արդյունքներով և կարողություններով, անհրաժեշտ նախապայմանները, համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը), երաշխավորվող գրականությունը, ուսուցման և գնահատման մեթոդները, դասա-վանդման լեզուն:

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար՝

- անհրաժեշտ տեղեկատվություն օտարերկրյա ուսանողների համար (ուսումնառության և ապրելու պայմանները, միջազգային ծրագրերը, լեզվի դասընթացները և այլն),

- նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի գեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսումնական ենթակառուցվածքները և այլն:

5.4. Ուսումնական գործընթացի և դասընթացների ժամանակացույցերը

1. Բուհը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում հրապարակում է (տպագրված և/կամ բուհի կայքում տեղադրված էլեկտրոնային տարբերակի տեսքով) տվյալ տարվա ուսումնական օրացույցը (ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը) ըստ կիսամյակների, որտեղ ըստ օրերի նշվում

են ուսուցման սկիզբը և ավարտը, դասընթացներին գրանցման (եթե նախատեսվում է) և դրանց փոփոխությունների կատարման ժամկետները, քննաշրջանները և արձակուրդները:

2. Բուհը յուրաքանչյուր կիսամյակի համար վաղօրոք կազմում և հրապարակում է պարապմունքների դասացուցակը, իսկ դասընթացներին գրանցման գործառույթի կիրարկման դեպքում՝ առաջադրվող բոլոր դասընթացների և քննությունների ժամանակացույցերը, որտեղ բերվում է տեղեկատվություն՝ դասընթացների կայացման վայրի, օրվա և ժամի, դասախոսի, ընդգրկված ուսանողների թույլատրելի քանակների, քննությունների օրվա և այլնի վերաբերյալ:

5.5. Ուսումնառության անհատական ծրագիրը և դասընթացներին գրանցման կազմակերպումը

1. Կրեդիտների կուտակման գործառույթը կիրարկման դեպքում բուհը մշակում է դրա իրականացման հետ կապված մի շարք ընթացակարգեր, մասնավորպես՝ ուսումնառության անհատական ծրագրերի կազմումը և դասընթացներին ուսանողների գրանցումը:

2. Ուսումնառության անհատական ծրագիրը կազմելիս ուսանողի համար հիմնական ելակետային փաստաթուղթ (ուղեցույց) է հանդիսանում դասընթացների տեղեկագիրը:

3. Հիմք ընդունելով դասընթացների տեղեկագրքում կրթական ծրագրի ավարտական պահանջները, առաջարկվող դասընթացների ցանկը և առանձին դասընթացների վերաբերյալ բերված տեղեկատվությունը, ուսումնառության սկզբում ուսանողն իր ուսումնական խորհրդատուի օգնությամբ կազմում է ուսումնառության իր անհատական ծրագիրը, տալիս այն հաստատման համապատասխան ուսումնական ստորաբաժանման ղեկավարին և հանձնում օրինակներից մեկը ակադեմիական գրանցումներն իրականացնող համապատասխան կառույցին :

4. Ուսումնառության անհատական ծրագրի ձևաթերթը մշակում է բուհը: Անհատական ծրագրում բերվում են պարտադիր և ընտրովի դասընթացների ընտրացանկը ըստ ուսման տարիների և կիսամյակների, ինչպես նաև դրանց ամրագրված կրեդիտները:
5. Անհատական ծրագրում նշված դասընթացներում ընդգրկվելու համար ուսանողը պարտավոր է սահմանված ժամկետներում գրանցվել:
6. Դասընթացներին գրանցման գործընթացը կարող է սկսվել նախորդ կիսամյակում և տևել է մինչև տվյալ կիսամյակի պարապմունքների սկիզբը: Բոլոր ուսանողները պետք է գրանցված լինեն մինչև տվյալ կիսամյակի դասերի սկիզբը:
7. Ուսանողների ընդգրկումը դասընթացներում իրականացվում է ըստ գրանցման հերթականության, եթե այլ բան նախատեսված չէ դասընթացի նախապայմանում:
8. Սահմանված ժամկետից 2 շաբաթ հետո դասընթացներին մասնակցելու բոլոր տեսակի գրանցումները դադարեցվում են:
9. Բուհը կարող է հանել ցանկացած դասընթացի առաջարրումը տվյալ կիսամյակում, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ: Նման դեպքերում այդ դասընթացին գրանցված ուսանողները սահմանված ժամկետներում կատարում են համապատասխան փոփոխություններ իրենց անհատական ուսումնական ծրագրերում՝ ընտրելով նոր դասընթաց կամ դրա ընտրությունը տեղափոխում հաջորդ տարի:
10. Անհրաժեշտության դեպքում, սահմանված ժամկետներում ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրում՝ նախապես համաձայնեցնելով դրանք իր ուսումնական խորհրդատուի և համապատասխան ստորաբաժանման դեկավարության հետ (ստորագրված ձևաթերթի տեսքով), այնուհետև գրանցվում նոր դասընթացներին:
11. Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների դեպքում (դասընթացների բացբողոք և կամ

ավելացում) ուսանողը լրացնում է փոփոխությունների համապատասխան ձևաթերթը:

12. Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթերթը մշակում է բուհը: Ձևաթերթում նշվում են բաց թողնված և/կամ ավելացված դասընթացների անվանումները, դրանց համապատասխանող կրեդիտների քանակը, կիսավյակը և ուստարին:

13. Անհատական ծրագրի փոփոխության (դասընթացից ազատումը, դասընթացի բացթողումը կամ դասընթացի ավելացումը ուսանողի ընտրացանկում) ընթացակարգը հետևյալն է՝

13.1. դասընթացից ազատվելը.

ուսանողը կարող է չեղյալ համարել ցանկացած նախորդ գրանցում տվյալ դասընթացին՝ մինչև տվյալ կիսամյակի պարապմունքների սկիզբը,

13.2. դասընթացի բացթողումը.

ա) ուսանողը կարող է բաց թողնել դասընթացը ուսումնական խորհրդատուի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը,

բ) տվյալ կիսամյակի 3-ից մինչև 8-րդ շաբաթվա վերջը բացթողումը ձևակերպելու համար ուսանողը պարտավոր է ստանալ նաև դասընթացը վարող դասախոսի և համապատասխան ուսումնական ստորաբաժանման դեկավարության համաձայնությունը,

13.3. դասընթացի ավելացումը.

ուսանողն իր ընտրացանկում դասընթացը կարող է ավելացնել ուսումնական խորհրդատուի և դասախոսի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 2-րդ շաբաթվա վերջը:

14. Ուսանողը կազմում է տվյալ կիսամյակի պարապմունքների իր անհատական դասացուցակը ելնելով

ուսումնառության իր անհատական ծրագրից և դասընթացների հրապարակված ժամանակացույցից:

15. Սահմանված ժամկետում ուսումնառության անհատական ծրագիր չներկայացնելու դեպքում բուհն ուսանողի ուսումնառությունը կազմակերպում է տվյալ մասնագիտության համար կազմված տիպային ուսումնական պլանով:

16. Բուհում կրեդիտների կուտակման գործառույթի բացակայության դեպքում գործում են ստանդարտ ուսումնական պլաններ՝ դասընթացների և կրթական մոդուլների յուրացման ամրագրված հաջորդականությամբ:

#### 5.6. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա ուսանողների:

2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝

ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական ծանրաբերունավորություն (10% թույլատրելի շեղումով);

բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները;

գ) ապահովել է տվյալ կրթական աստիճանի (ծրագրի) համար բուհի սահմանած կիսամյակային ՄՊԳ-ի նվազագույն շեմը:

3. Փորձաշրջանի կարգավիճակը ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղել թերացումներն ու բացթողումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան: Փորձաշրջանի տևողությունը սահմանում է բուհը:

4. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը ենթակա է հեռացման՝ սահմանված ժամկետում ուսման առաջադիմությունը վերը նշված պահանջներին համապատասխան չբարձրացնելու դեպքում:

5. Միևնույն կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների ակադեմիական առաջադիմության համեմատման համար օգտագործվում է նրանց վարկանիշային միավոր:

#### 5.7. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

1. Դրական գնահատված դասընթացի վերահանձնում չի թույլատրվում:

2. Չհանձնած դասընթացի վերահանձնման կարգը սահմանում է բուհը:

3. Տվյալ կրթական ծրագրի համար բուհի կողմից սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմն ապահովելու նպատակով ուսանողը համապատասխան ուսումնական ստորաբաժանման թույլտվությամբ կարող է կրկնել դասընթացը, սակայն տվյալ դասընթացի համար սահմանված չափարանակից ավելի կրեղիտներ ուսանողին չեն գրանցվում, իսկ ՄՈԳ-ում հաշվի է առնվում այդ դասընթացի վերջին գնահատման արդյունքը:

4. Հաջորդությամբ հանձնած դասընթացների կրեղիտները կուտակվում են (գրանցվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում) և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ուսանողի ցուցարերած առաջադիմությունից կամ ուսման ընդհատման հանգամանքից:

5. Ուսումնառության ընթացքում առանձին կրթական մողումներից վաստակած կրեղիտների և ստացած գնահատականների ճանաչման և կուտակման արդյունքում վերանում է ուսումնական տարին ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

#### 5.8. Կրեղիտների փոխանցումը

1. Կրեղիտները փոխանցելի են տարբեր ուսումնական ծրագրերի միջև, եթե դրանք համապատասխանում են այդ ծրագրերի պահանջներին: Կրեղիտների փոխանցումը կատարվում է համապատասխան համաձայնագրի հիման վրա:

2. Կրեղիտները փոխանցելի են մեկ բուհից մյուսը առանձին դասընթացների, դասընթացների խմբերի (մողումների) կամ

ուսումնառության որոշակի ժամանակահատվածների ձևով։ Փոխանցումը կարող է կատարվել ուսանողի հայտի հիման վրա՝ շահագրգիռ բուհերի նախնական համաձայնությամբ։

3. Որևէ ուսումնական ծրագրից ստացված կրեդիտները կարող են փոխանցվել մեկ այլ ուսումնական ծրագրի՝

ա) եթե դրանց բովանդակությունները միանման են,

բ) եթե կան բովանդակային տարբերություններ, սակայն աննշան են,

գ) եթե առկա են բովանդակային տարբերություններ, սակայն կրթական վերջնական արդյունքը համարժեք է։

4. Այլ բուհերում ուսումնառության որոշակի ժամանակաշրջանի անցկացման դեպքում ուսումնառության ծրագրիրը պետք է դառնա եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, առաքող և ընդունող բուհերի միջև։

#### 5.9. Ավարտական առողջիւ և աստիճանաշնորհում

1. Կրեդիտների կուտակման գործառույթի կիրարկման դեպքում շրջանավարտների աստիճանաշնորհումը կատարվում է ծրագրի ավարտական պահանջների կատարման առողջիւ իրականացումից հետո՝ ակադեմիական գրանցումներն իրականացնող կառույցի, համապատասխան ուսումնական ստորաբաժանման և ուսանողի մասնակցությամբ։

2. Ավարտական առողջիւ ընթացքում ստուգվում են ուսանողի ակադեմիական տվյալների՝ կուտակած կրեդիտների քանակի և բովանդակության, հանրագումարային ՄՈԳ-ի, ինչպես նաև ավարտական ատեստավորման համապատասխանությունը մասնագիտության ավարտական պահանջներին։

#### 6. Կրեդիտային համակարգի ինստիտուտները

6.1. Կրեդիտների փոխանցման գործառույթի համակարգումը

1. Բուհից բուհ և ուսումնական ծրագրից ծրագիր կրեղիտների փոխանցման գործառույթի, ինչպես նաև այլ բուհերում (այդ թվում նաև օտարերկրյա) ուսանողների ուսումնառության որոշակի ժամանակահատվածի անցկացման կազմակերպման և համակարգման համար բուհերը նշանակում են համարուհական և (կամ) ֆակուլտետային համակարգողներ:

## 6.2. Ուսումնական խորհրդատուների ինստիտուտը

1. Կրեղիտների կուտակման գործառույթի կիրարկման դեպքում ուսանողների անհատական ուսումնական ծրագրերը կազմելիս և ուսման ընթացքում նրանց աջակցելու նպատակով բուհերի մասնագիտացնող ստորաբաժանումները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկվում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին բաջատեղյակ մասնագետները:

2. Յուրաքանչյուր մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի խորհրդատուների թիվը սահմանում է բուհը՝ ենելով դրանցում ընդգրկված ուսանողների թից և ուսուրասային հնարավորություններից:

3. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների շրջանակներում և հսկում է իրեն կցված ուսանողների ուսման ընթացքը առաջինից մինչև ավարտական կուրս:

4. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, առավել արդյունավետ և նախընտրելի անհատական ուսումնական ծրագրեր կազմելու նպատակով նրանց համար կիսամյակի ընթացքում պարբերաբար իրականացնում է խմբային և անհատական

խորհրդատվություններ, աջակցի անհատական ծրագրերում փոփոխություններ կատարելու և այլ հարցերում:

### **6.3. Ակադեմիական գրանցումների գրասենյակը**

1. Կրեղիտների կուտակման գործառույթի ընթացակարգերը ապահովելու նպատակով բուհերը կարող են ստեղծել համարուհական կամ ֆակուլտետային ակադեմիական գրանցումների գրասենյակներ: Ակադեմիական գրանցումների գրասենյակի հիմնական գործառույթներն են.
2. կազմել և հրապարակել (տպագիր և/կամ էլեկտրոնային տարբերակով) բուհի դասընթացների տեղեկագիրքը յուրաքանչյուր ուս.տարվա համար,
3. կազմել և հրապարակել (տպագիր և/կամ էլեկտրոնային տարբերակով) տեղեկագրքում բերված դասընթացների և դրանց քննությունների կայացման ժամանակացույցերը յուրաքանչյուր կիսամյակի համար,
4. ապահովել դասընթացներին ուսանողների գրանցման և ընդգրկման գործընթացը (այդ թվում ինտերնետով),
5. ապահովել դասընթացների և դրանց առանձին բաղադրամասերի ուսումնական հոսքերի ձևավորումը և պարապմունքների անցկացումը,
6. գրանցել և հսկել ուսանողների դասահաճախումները,
7. ապահովել քննական ամփոփագրերի պատրաստումը, տրամադրումը և քննությունների արդյունքների մուտքագրումն ուսանողների ակադեմիական տվյալների միասնական (էլեկտրոնային) բազայում,

8. հաշվարկել և վերահսկել ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշները (ՄՈԳ և կուտակած կրեդիտների քանակ), պատրաստել և պարբերաբար թարմացնել ուսանողների ակադեմիական տեղեկագրերը,

9. համապատասխան ուսումնական ստորաբաժանումներին (ֆակուլտետներին) տրամադրել տեղեկատվություն՝ ուսանողների առաջադիմության և դասահաճախումների վերաբերյալ,

10. ուսումնական ստորաբաժանումների հետ համատեղ իրականացնել ավարտական պահանջների կատարման առողջիւն,

11. ապահովել գրասենյակի կայքի շահագործումը, անհրաժեշտ ուսումնական (դասընթացների և քննությունների ժամանակացույցեր) և մեթոդական (դասընթացների տեղեկագիրը) տեղեկատվության տեղադրումը և դրանց պարբերաբար թարմացումը,

12. իրականացնել օժանդակ և հարակից այլ գործառույթներ:

#### 6.4. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և ուսումնառության իր անհատական ծրագիրը կազմելիս խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել ուսումնառության իր անհատական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

## 2. Ուսանողը՝

- պետք է հաշվի առնի, որ ակադեմիական գրանցումների գրասենյակը չի ստուգում և, հետևաբար, ոչ մի պատասխանատվություն չի կրում իր կողմից ընտրված դասընթացների՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխանության կամ դրանց կայացման ժամերի հակադրման համար,

- կրում է անձնական պատասխանատվություն՝ ուսումնառության իր անհատական ծրագրի և պարապմունքների դասացուցակի ճշտության և ամբողջականության ապահովման, դրանց ստուգման և ցանկացած սխալի կամ բացթողման անհապաղ ճշտման համար:

## 3. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար բուհի կողմից առաջադրվող պարտադիր և ոչ պարտադիր դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միևնույն դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում կատարել ընտրություն՝ ելնելով դասախոսի և (կամ) դասընթացի կայացման ժամանակացույցի նախա-պատվությունից,

- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ այլ բուհում՝ այդ բուհի կանոններով սահմանված կարգով,

- միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության

որոշակի ժամանակահատված (կիսամյակ, ուստարի) ուսումնառել այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել ուսումնառությունը բուհում,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ կազմված ուսումնառության լրիվ կամ որևէ ժամանակահատվածի համար:

## 7. Այլ դրույթներ

### 7.1. Բուհի տարեկան ուսումնական քեռնվածքի հաշվարկը

1. Ուսումնական ծրագրում և դասընթացների տեղեկագրքում դասընթացին հատկացված կրեդիտների (որոնք բնութագրում են դասընթացի լրիվ աշխատատարությունը) հետ մեկտեղ նշվում է նաև շաբաթական լսարանային ժամա-քանակն ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություններ, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ և այլն):
2. Կրեդիտների կուտակման գործառույթի կիրարկման դեպքում ուսանողների անհատական ուսումնական ծրագրերի վերլուծության և առանձին դասընթացներին ուսանողների գրանցման տարիների ընթացքում բուհում կուտակած վիճակագրական տվյալների հիման վրա բուհը կազմում է հաջորդ ուս. տարվա ուսումնական ծանրաբերությունների ժամանակացույցերն ըստ կիսամյակների:

## Հավելված 2

### Տերմինների բացատրական բառարան

Հատուկ Հայաստանի համար.

Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումներն ու դրույթները հաստատված են Հայաստանի կրթության և գիտության նախարարի կողմից, ընդունված բարձրագույն կրթության համակարգում և չեն կարող ձևափոխվել բուհերի կողմից:

**Կարողությունը** գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (անկախ բնագավառից):

**Կրթական արդյունքն** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

**Կրթական (ուսումնական) մոդուլն** ուսումնական ծրագրի ամենափոքր և համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը մեկ կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքի պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ և ոչ թե առանձին մասերով:

**ECTS կրեդիտ Դասընթացը** (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից

պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

**Կրթական (ուսումնական) բեռնվածքը** ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկային, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և հանձնելը, անհատական հետազոտական աշխատանքները և այլն:

**Կրեդիտը** չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատում): Կրեդիտն ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին: Կրեդիտը չի փոխարինում թվանշաններով ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստական կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով: Կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա:

**Կրեդիտային համակարգը** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ

համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

**Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը** միասնական համաեվրոպական կրեդիտների համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում զնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժեքում, պաշտոնական ձանաշման և բուհից բուհ տեղափոխումը դյուրիհնացնելու համար:

**Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգի հատկանիշներն են.**

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ զնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկային, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագորդ բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և զնահատման մեջողները պետք է նախապես հրապարակվեն (տպագրվեն կամ տեղադրվեն բուհի կայքում)
- հավատարմագրված բուհերում և/կամ կրթական ծրագրերում ստացված կրեդիտները սկզբունքորեն փոխանցելի են բուհերի և կրթական ծրագրերի միջև, եթե որանց կրթական արդյունքները համարժեք են,

- Եթե կրեդիտների փոխանցման գործընթացում ներգրավված բուհերը այդ մասին կնքել են ECTS-ի պահանջներին համապատասխանով եռակողմ (ուսանող, առաքող և ընդունող բուհեր) կրթական համաձայնագիր, ապա այն ունի իրավական ուժ:

